Քրեադատավարական գործող օրենսդրությունում բավական հստակ ձևակերպված է, թե ինչ է քրեական գործի հարուցումը: Դրան է նվիրված ԶԶ քր. դատ. օր.-ի 25-րդ գլուխը, որում հստակ սահմանված են քրեական գործ հարուցելու առիթները, հիմքերն ու դատավարական կարգը: Քրեական դատավարության իրավունքի տեսությունում ևս քրեական գործ հարուցելու փուլին զգալի տեղ է հատկացվել¹: Ընդ որում, նշյալ փուլի բնորոշումն ինքնին անվիճելի է. «Քրեական գործի հարուցումը քրեական դատավարության սկզբնական փուլն է, որը բնութագրվում է խնդիրների, իրավահարաբերությունների մասնակիցների շրջանակի ինքնուրույնությամբ կամ իրավահարաբերությունների առարկայի, դատավարական միջոցների, ժամկետների, որոշումների բովանդակությամբ»²:

Քրեական գործի հարուցման տակ ընդունված է հասկանալ՝ 1) քրեական դատավարության ինքնուրույն փուլ, 2) քրեադատավարական ակտ՝ որոշում, 3) քրեական դատավարության ինստիտուտ: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր ինքնուրույն իմաստը: Այսպես, Մ. Ա. Չելցովը քրեական գործի հարուցումն անվանում է ոչ թե փուլ, այլ քրեական դատավարության սկզբնական մաս: Քրեական դատավարության այդ սկզբնական պահի նշանակությունը շատ մեծ է: Իշխանության մարմինը միայն քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո է իրավունք ստանում

կատարելու բոլոր այն դատավարական գործողությունները, որոնցով նրան լիազորում է քրեական դատավարության օրենսգիրքը³: Ներկայումս ոչ ոք չի կասկածում այդ երկու հասկացությունների տարբերությանը: Այսպես, Ն. Ա. Գրոմովը գտնում է, որ «Քրեական գործի հարուցման փուլը քրեական դատավարության առաջին, ինքնուրույն փուլն է, որի էությունը պետության իրավասու մարմնի (հետաքննության, նախաքննության, դատախազության, դատարանի) կողմից քրեական գործով վարույթի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է և քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու մասին որոշում կայացնելը»⁴: Ինչպես երևում է այս սահմանումից, հեղինակը բավականին հստակորեն տարբերակում է վերոնշյալ հասկացությունները:

Առանձնահատուկ նշանակություն ունի քրեական գործ հարուցելու մասին որոշումը, քանի որ այն իրավաբանական փաստ է, որը նշանավորում է կոնկրետ քրեական գործի քննության սկիզբը և գործի ըստ էության լուծումը: Այդ ակտը հիմք է մի շարք իշխանական իրավահարաբերությունների առաջացման համար, որոնցում կողմերից մեկը հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազն է:

Քրեական գործ հարուցելը քրեադատավարական օրենսդրությունում նախատեսվեց միայն պատմության խորհրդային շրջանում: Ընդ որում, դեռ այդ ժամանակշրջանում այն աչքի էր ընկնում այն նույն հատկանիշներով, ինչ այժմ: Դրան բնորոշ էին իր առջև դրված խնդիրների հատուկ շրջանակը, կայացված որոշումները, ժամկետները և այլն: Չնայած այն բանին, որ նշյալ փուլը հայտնի է դառնում, այսպես կոչված, պրոլետարիատի դիկտա-

տուրայի շրջանում, այսինքն՝ ավտորիտար վարչակարգի ձևավորման շրջանում, այն հարկ է դիտել որպես որոշակի երաշխիք իրավապահպան մարմինների ու նրա պաշտոնատար անձանց կամայականություններից: Եթե գործնականում այն չէր երաշխավորում անձի իրավունքներն ու ազատությունները, ապա դրա պատճառը ոչ ինքն էր, ոչ էլ դրա ստեղծման գաղափարը, այլ այն, որ այդ ժամանակաշրջանի օրենսդրությունը կամ անտեսվում էր պետական մարմինների կողմից, կամ այլատեսվում էր հոգուտ տիրապետող գաղափարախոսության ու հայացքների:

Դատաիրավական բարեփոխումներից հետո էլ նշյալ փուլը պահպանվել է, ինչը վկայում է, որ այն լիովին համապատասխանում է ժողովրդավարական պետության քրեական դատավարության խնդիրներին: Հաշվի առնելով, որ իրավունքներն ու ազատությունները կենտրոնական տեղ են զբաղեցնում քրեական դատավարության մեջ, և դրանց պաշտպանությունը հռչակվում է որպես նրա խնդիրներից մեկը, ապա ակնհայտ է դառնում, որ, ըստ օրենսդրի մտահղացման, քրեական գործի հարուցման փուլը նպաստավոր պայմաններ է ստեղծում դրան հասնելու համար: Ուստի անառարկելի է, որ «այդ փուլի նշանակությունն այն է, որ այն ապահովում է քրեական գործի հարուցման օրինականությունն ու հիմնավորվածությունը, քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, որոնք չհիմնավորված քրեական գործ հարուցելու դեպքում կարող էին խախտվել, քանի որ քաղաքացիները անհիմն կերպով կներքաշվեին հանցագործության քննության ընթացակարգերի, հնարավոր է նաև՝ դատական վարույթների մեջ»⁶: Տվյալ փուլը կոչված է երաշխավորելու անձի իրավունքներն ու ազատությունները:

Քրեական գործ հարուցելն այլ փուլերի համեմատ աչքի է ընկնում գործողությունների ավելի փոքր ծավալով, որոնք կատարվում են դրա շրջանակներում: Սակայն

այդ գործողություններն առանձնահատուկ են, որով տարբերվում են այլ փուլերում տեղի ունեցող գործողություններից, որոնց իրականացումը նախատեսված է քրեադատավարական օրենսդրությամբ: Նշյալ գործողությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանցից ոչ բոլորն են բավականաչափ հստակորեն նկարագրված գործող օրենսդրության մեջ: Այսպես, ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 180-ի մաս 2-ում ասվում է. «Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործության կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն»: Խոսքը վերաբերում է հանցագործությունների մասին հաղորդումների ստուգմանը: Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը, թվարկելով հաղորդումը ստուգելու գործողությունները, չի հստակեցնում, թե հատկապես որոնք են դրանց խնդիրները: Այդ մասին ՀՀ քր. դատ. օր.-ում ոչ մի տեղ չի խոսվում: Այսինքն՝ ակներև է քրեական գործի հարուցման փուլում իրականացվող գործողությունների օրենսդրական կարգավորման առանձնահատկությունը:

Տվյալ փուլի մյուս ուշագրավ առանձնահատկությունը դրա կարճատևությունն է: Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 180-ի մաս 1-ի. «Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում»: Այդ փուլի նշված առանձնահատկությունը լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ 1966 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունած Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազ-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

գային համաձայնագրի բանաձևում ամրագրված անձի իրավունքին, ըստ որի «յուրաքանչյուր ոք իր նկատմամբ առաջադրված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ, լիակատար հավասարության հիման վրա, նվազագույնը հետևյալ երաշխիքների իրավունք ունի... 3) առանց չարդարացված հապաղման դատվելու» (հոդ. 2): Քրեական գործի հարուցման փուլի կարճ տևողությունը վերոնշյալ իրավունքի իրացման դեպքերից մեկն է:

Որքան էլ տարօրինակ է, բայց հենց անձի իրավունքների ու ազատությունների ապահովման անհրաժեշտությամբ են ներկայունս համառորեն հիմնավորում հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետը երկարաձգելու առաջարկը: Ն. Ի. Գազետդինովը դա հիմնավորում է հետևյալ կերպ. «...Քրեական գործի հարուցման մասին հարցը քննելիս առաջին պլան անհրաժեշտ է մղել հենց անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը և քրեական դատավարության սկզբունքների համակարգի առավել լիարժեք իրացումը, որով, կարծում ենք, հնարավոր կլինի քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնել միայն բավականաչափ հիմքեր ունենալը ստուգելուց և պարզելուց հետո: Քրեական գործի հարուցման մասին հիմնավորված ու օրինական որոշում կայացնելու համար քրեադատավարական օրենքով (ՌԴ քր. դատ. օր., հոդված 144) սահմանված եռօրյա ժամկետը բավարար չէ, և դա հանգեցնում է քրեական գործի անհիմն կերպով հարուցմանը և հետագայում մեղադրական ուղղվածությանն ու քրեական դատավարության սկզբունքների խախտմանը»: Ցավոք, նշյալ մեջբերման հեղինակը հոդվածում ոչ մի տեղ չի հստակեցնում, թե անձի հատկապես որ իրավունքները կարող են խախտվել հանցագործությունների մասին

հաղորդումների քննարկման կարճաժամկետության պատճառով: Նա նաև չի պարզաբանում, թե քրեական դատավարության որ սկզբունքները կարող են խախտվել հիշյալ հաղորդումների քննարկման կարճաժամկետության պատճառով: Միանգամայն ակնհայտ է, որ հեղինակի այս դիրքորոշումն արտացոլում է դատախազների, քննիչների, հետաքննության մարմինների ցանկությունը՝ ավելի տևական ժամանակ ունենալու հանցագործությունների մասին հաղորդումները քննարկելիս: Այդ ցանկությունը հասկանալի է: Հանցագործությունների մասին հաղորդումների մեծ քանակությունը դժվարացնում է դրանց քննարկումը կարճ ժամկետներում: Սակայն հազիվ թե հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետների երկարաձգումով լուծվի այդ խնդիրը: Ուստի լիովին հնարավոր է, որ այդ ժամկետների երկարաձգումը ևս բավարար չլինի, և դրանք երկարաձգելու նոր առաջարկ հնչի հանուն, ասեմք, անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության: Այսինքն՝ միանգամայն ակնհայտ է պարադոքսը. որքան էլ տևական լինի հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետը, միևնույն է, այն չի բավականացնի քրեական գործ հարուցելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու համար:

Ռուսաստանի Դաշնությունում հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետների մասին հարցը փոքր-ինչ այլ կերպ է լուծվում, քան Հայաստանի Հանրապետությունում: Այսպես, համաձայն ՌԴ քր. դատ. օր.-ի հոդված 144-ի մաս 1-ի. «Հետաքննիչը, հետաքննության մարմինը, քննիչը պարտավոր են ընդունել, ստուգել կատարված կամ նախատեսվող ցանկացած հանցագործության մասին հաղորդումը և սույն օրենսգրքով սահմանված իրենց իրավասության ըրջանակներում դրա մասին որոշում կայացնել հիշյալ հաղորդումն ստանալուց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում»: Ինչպես տեսնում ենք, Ռու-

սաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված է հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ավելի կարճ ժամկետ, քան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Ուստի կարելի է պնդել, որ դրանով Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունը ավելի է համապատասխանում միջազգային պահանջներին, քանի որ սահմանում է քրեական գործ հարուցելու կամ մերժելու համար անհրաժեշտ որոշում կայացնելու ավելի սեղմ ժամկետներ:

Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունում նախատեսված է նշյալ ժամկետի երկարաձգման հնարավորություն: Այսպես, ՌԴ քր. դատ. օր.-ի հոդված 144-ի մաս 3-ում ասվում է. «Քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի պետն իրավունք ունի համապատասխանաբար՝ քննիչի, հետաքննիչի միջնորդությամբ մինչև 10 օր երկարաձգելու սույն հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետը, իսկ փաստաթղթային ստուգումների և վերստուգումների անհրաժեշտության դեպքում քննչական մարմնի ղեկավարը քննիչի միջնորդությամբ, իսկ դատախազը՝ հետաքննիչի միջնորդությամբ իրավունք ունեն երկարաձգելու այդ ժամկետը մինչև 30 օր»: Այսինքն՝ ստացված հաղորդման ստուգման եռօրյա ժամկետը, որ սահմանված է ՌԴ քր. դատ. օր.-ում, կարող է երկարաձգվել մինչև 10 օր, երբեմն էլ՝ մինչև 30 օր: Ընդ որում, ինչպես տեսնում ենք, այդ ժամկետի երկարաձգման ընթացակարգը բավականին պարզ է: Հանցագործության մասին հաղորդման քննարկման ժամկետը մինչև 10 օր երկարաձգվում է իրավապահայան մարմինների կոնկրետ ստորաբաժանման ներսում, ավելի ստույգ՝ հետաքննության մարմնի պետի կամ քննչական մարմնի ղեկավարի կողմից: Հիշյալ հաղորդումների քննարկման ժամկետի երկարաձգման տվյալ կարգը թույլ է տալիս քննադատաբար վերաբերվելու այն պատճառների բա-

ցահայտմանը, որոնցով քննիչը, հետաքննություն իրականացնող դիմել են ժամկետը երկարաձգելու միջնորդությամբ: Այդ միջնորդությունները քննարկելիս քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի պետը, բնականաբար, պիտի առաջնորդվեն նեղ գերատեսչական շահերով, այլ ոչ թե քաղաքացիների շահերով: Առավել ևս, որ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման պրակտիկան ցույց է տալիս, որ նշված ժամկետները հաճախ չեն պահպանվում այն դեպքերում, երբ ենթադրվում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում կայացնելը: Վերոնշյալ հաղորդումների քննարկումը տեղի է ունենում ավելի երկար ժամկետներում, սակայն որոշման կայացման տարեթիվը նշելիս այնպես է արվում, որ պահպանվի ժամկետները չխախտելու պայմանականությունը:

Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման արդյունքների հիման վրա որոշում կայացնելու ժամկետների երկարաձգման հնարավորությունը պայմաններ է ստեղծում ավելորդ քաշքշուկների ու քրեական գործի հարուցման կամ այն մերժելու մասին որոշման կայացումը անհիմն կերպով ձգձգելու համար: Դա ստեղծում է անորոշ վիճակ և դժվարություններ հարուցում այն անձանց համար, որոնք փորձում են իրացնել իրենց իրավունքներն ու ազատությունները: Սասնավորապես, կատարված հանցագործություններից տուժած անձանց առնչությամբ ձգձգվում է նրանց որպես տուժող ճանաչելու ժամկետը, հետևաբար և՛ քրեական դատավարության մասնակցի՝ նրանց իրավունքի ճանաչումը: Նույնը արդարացիորեն վերաբերում է նաև իրավաբանական անձանց, որոնք գույքային վնաս են կրել կատարված հանցագործությունների հետևանքով, որոնց առնչությամբ ձգձգվում է քրեական դատավարության մեջ նրանց տուժող և քաղաքացիական հայցվոր ճանաչելու պահը:

Հանցագործությունների մասին հաղոր-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ղումների քննարկման ժամկետների երկարաձգման հնարավորություն ընձեռելու հիմնական պատճառը այն մտավախությունն է, որ հնարավոր է քրեական գործեր հարուցվեն հանցագործության հատկանիշների առկայության մասին ոչ ստույգ մտահանգման հիման վրա: Նման սխալը հնարավոր է և պայմանավորված է այն բանով, որ սեղմ ժամկետներում բավականին բարդ է մանրամասնորեն քննարկել հանցագործության մասին կոնկրետ դիմումը: Այդուհանդերձ, հազիվ թե արժե վախենալ այդ սխալը գործելուց: Չէ՞ որ քրեական գործ հարուցելը չպետք է կանխորոշի քրեական դատավարության հաջորդ փուլերի որոշումները, իսկ դրանք կարող են լինել և՛ քրեական գործի կարճումը, և՛ արդարացման դատավճիռը: Իսկ քրեական գործի քննության հետագա ընթացքի կանխորոշումը անհիմաստ է դարձնում քրեական դատավարության բուն մրցակցային հիմքը: Այսինքն՝ ինչպե՞ս մրցակցել, եթե առանց այդ էլ արդեն ամեն ինչ պարզ է դառնում քրեական գործ հարուցելիս:

Հանցագործության մասին հաղորդումների քննարկման ժամկետը երկարաձգելու հնարավորության ընձեռումը անխուսափելիորեն կհանգեցնի այն բանին, որ երկարաձգումը կդառնա ոչ թե բացառություն կանոններից, այլ իրավապահպան մարմինների սովորական, ամենօրյա գործելաոճը: ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 180-ի մաս 1-ով սահմանված հաղորդումների քննարկման 10-օրյա ժամկետը, կարծում ենք, ամենաօպտիմալն է, քանի որ այդ ժամանակամիջոցում լիովին հնարավոր է հասցնել ընդունել դիմումը, մանրագնին ուսումնասիրել այն, պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր և որոշում կայացնել քրեական գործ հարուցելու կամ մերժելու մասին: Ավելի կարճ ժամկետում այդ ամել հնարավոր չէ:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության համար անընդունելի է նաև հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետի երկարաձգման կարգը: Այս կարգը չի նպաստում հաղորդումների քննարկման որակին, այլ միայն պատճառ է դառնում դրա անհարկի ձգձգման: Միանգամայն ակնհայտ է, որ նշյալ ժամկետի երկարաձգումը նույնիսկ որոշ խնդիրներ է ծնում կապված քրեական գործի հետագա քննության հետ: Այսպես, եթե տևական ժամանակ քրեական գործ չի հարուցվում, ապա դա կարող է պատճառ դառնալ, որ չգրանցվեն ու գործին չկցվեն կարևոր իրեդեն ապացույցները, չհայտնաբերվեն ու չհարցաքննվեն տվյալ հանցագործության ականատեսները: Բացի այդ, երկար ժամանակ քրեական գործ չհարուցելուց կարող է օգտվել հանցագործը՝ թաքցնելու իր կատարած հանցագործությունը: Ընդ որում, հանցագործը կարող է դիմել գործողությունների, որոնց նպատակը կլինի շահագրգռել իրավապահպան մարմինների պաշտոնատար անձանց, որոնցից կախված է կամ գործի ճակատագիրը, կամ այն անձը, որը քննարկում է հանցագործության մասին հաղորդումը, որպեսզի չարաշահեն իրենց պաշտոնական լիազորությունները՝ քրեական գործ հարուցելը անհիմն կերպով մերժելով: Այդ հանգամանքին, մասնավորապես, ուշադրություն են դարձրել Ա. Ս. Կարետնիկովը և Դ. Ա. Ջիպուննիկովը, որոնք ուղղակիորեն նշում են, որ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետների երկարատևությունը հաճախ վերածվում է հանցագործությունները թաքցնելու գործունեության՝ մտացածին հիմնավորումներ գտնելու ճանապարհով քրեական գործ հարուցելը մերժելու համար⁷:

Հետևաբար, հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման երկար ժամկետները բարենպաստ պայմաններ են ստեղծում ամեն տեսակ չարաշահումների համար, ներառյալ նոր հանցագործություն-

ների կատարումը, բայց արդեն իրավապահական մարմինների պաշտոնատար անձանց կողմից, որոնք օգտագործում են իրենց պաշտոնական դիրքը՝ ի վնաս հասարակության ու պետության շահերի: Դա նաև խոչընդոտում է քաղաքացիների կողմից արդարադատության մատչելիության իրենց իրավունքի իրականացմանը՝ կապված հանցագործությամբ խախտված իրավունքները պաշտպանելու հետ: Ուստի հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ցանկացած ձգձգում անընդունելի է ՀՀ քրեադատավարական օրենսդրության համար:

ՀՀ քրեադատավարական գործող օրենսդրության՝ քրեական գործի հարուցման ընթացակարգի կարգավորման առանձնահատկություններից մեկը քրեական գործ հարուցելու առիթների սպառնիչ թվարկումն է: Ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի 176 հոդվածի՝ «Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.

2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.

3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս»: Դրանով Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը տարբերվում է Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունից: Համաձայն ՌԴ քր. դատ. օր.-ի հոդված 140-ի մաս 1-ի՝ «Քրեական գործ հարուցելու առիթներն են.

1) հանցագործության մասին հայտարարությունը,

2) մեղապականով ներկայանալը,

3) կատարված կամ կատարվելիք հանցագործության մասին այլ աղբյուրներից

ստացված հաղորդումը»:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում քրեական գործի հարուցման առիթների ցանկը վերջնական է, քանի որ պարունակում է առիթների սպառնիչ ցանկ: Մինչդեռ Ռուսաստանի Դաշնության քրեադատավարական օրենսդրությունում նշյալ ցանկը բաց է, քանի որ ՌԴ քր. դատ. օր.-ի հոդված 140-ի մաս 1-ի երրորդ կետի ձևակերպման մեջ հղում է արվում այն հաղորդումների վրա, որոնք կարող են ստացվել անորոշ թվով աղբյուրներից, որոնց մասին օրենքում անգամ ընդհանուր գծերով չի հիշատակվում, քանի որ անորոշ հղում է կատարվում «այլ աղբյուրների» վրա: Այսինքն՝ «ՌԴ քր. դատ. օր.-ը փաստորեն առիթ է ճանաչում հանցագործության մասին ցանկացած տեղեկատվություն, որը նույնականանում է դրա հեղինակի հետ (ֆիզիկական կամ իրավաբանական անձի)»:

Քրեական գործ հարուցելու համար հստակորեն սահմանված առիթների բացակայությունը ՌԴ քրեադատավարական օրենսդրությունում կամայականությունների լայն հնարավորություններ է տալիս այն անձանց, որոնք լիազորված են քրեական գործ հարուցելու: Դա ակնհայտ սպառնալիք է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների նկատմամբ: Ինչպես իրավագիտորեն նկատում է Վ. Ի. Չաժիցկին. «Վերջին առիթը ամենախճճվածն է, որովհետև արտահայտված է գնահատանքային «այլ» տերմինով, որի բովանդակությունը պետք է պարզեն իրավակիրառ մարմինների պաշտոնատար անձինք»:⁹ Այն պաշտոնական կամայականությունների մեծ դաշտ է ստեղծում այն անձանց համար, որոնք լիազորված են որոշելու քրեական գործ հարուցելու հարցը, քանի որ նրանք կարող են մեկնաբանել «այլ» բառի բովանդակությունն ըստ իրենց հայեցողության՝ առաջնորդվելով ռոպեական շահերով: Այդ շահերը կարող են լինել անձնական կամ ծառայության շահերից բխող թյուրըմբռ-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

նում, երբ, օրինակ, պետք է ցույց տալ հանցագործությունների բացահայտման այս կամ այն «չափածողը» կամ ստանալ հանցավորության որոշակի տեսակի դեմ պայքարի արդյունավետության ցուցանիշը:

Որոշ հեղինակներ, մեկնաբանելով նշված նորմը, փորձում են շտկել վիճակը՝ յուրովի բացատրելով դա: Այսպես, Ա. Վ. Սմիռնովը և Կ. Բ. Կալինովսկին գրում են. «Հանցագործությունների մասին այլ աղբյուրներից ստացված հաղորդումը, որպես քրեական գործ հարուցելու առիթ, իրականում, հանցագործության հատկանիշների հայտնաբերման վերաբերյալ զեկույցի (ռապորտի) տեսք ունի»¹⁰: Իսկայես, համաձայն ՌԴ քր. դատ. օր.-ի. «Կատարված կամ նախապատրաստվող հանցագործության մասին հաղորդումը, որն ստացվել է այլ աղբյուրներից, քան նշված է սույն օրենսգրքի 141 և 142 հոդվածներում, ընդունում է այն անձը, որը ստանում է նշյալ հաղորդումը, որի առնչությամբ կազմվում է ռապորտ հանցագործության հատկանիշների հայտնաբերման մասին»: Սակայն դրանից ամենևին էլ չի բխում, ինչպես ենթադրում են վերոնշյալ հեղինակները, թե «դատավարական օրենքը նախատեսում է հանցագործության մասին սկզբնական տեղեկատվության աղբյուրների սպառիչ ցանկ, որոնք կարող են դառնալ քրեական գործ հարուցելու առիթ»¹¹:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ առիթները թվարկելիս չի գործածում այնպիսի անորոշ արտահայտություններ, ինչպիսին ռուսաստանյան օրենսդրության մեջ կիրառվող «այլ» բառն է: Դրա շնորհիվ ՀՀ քր. դատ. օր.-ում ամրագրված քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ առիթների ցանկը սպառիչ է:

ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 176-ում թվարկված՝ քրեական գործ հարուցելու

համար անհրաժեշտ առիթները ավելի հստակ են ձևակերպված, քան ՌԴ քրեադատավարական օրենսդրությունում: Այսպես, ռուսաստանյան օրենսդրությունում չի նշվում այնպիսի չափազանց կարևոր առիթը, ինչպիսին զանգվածային լրատվամիջոցների հաղորդումն է: Մինչդեռ ցանկացած ժողովրդավարական պետությունում զանգվածային լրատվամիջոցները ոչ միայն օժանդակում են այնպիսի կարևոր ազատության իրացմանը, ինչպիսին խոսքի ազատությունն է, այլև գործուն միջոց են, որի օգնությամբ յուրաքանչյուր քաղաքացի, մարդն ու հասարակությունը ընդհանուր առմամբ կարող են ներգործել պետության և նրա առանձին պաշտոնատար անձանց գործունեության վրա: Ներգործության մասն մեխանիզմներից մեկը, որի օգնությամբ կարող են վերանալ ամեն տեսակ խոչընդոտները պետական մարմինների գործունեության մեջ, լրատվության միջոցներով արտահայտվելու հնարավորությունն է, որը միաժամանակ կարող է հասցեագրվել և՛ պետությանը, որին ցույց են տրվում իր գործունեության մեջ առկա մասնակի շեղումները, և՛ հասարակությանը, որն իրազեկվում է այդօրինակ շեղումների մասին, որոնք տեղի են ունենում պետության որոշ պաշտոնատար անձանց մեղքով: Քրեական գործ հարուցելու առիթների մեջ զանգվածային լրատվամիջոցների հաղորդման բացակայությունը ստեղծում է բավականին տարօրինակ մի վիճակ, երբ զանգվածային լրատվամիջոցներում քննարկվում է կոնկրետ հանցագործության կատարման փաստ, օրինակ, պաշտոնեական հանցագործության, իսկ իրավապահական մարմինները չեն ձեռնարկում ոչ մի միջոց այդ հանցագործությունը խափանելու համար կամ այն բացահայտելու և քննելու նպատակով: Ուստի Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում քրեական գործ հարուցելու հիշյալ առիթի ամրագրումը համապատասխանում է պետության ժողովրդավարական էությանը և նպաստում

լրատվության միջոցների հեղինակության բարձրացմանը, որոնց միջոցով իրացվում է խոսքի ազատությունը:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 179 հոդվածի 1-ին մասի. «Լրատվության միջոցների հաղորդումներ են հանդիսանում կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումները մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չիրապարակված հաղորդակցություններում»: Հիշյալ նորմից երևում է, որ օրենսդիրն անհրաժեշտ է համարում գործնականում ուշադրություն դարձնել ժամանակակից բոլոր լրատվամիջոցներին: Դա, մի կողմից, կոչված է նպաստելու հանցագործությունների բացահայտման արդյունավետությանը, մյուս կողմից՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հնարավոր խախտումներին իրավապահպան մարմինների ժամանակին արձագանքմանը և այդ խախտումների կանխմանը: Սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ նշյալ նորմում հիշատակվում են ոչ բոլոր լրատվամիջոցները: Այսպես, ՀՀ քր. դատ. օր.-ի 179-ի հոդվածի 1-ին մասում լրատվության միջոցների հասկացության սահմաններից դուրս է մնում ինտերնետը: Միանգամայն ակնհայտ է, որ այն նույնպես լրատվության միջոց է, թեկուզ և տարբերվում է բազմաթիվ առանձնահատկություններով: Այդպիսի առանձնահատկություններից մեկն այն է, որ ինտերնետում գետեղված որոշ հաղորդումներ կարող են լինել անանուն: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ որպես առիթ դիտվեն միայն ինտերնետային այն հաղորդումները, որոնք տեղ են գտել պաշտոնապես գրանցված ինտերնետ-պարբերականների էջերում: Դա անհրաժեշտ է տվյալ տեղեկատվության արքյուրը պարզելու համար, որպեսզի ստուգվի դրա հավաստիությունը: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ լրատվության միջոցները զարգանում են, իսկ դա ենթադրում է դրանց նոր ձևերի ի հայտ գալը: Թե ինչպիսին կլինեն այդ ձևերը, կարելի է միայն ենթադրել: Սակայն քանի որ օրենքը

ենթադրությունների ու կռահումների ուղիտ չէ, թեկուզ և դրանք լինեն միանգամայն հիմնավորված, ապա կարծում ենք, որ օրենսդիրը լրատվության միջոցներ տերմինը մեկնաբանելիս չպիտի սահմանափակվի միայն այդ միջոցների մի շարք տեսակների թվարկումով: Ավելի ճիշտ կլիներ խոսել ոչ թե լրատվության միջոցների, այլ զանգվածային լրատվության միջոցների մասին, քանի որ լրատվության միջոցը լրատվության ցանկացած աղբյուր է՝ ներառյալ կոնկրետ անձանց հասցեագրված նամակը, գրությունը: Ուստի նշյալ նորմը հարկավոր է ձևակերպել հետևյալ կերպ. «Լրատվության միջոցների հաղորդումներ են կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումները մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, օրենքով սահմանված կարգով գրանցված լրատվության այլ աղբյուրներում, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չիրապարակված հաղորդակցություններում»:

Օրենքը միանշանակ լուծում է տալիս անանուն հայտարարությունների հարցին: ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 177-ի մաս 7-ում ասվում է. «Չստորագրված կամ կեղծ ստորագրությամբ կամ մտացածին անձի անունից գրված նամակը, հայտարարությունը կամ հանցագործության մասին այլ անանուն հաղորդումը քրեական գործ հարուցելու առիթ չեն»:

Ինչպես տեսնում ենք, օրենսդրությունը մերժում է անանուն հայտարարությունները որպես քրեական գործ հարուցելու առիթ կիրառելու ցանկացած հնարավորություն: Այդ եղանակով լուծելով հիշյալ հարցը՝ օրենսդիրն ըստ էության հռչակել է անցյալ հարյուրամյակի 20-60-ական թվականներին հորիորդային Միությունում տարածված բռնությունների արատավոր գործելաոճին չվերադառնալու իր վճռակալությունը: Չէ՞ որ այդ շրջանում անանուն հայտարարությունների նկատմամբ վերաբերմունքը միանգամայն այլ էր: 1923 թ. քր. դատ. օր.-ում գրված էր. «Անանուն հայտարարությունները քրեական հետապնդում հարուցելու առիթ կարող են դառնալ միայն

Քրեական Իրավունք ԵՎ**ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

հետաքննության մարմինների կողմից դրանց նախնական ոչ հրապարակային ստուգումից հետո»: Այս դրույթի գործողության պատճառով այդ ժամանակաշրջանում ոչ մի մարդ չէր կարող իրեն պաշտպանված զգալ, քանի որ նրա իրավունքները ցանկացած պահի կարող էին խախտվել ամեն տեսակ սուտ մատուցումներով, որոնք շարադրված էին անանուն հայտարարություններում: Քրեական գործ հարուցելը կրկին տարբեր անձանց միջև հաշիվներ մաքրելու գործիք չդարձնելու ձգտմամբ է թելադրված օրենսդրի կողմից

քրեական գործ հարուցելու համար անանուն հայտարարությունը որպես առիթ չճանաչելը:

Ընդհանուր առմամբ հարկ է ընդունել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում բավականին հստակ ու պարզ են թվարկված քրեական գործ հարուցելու բոլոր հնարավոր առիթները: Դրանք այնպես են ձևակերպված, որ մեկնաբանության բազմանշանակություն չեն ենթադրում, որի շնորհիվ իրավապահական մարմինների պաշտոնատար անձինք այս նորմը կիրառելիս դժվարությունների չեն հանդիպում: Դա նաև երաշխավորում է իրավունքների ու ազատությունների պաշտպանվածությունը քրեական գործ հարուցելու փուլում:

- ¹ Տե՛ս Рахунов Р.Д. Возбуждение уголовного дела в советском уголовном процессе - М.: Госюриздат, 1954, 88 էջ; Данышина Л.И. Возбуждение уголовного дела и предварительное расследование в уголовном процессе России, Учебное пособие, М.: Экзамен, 2003, 192 էջ; Усачев А.А. Возбуждение уголовного дела в российском уголовном судопроизводстве, Автореф. дис. ... канд. юрид. наук, Иркутск, 2003, 22 էջ; Рыжаков А.П. Возбуждение и отказ в возбуждении уголовного дела, М.: ИИД «Филинь», 1997, 248 էջ; Дмитриев И.Р., Федулов А.В. Система поводов для возбуждения уголовного дела в современном уголовном судопроизводстве России // Современные проблемы государства и права, Сборник научных трудов. Нижний Новгород: Изд-во Нижегород. акад. МВД РФ, 2003, Вып. 1., էջ 173-183; Ковалева М.Г. Поводы и основание для возбуждения уголовного дела в российском уголовном процессе // Труды Санкт-Петербургского юридического института Генеральной прокуратуры Российской Федерации. -Пб.: Изд-во С.-Петербург. юрид. инта Генеральной прокуратуры РФ, 2004, N 6. էջ 46-51 և ուրիշներ:
- ² Տե՛ս Уголовно-процессуальное право Российской Федерации, / Отв. ред. П.А. Лупинская, М.: Юристъ, 2004, էջ 350:
- ³ Տե՛ս Чельцов М.А. Советский уголовный процесс, — М.: Государственное издательство

- юридической литературы, 1951, էջ 214:
- ⁴ Տե՛ս Громов Н.А. Уголовный процесс России, М.: Юристъ, 1998, էջ 218:
- ⁵ Տե՛ս Уголовный процесс Российской Федерации, / отв. ред. проф. А.П. Кругликов, М.: Проспект, 2009, էջ 335:
- ⁶ Տե՛ս Газетдинов Н.И. Некоторые вопросы, связанные с принятием решения о возбуждении уголовного дела, // Российский следователь, 2009, N 7, էջ 8:
- ⁷ Տե՛ս Зипунников О.А., Каретников А.С. Сообщения о преступлениях — проблемы теории и практики, // Российская юстиция, 2006, N 12, էջ 53-54:
- ⁸ Տե՛ս Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации, / Под общ. ред. В.М. Лебедева; Науч. ред. В.П. Божьев, М.: Спарк, 2002, էջ 300:
- ⁹ Տե՛ս Зажицкий В.И. Какие изменения и дополнения целесообразно внести в правовой институт возбуждения уголовного дела. Материалы международной научно-практической конференции «Уголовно-процессуальный кодекс Российской Федерации: год правоприменения и преподавания», М., 2004, էջ 220:
- ¹⁰ Տե՛ս Смирнов А.В., Калиновский К.Б. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации. Постатейный, М.: КНОРУС, 2007, էջ 405:
- ¹¹ Նույն տեղում:

ՋԻՆԾԱՌԱՅՈՂՈՂ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՅԵԿՏ

Արա ԳԱԲՈՒԶՅԱՆ

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավ. գիյ. դոկտոր*

Կարո ԲՐՈՒՏՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պատ.
ավագ լեյտենանտ*

Հանցագործության հատուկ սուբյեկտի վերաբերյալ քրեաիրավական գրականության մեջ բազմաթիվ տեսակետներ են արտահայտվել: Ժամանակակից մասնագիտական գրականության մեջ հատուկ սուբյեկտ ասելով ավանդաբար հասկացվում է սուբյեկտի ընդհանուր հատկանիշների հետ միասին քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում նախատեսված կամ դրանից ուղղակի բխող առանձնահատկություններով և լրացուցիչ հատկանիշներով օժտված անձ¹: Հանցագործության հատուկ սուբյեկտ հասկացության և հատկանիշների լիարժեք բացահայտման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի շարք հանգամանքների վրա:

Պետք է նշել, որ հատուկ սուբյեկտ կարող է ճանաչվել միայն այն անձը, որը տվյալ հատուկ հարաբերությունների պատշաճ մասնակից է, ինչպիսին կարող են լինել ոչ բոլոր քաղաքացիները, այլ միայն նրանց որոշակի մասը, որոնք, ի տարբերություն հանցագործության ընդհանուր սուբյեկտների, այդ հարաբերությունների մեջ ընդգրկվում են հատուկ սահմանված կարգով: Օրինակ, համաձայն ՀՀ ՁՈԻ կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագրքի 126 հոդվածի՝ արգելվում է պահակախմբում նշանակել

այն զինծառայողներին, որոնք զինվորական երդում չեն ընդունել, հիվանդներին և այն զինծառայողներին, որոնք տվյալ պահին իրենց բարոյահոգեբանական վիճակով չեն կարող պահակային ծառայություն կատարել:

Մասնագիտական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ «հատուկ սուբյեկտով հանցագործություն» հասկացությունը ճիշտ չէ, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերով քրեական պատասխանատվություն է նախատեսվում այն անձանց համար, որոնք անմիջականորեն կատարել են որևէ հոդվածի դիսպոզիցիայով ամրագրված հանցագործություն: Իրականում ճիշտ կլիներ խոսել ոչ թե հատուկ սուբյեկտի մասին, այլ հատուկ հանցակազմով հանցագործությունների մասին, որում ոչ միայն սուբյեկտն է հատուկ, այլև մյուս տարրերը և, առաջին հերթին, հանցագործության օբյեկտը:

Օրենսդրության, ինչպես նաև դատաքննչական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ սուբյեկտի բոլոր հատկանիշների հայտնաբերման, անձին քրեական պատասխանատվության ենթարկելու պայմանների բացահայտման, արարքի ճիշտ որակման համար հաճախ հարկ է լինում օգտվելու համապատասխան օրենսդրական ակտերի զանազան դրույթներից: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 367 հոդվածով (պահակային կամ կայազորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը) նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող է ճանաչվել միայն այն զինծառայողը, որը մտնում է պահակախմբի կամ պարեկախմբի կազմի մեջ: Այդպիսի զինծառայողների կատեգորիան որոշվում է ՀՀ ՁՈԻ կայազորային և պահակային ծառայությունների կանոնագրքով: Նշված հանցա-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

գործության պատշաճ սուբյեկտի մասին հարցի լուծման, անձին այդ հողվածով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու համար սկզբունքային նշանակություն ունի ՀՀ ՁՈՒ ներքին ծառայության կանոնագիրքը, որն արգելում է զինվորական պաշտոնի նշանակելը, մարտական խնդիրների կատարմանը (մարտական հերթապահության, պահակային ծառայության) ընդգրկել այն զինծառայողին, որը դեռ չի տվել զինվորական երդում: Արգելվում է նաև այդպիսի զինծառայողներին վստահել գեներ, զինամթերք և այլն²: Այս կապակցությամբ հարց է առաջանում, թե կարող է արդյոք այդպիսի զինծառայողը համարվել քրեական օրենսգրքի 367 հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ, եթե խախտվում են ՀՀ ՁՈՒ ներքին ծառայության կանոնագրքի վերոնշյալ արգելքները: Կամ ինչպե՞ս լուծել այն անձի քրեական պատասխանատվության հարցը, որը զինծառայության մեջ հայտնվել է ոչ օրինական հիմքով (զորակոչվել է անառողջ վիճակում) և կատարել է զինվորական հանցագործություն: Հնարավոր են նաև դեպքեր, երբ զորակոչիկը, որը ունի հոգեկան շեղումներ կամ չհանված կամ չմարված դատվածություն, անօրինական կանչվում է ծառայության և ընթացքում կատարում է զինվորական հանցագործություն: Նված դեպքերում, կարծում ենք, առավել ճիշտ մոտեցումն այն է, որ եթե նշված անձինք հատուկ հարաբերություններում ընդգրկվել են իրավասու մարմնի համապատասխան ակտով և հանցանքը կատարելիս մեղսունակ են եղել, ապա պետք է ճանաչվեն որպես զինվորական հանցագործությունների սուբյեկտներ՝ չնայած այն հանգամանքին, որ վերջիններս պատշաճ կարգով չեն ընդգրկվել այդպիսի հատուկ հարաբերություններում: Նմանատիպ իրավիճակներից խուսափելու միջոց կարող է լինել իրավասու պետական

մարմնի համապատասխան ակտի օրինականության բողոքարկումը՝ դրանից բխող հետևանքներով: Այսպիսի մոտեցման տրամաբանությունն այն է, որ հատուկ հասարակական հարաբերություններում անձանց ոչ պատշաճ ձևով ներգրավելու դեպքում վերջիններիս կողմից դիտավորությանը և մեղսունակ վիճակում հանցանք կատարելիս բացառվի պատասխանատվությունից խուսափելու հավանականությունը: Կարծում ենք, որ, օրինակ, մարտական հերթապահության կանոնները խախտած և երկրի պաշտպանունակությանը էական վնաս պատճառած անձը, որը թեև պատշաճ ձևով չի ընդգրկվել նշված ծառայության մեջ, չպետք է ազատվի քրեական պատասխանատվությունից:

Վիճելի է նաև ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների կողմից զինվորական հանցագործություն կատարելու դեպքում հանցագործության հատուկ սուբյեկտ ճանաչելու հարցը, քանի որ քաղաքացիները կարող են ՌՈՒՀ ընդունվել նաև 16 տարեկանից: Սակայն, ընդհանուր կանոնի համաձայն, զինվորական հանցագործությունների սուբյեկտ կարող են լինել 18 տարին լրացած անձինք³: Առավել ճիշտ մոտեցումն այս խնդրին կուրսանտին զինվորական հանցագործության սուբյեկտ ճանաչելն է, քանի որ, համաձայն «Ձինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի, ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտներն իրենց կարգավիճակով հավասարեցված են զինծառայողներին⁴:

Վերոնշյալ օրինակներից կարելի է եզրակացնել, որ քրեական պատասխանատվության ենթակա անձին հատուկ սուբյեկտ ճանաչելու հարցի լուծման համար այն համապարտադիր հատկանիշների հաշվառումը և վերլուծությունը, որոնք նախատեսված են քրեական օրենսգրքում (տարիք, մեղսունակություն) կամ ամրագրված են քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի դիսպոզիցիաներում (հանցագործության հատուկ սուբյեկտի դեպքում),

անհրաժեշտ է, սակայն բավարար չէ այն դեպքերում, երբ հատուկ սուբյեկտի հատկանիշները կանխորոշված չեն դիսպոզիցիայում, և հատուկ սուբյեկտի մասին եզրակացությունը չի բխում հենց քրեական օրենսգրքից, կատարված արարքի բնույթից: Նման դեպքերում միայն կոնկրետ հանցագործությանը կամ հանցագործության տեսակին հատուկ այդպիսի լրացուցիչ հատկանիշները գտնվում են քրեական օրենսդրության շրջանակներից դուրս, քանի որ քրեական օրենսգրքում (կոնկրետ նորմի դիսպոզիցիայում) հատկանիշների և առանձնահատկությունների այդպիսի մեծ զանգվածի ներառումը գործնականորեն անհնար է: Այնուամենայնիվ, սուբյեկտի այդպիսի յուրահատուկ հատկանիշները (երբ դրանք նախատեսված են համապատասխան օրենսդրական ակտերում) ունեն կարևոր քրեաիրավական նշանակություն, ամմիջականորեն ազդում են անձին՝ որպես հանցագործության սուբյեկտ ճանաչելու վրա և անձին քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման (լրացուցիչ հիմքեր) են:

Քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի վերլուծությունը վկայում է այն մասին, որ հատուկ սուբյեկտների կողմից կատարվող հանցագործություններից բացի՝ օրենքը պարունակում է նաև այնպիսի հանցակազմեր, որոնք կարող են կատարվել հատուկ սուբյեկտների ավելի նեղ շրջանակի կողմից: Ձինվորական հանցակազմերի համակարգում կան այնպիսի արարքներ, որոնց սուբյեկտներ կարող են լինել ոչ բոլոր զինծառայողները, այլ միայն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում նորմի դիսպոզիցիայում մատնանշված նրանց որոշակի կատեգորիան: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 357 հոդվածով նախատեսված հանցագործության (պետին դիմադրելը) սուբյեկտ կարող է լինել միայն ենթական (ստորադասը), այսինքն՝ ծառայողական դիրքով կամ զինվորական կոչումով պետի ենթակայությունում գտնվող զինծառայողը: Այստեղից կարելի է

հետևություն անել, որ զինվորական ծառայության հատուկ տեսակների կրման կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ կարող են լինել ոչ բոլոր զինծառայողները, այլ միայն նրանք, ովքեր մտնում են համապատասխան վերակարգի կազմում և այլն: Ընդ որում, այդպիսի հանցակազմեր պարունակվում են ոչ միայն քրեական օրենսգրքի հատուկ մասի տարբեր գլուխներում, այլև հանցագործության հատուկ սուբյեկտներով հանցակազմերը ընդգրկող գլխում:

Վերոշարադրյալի հիման վրա հանցագործության հատուկ սուբյեկտ հասկացությունը կարելի է սահմանել հետևյալ կերպ.

Հանցագործության հատուկ սուբյեկտը (հատուկ հանցակազմով հանցագործության սուբյեկտ) քրեական օրենսգրքով պաշտպանվող հատուկ հասարակական հարաբերությունների մեջ ընդգրկված, այդ օրենսգրքով նախատեսված հանրորեն վտանգավոր արարք կատարած, հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում նշված կամ անմիջականորեն քրեական օրենսգրքից բխող, իսկ անհրաժեշտ դեպքերում այլ օրենսդրական ակտերում թվարկված ընդհանուր, ինչպես նաև լրացուցիչ հատկանիշներ ունեցող և որպես հանցագործության կատարող քրեական պատասխանատվության ենթակա անձն է:

Ձինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտներ համարվում են զինծառայողները, ինչպես նաև պահեստազորում գտնվող քաղաքացիները՝ զինվորական հավաքներ անցնելու ժամանակ: Ինչպես նշվեց, հատուկ սուբյեկտների մեջ առանձնացվում են նաև հատուկ-կոնկրետ սուբյեկտներ: Դա վերաբերում է նաև զինծառայողին՝ որպես հանցագործության հատուկ սուբյեկտի: Օրենսդիրը մի դեպքում ուղղակի մատնանշում է հանցագործության հատուկ-կոնկրետ սուբյեկտին (քրեական օրենսգրքի հոդվածի դիսպոզիցիայում), իսկ մյուս դեպքում սուբյեկտի հատուկ-կոնկրետ բնույթը

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

բխում է նորմի դիսպոզիցիայի վերլուծությունից: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 357, 358 հոդվածներից հետևում է, որ պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու սուբյեկտ կարող է լինել միայն այն զինծառայողը, որը ծառայության բերումով կամ զինվորական կոչումով մշտապես կամ ժամանակավորապես ենթարկվում է այն անձին, ում նկատմամբ կատարվում են բռնի գործողություններ:

Սուբյեկտին որոշակի հասարակական հարաբերությունների մեջ ներգրավելու ընդհանուր պայման է համարվում քրեական օրենսգրքում նշված հատկանիշների առկայությունը (մեղսուսակություն, տարիք): Անձին հատուկ հասարակական հարաբերությունների ոլորտում ներգրավելու համար պահանջվում են լրացուցիչ պայմաններ: Անհրաժեշտ է նշել, որ քրեաիրավական պաշտպանության օբյեկտ համարվող հասարակական հարաբերությունները բաժանվում են ընդհանուրի և հատուկի:

Ընդհանուր հարաբերությունները նրանք են, որոնցում կարող են ընդգրկվել բոլոր քաղաքացիները՝ առանց լրացուցիչ պայմանների և պահանջների (կյանքի և առողջության ապահովման, անհատի պատվի ու արժանապատվության և այլ հարաբերություններ): Այդ դեպքում հանցագործության սուբյեկտ կարող է լինել ցանկացած անձ, քանի որ բոլոր անձանց վրա դրվում է սահմանված հարաբերությունների ապահովման համար նախատեսված նորմերի պահպանման պարտականություն, և դրանք խախտումն օրենքով նախատեսված դեպքերում առաջացնում է քրեական պատասխանատվություն:

Հատուկ հարաբերությունները նրանք են, որոնք ծագում են ինչ-որ առանձնահատուկ, հանրորեն անհրաժեշտ գործառույթների իրականացման կապակցությամբ⁶: Սովորաբար դրանք պաշտոնատար անձի, զինծառայողի, իրավաբանի, բժիշկի և այ-

լոց ծառայողական, մասնագիտական պարտականություններից բխող գործառույթներն են:

Ի տարբերություն ընդհանուր հարաբերությունների սուբյեկտների՝ հատուկ հարաբերությունների սուբյեկտները այդ հարաբերություններում ներգրավվում են հատուկ, նորմատիվ եղանակով: Այդ պատճառով հատուկ հասարակական հարաբերությունների համակարգում չեն ներգրավված անձինք չեն կարող լինել հատուկ հանցակազմով հանցագործությունների սուբյեկտ (նրանք կարող են լինել միայն այդպիսի հանցագործությունների կատարման կազմակերպիչներ, դրդիչներ կամ օժանդակողներ): Սուբյեկտների շրջանակի սահմանափակումը պայմանավորված է սուբյեկտի հատուկ հատկանիշով. այդպիսին կարող է լինել միայն այն անձը, որը տվյալ քրեաիրավական նորմով պահպանվող հարաբերությունների պատշաճ սուբյեկտ է:

Քրեական օրենսգրքի նորմերով պահպանվող հատուկ հարաբերությունների թվին, որոնք կարող են խախտվել հատուկ սուբյեկտների կողմից, դասվում են, օրինակ, զինված ուժերում գործող և զինվորական օրենսդրության նորմերի հիմքի վրա ստեղծված (ծևավորված) հարաբերությունները: Որպես այդ իրավահարաբերությունների սուբյեկտներ՝ հանդես են գալիս զինծառայողները: Ընդ որում, քաղաքացին զինծառայող է դառնում զինվորական մարմնի համապատասխան ակտի՝ զորակոչի հիման վրա, որն իրականացվում է այդ հարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտերի կարգադրագրերին համապատասխան: Այն դեպքերում, երբ օրենքը պատասխանատվություն է նախատեսում հատուկ պարտականությունների խախտման համար, հանցագործության սուբյեկտ կարող է լինել միայն հատուկ սուբյեկտը: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ հատուկ հասարակական հարաբերությունների ոլորտում անձի ձևական գտնվելու փաստն ինքնին դեռ չի նշանակում, որ

նրա կողմից թույլ տրված հատուկ հարաբերությունների խախտումը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության:

Գործող քրեական օրենսդրության մեջ նշանակալի տեղ են զբաղվում զինվորական հանցագործությունները, որոնք, ի տարբերություն բոլոր այլ հանցագործությունների, ունեն որոշակի առանձնահատկություններ, քանի որ ոտնձգում են տվյալ պետության զինված ուժերում սահմանված զինվորական ծառայության կրման կարգի դեմ, որը խախտվում է միայն զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց կողմից:

Զինված ուժերն ունեն առանձնահատուկ նշանակություն. նրանք կոչված են ապահովելու հայրենիքի պաշտպանությունը ցանկացած թշնամու հարձակումից: Իրենց առանձնահատուկ նշանակության ուժով պայմանավորված՝ զինված ուժերում դրված են կյանքի, կենցաղի և զործունեության յուրահատուկ պայմաններ, որտեղ ծառայությունն առաջացնում է բնութով և կարևորությամբ առանձնահատուկ պարտականություններ: Զինծառայողների վրա դրված են զինվորական կարգապահության ճիշտ և անշեղ պահպանման խիստ պահանջներ: Յուրաքանչյուր զինծառայողի՝ զինվորական «երկաթյա» կարգապահության պահպանումից են կախված ՀՀ զինված ուժերի հզորությունն ու ամրությունը: Ազգային բանակի հզորության ու մարտունակության ամրապնդման, Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության համար անհրաժեշտ է պատասխանատվության խիստ միջոցներ սահմանել ցանկացած զինծառայողի կողմից զինվորական կարգապահության հանցավոր խախտման համար:

Զինվորական հանցագործությունների սուբյեկտներ կարող են լինել զինծառայողները, ինչպես նաև պահեստազորի զինծառայողները: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ զինծառայող և զինապարտ հասկացությունները նույնական չեն, ինչից հետևում է, որ այս կամ այն անձանց զինվորական հանցագործությունների սուբյեկտներ ճանաչելու հարցը պետք է որոշվի տարբե-

րակված ձևով: Զինծառայողները զինվորական հանցագործությունների սուբյեկտ կարող են ճանաչվել իրական ծառայության մեջ գտնվելու ամբողջ ժամանակահատվածում, իսկ պահեստազորի զինապարտները՝ միայն ուսումնական հավաքների անցկացման ընթացքում: Այս պարագայում կարևոր նշանակություն ունի զինծառայողների իրական ծառայության, իսկ պահեստազորի զինծառայողների համար՝ ուսումնական կամ վարժական հավաքների մեջ գտնվելու սկզբի և ավարտի պահերի տարբերակումը:

Համաձայն «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի՝ իրական զինվորական ծառայության մեջ գտնվելու սկիզբ, այստեղից բխող բոլոր հետևանքներով, համարվում է զորակոչիկների համար՝ ծառայության վայր մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը, պայմանագրային զինվորական ծառայության ընդունվող քաղաքացիների համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը, ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների համար՝ տվյալ ռազմաուսումնական հաստատություններում սահմանված կարգով որպես կուրսանտ գրանցվելու օրը:

Ուսումնական և վարժական հավաքների մեջ գտնվող զինապարտի համար ծառայության սկիզբ է համարվում սահմանված հավաքներից նրանց փաստացի մնալու առաջին, իսկ ավարտի պահ՝ սահմանված հավաքների վերջին օրը⁶:

Իրական զինվորական ծառայության մեջ գտնվելու ավարտը համարվում է զորամասից զորացրման մասին համապատասխան փաստաթղթերի ստացման օրը:

Զինծառայողները և պահեստազորի զինապարտները զինվորական հանցագործությունների սուբյեկտ կարող են ճանաչվել միայն վերոնշյալ սկզբի և ավարտի պահերի միջև ընկած ժամանակի ընթացքում և միայն կապված զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության հետ: Ծառայություն կամ հավաքներ անցնելու հետ չկապված հան-

Քրեական Իրավունք Եվ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ցագործությունների դեպքում զինծառայողները և պահեստագործում գտնվող քաղաքացիները չեն կարող ճանաչվել զինվորական հանցագործությունների սուբյեկտներ, այլ պետք է պատասխանատվություն կրեն ընդհանուր հիմունքներով:

Ձինվորական ծառայության դեմ կատարվող հանցագործությունը դասվում է հատուկ սուբյեկտով հանցագործությունների թվին, ուստի այդպիսի հանցագործություններ կատարողներ կարող են համարվել միայն տվյալ կոնկրետ պետության զինված ուժեր և այլ զորքեր զորակոչված ու պայմանագրով զինվորական ծառայություն անցնող անձինք, ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտները, ինչպես նաև զինվորական հավաքների անցկացման ժամանակ պահեստագործում գտնվող քաղաքացիները: Նշված բոլոր անձինք ունեն զինծառայողների կարգավիճակ¹:

Հատուկ սուբյեկտների քրեական պատասխանատվության առավել լիարժեք և ճիշտ հիմնավորման համար անհրաժեշտ է քրեական օրենսգրքի ընդհանուր մասում նախատեսել հոդված, որում պետք է ամրագրվի տվյալ կատեգորիայի սուբյեկտների պատասխանատվության առանձնահատկությունները: Այդպիսի պայմանների թվին է դասվում, օրինակ, հատուկ հարաբերությունների ուլորտում սուբյեկտների ներառման նորմատիվային միջոցը:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնե-

լու, որ.

- հատուկ հանցակազմով հանցագործության սուբյեկտ կարող են լինել միայն տվյալ հատուկ հարաբերությունների մասնակիցները (հատուկ սուբյեկտները),

- սուբյեկտի ներառումը հատուկ հարաբերությունների համակարգ պետք է լինի նորմատիվ (հատուկ) եղանակով,

- ոչ միայն քրեական օրենսգրքում, այլև որոշ դեպքերում մյուս օրենսդրական ակտերում անհրաժեշտ է, որ ուղղակի նախատեսված լինեն կամ անմիջականորեն դրանցից բխեն սուբյեկտի լրացուցիչ հատկանիշները (առանձնահատկությունները),

- հատուկ հարաբերությունների մասնակից անձը պետք է ունակ լինի ուսնձգություն կատարելու դրանց նկատմամբ և պատասխանատվություն կրելու որպես հանցագործության կատարող:

Հատուկ սուբյեկտի այսպիսի բնորոշումը թույլ է տալիս եզրակացնելու, որ հատուկ հատկանիշները պայմանավորված են հատուկ հարաբերությունների առանձնահատկություններով: Դրանք վկայում են անձի վրա դրված հատուկ գործառույթների կատարման, իսկ դրանց խախտման դեպքում դրա համար քրեական պատասխանատվություն կրելու իրական հնարավորության և կարողության մասին: Այս խնդրի վերաբերյալ ընդունելի մոտեցումը քրեական օրենսգրքի ընդհանուր մասի նորմում անձին հատուկ սուբյեկտ ճանաչելու պայմանների ամբողջության ամրագրումն է, ինչպես նաև «Հատուկ հանցակազմով հանցագործություններում հանցակիցների պատասխանատվության մասին» հոդվածի նախատեսումը:

¹ Տե՛ս Павлов В. Г. Субъект преступления и уголовная ответственность. СПб., 2000, էջ 27:

² Տե՛ս ՀՀ ՁԻՒ ներքին ծառայության կանոնագիրք, հոդված 10. (ԱԺ-ն ընդունել է 1996թ. դեկտեմբեր 3-ին):

³ Տե՛ս Преступления против военной службы: Учебник для вузов. Под ред. Н. А. Петухова, изд-во НОРМА, М.2002, էջ 14:

⁴ Տե՛ս ՀՀ օրենքը «Ձինվորական ծառայություն անցնելու մասին», հոդված 1 (Ընդունվել է

03.07.2002թ.):

⁵ Տե՛ս Тер-Акопов А. А. — Уголовное право РФ. Учебное пособие, М.: Изд-во МНЭПУ, 2001, էջ 83:

⁶ Տե՛ս Мигачев Ю. И., Тихомиров С. В., Военное право: Учебник. Изд-во «Юрлитинформ», М., էջ 94:

⁷ Տե՛ս «Ձինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված (Ընդունված 03.07.2002թ.):

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գալիք ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի սահարենյու, իրավաբանական գիտությունների թեկնածու

Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում իրականացված և այսօր էլ շարունակվող դատաիրավական բարեփոխումների հիմնական նպատակը հասարակության վստահությունը վայելող իրավապահպան համակարգի ձևավորումն է: Թեև բարեփոխումների սլաքն ընդահանուր առմամբ ուղղված է ողջ դատաիրավական համակարգի կատարելագործմանը, այնուամենայնիվ դրա հիմնական նպատակը անկախ և անկողմնակալ դատարանի կայացումն է:

Ընդհանուր առմամբ, ողջ դատաիրավական համակարգի միաժամանակյա վերափոխումը եթե ոչ անհնարին, ապա բավականին բարդ գործընթաց է: Դա է պատճառը, որ վերափոխումն անհրաժեշտ է սկսել դատական համակարգի կատարելագործմամբ: Միայն անկախ, անաչառ և հասարակության վստահությունը վայելող դատական համակարգի առկայության պայմաններում է հնարավոր իրավապահպան ողջ համակարգի բարեփոխումը:

Դատաիրավական բարեփոխումների «շոգեքարշի» դերը, սակայն, դատական համակարգը կարող է կատարել միայն այն դեպքում, երբ ինքն իր հերթին վայելում է հասարակության վստահությունը որպես պետական իշխանության մարմիններից անկախ և իր գործառույթներն անաչառ իրականացնող մարմին:

Արդարացի չենք լինի, եթե չնշենք, որ անցած տարիների ընթացքում դատական համակարգի կատարելագործման ուղղությամբ բավական հաջողություններ արձանագրվել են: Սակայն սխալված էլ չենք լինի, եթե արձանագրենք, որ Հայաստանի

Հանրապետություն դատարանը բավականին հեռու է արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորը լինելուց:

Դատարանն արդարադատության իրականացման իր գործառույթը հաջողությամբ կարող է իրականացնել միայն այն դեպքում, եթե հասարակությունն այն դիտի որպես իր իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմ՝ հիմնված արդարության վեհ գաղափարի վրա: Դատական իշխանության նկատմամբ հասարակության նման վերաբերմունք կարող է ձևավորվել միայն այն դեպքում, երբ դատարանն իրականացնի «թափանցիկ» արդարադատություն մի կողմից հասարակությանը ընդեռելով իր գործունեությունը վերահսկելու հնարավորություն, մյուս կողմից ապահովելով հաշվետվողականություն նույն հասարակության առաջ: Ինչպես իր որոշումներից մեկում իրավաճիտորեն նշել է ԱՄՆ Գերագույն դատարանը, հրապարակային դատական քննությունը մի կողմից մեղադրյալին ստիպում է ձեռնպահ մնալ «դատարանը որպես մարդկանց վրա հարձակվելու գործիք» օգտագործելու փորձերից, մյուս կողմից այն «դատական իշխանության հնարավոր չարաշահումները» զսպելու միջոց է՝:

Դատական քննության հրապարակայնությունը վաղուց արդեն դադարել է լոկ դատավարական սկզբունք լինելուց և վերածվել է պետության քաղաքական ռեժիմի բնութագրիչներից մեկի: Դեռևս Հեգելը նշում էր. «Դատավարության դոմբացությունը հաճախ կապում են պետական կառուցվածքի ազատության հետ: Այդ ազատությունն այն է, որ հանրությունը ձեռք է բերում սուբյեկտիվ գիտակցության իրավունք դատելու դատավարության բնույթի մասին»²:

Սա է պատճառը, որ դատական քննութ-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

յան հրապարակայնությունը բարձրացվել է արդարադատության սահմանադրական սկզբունքի մակարդակի և իր արտացոլումն է ստացել դատական համակարգի անկախությունն ու մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներն ամրագրող միջազգային իրավական փաստաթղթերում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, կարևորելով հրապարակայնությունը որպես արդարադատության իրականացման կարևոր և պարտադիր պայման, այն դիտել է արդարացի դատական քննության իրավունքի բաղադրիչ: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատական քննության իրավունք: Դատարանի որոշումը հայտարարվում է հրապարակավ, սակայն ամբողջ դատաքննության կամ դրա մի մասի ընթացքում մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կարող է խախտել արդարադատության շահերը»:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երկրորդ մասն ամբողջապես նվիրված է հրապարակայնության սկզբունքին, քանի որ Կոն-

վենցիան այն դիտում է արդարացի դատաքննության իրավունքի բաղկացուցիչ և դրա պահովման կարևորագույն երաշխիք: Դատարանն իր մի շարք որոշումներում նշել է. «Յոդված 6(1)-ում ամրագրված՝ դատական մարմինների առաջ դատաքննության հրապարակային բնույթը դատավարության կողմերին պաշտպանում է գաղտնիության պայմաններում, հասարակական դիտարկումից դուրս արդարադատության իրականացումից: Մինևույն ժամանակ այն ստորադաս և վերադաս դատարանների նկատմամբ վստահության պահովման միջոցներից է: Արդարադատության իրականացումը տեսանելի դարձնելով՝ հրապարակայնությունը նպաստում է Յոդված 6(1)-ի նպատակի, այն է՝ արդարացի դատաքննության նվաճմանը, որի երաշխիքը Կոնվենցիայի իմաստով ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է»:

Թեև, ինչպես նշեցինք, դատական քննության հրապարակայնությունը կարևոր նշանակություն ունի դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահության ձևավորման համար, սակայն անվիճելի է նաև, որ հրապարակայնության սկզբունքի բացարձակացումը կարող է դատական իշխանության վրա ներագդման միջոց դառնալ: Դեռ 1962թ-ին Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը նշել է, որ որոշ գործերով ՁԼՄ-ների թշնամական գործունեությունը կարող է անմիջական ազդեցություն ունենալ դատական քննության արդարացիության վրա և հանգեցնել պետության պատասխանատվության⁴: Սակայն, եվրոպական դատարանը ոչ միայն թույլատրելի է համարել ՁԼՄ-ների՝ հասարակական մեծ հնչեղություն ունեցող դատավարությունների մեկնաբանությունները⁵, այլև նշել է, որ դատական քննության հրապարակայնությամբ հեշտ չէ ազդել պրոֆեսիոնալ դատավորի վրա⁶:

Հրապարակայնության սկզբունքն իր արտացոլումն է ստացել ՀՀ քրեական դա-

տավարության օրենսգրքում, որի 16-րդ հոդվածում սահմանված ընդհանուր կանոնն այն է, որ քրեական գործերի դատական քննությունը բոլոր դատարաններում դռնբաց է:

Կոնվենցիայի 6(1) հոդվածը սահմանում է դատական քննության հրապարակային բնույթն ապահովող երկու ինքնուրույն երաշխիք՝ դռնբաց դատական քննություն և դատավճռի հրապարակումը:

Դռնբաց դատական քննությունն ապահովելը դեռևս բավարար չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեսանկյունից դատավարությունը հրապարակային բնութագրելու համար: Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում իրավիճակի բազմազանությունը՝ Դատարանն ընտրել է պրագմատիկ մոտեցում՝ նշելով հրապարակային դատական քննության ապահովման ձևական երաշխիքների երկրորդական նշանակությունը: Դատական քննության հրապարակայնության գնահատման տեսանկյունից Դատարանը կարևորել է դատավարության փաստական իրողությունների գնահատումը⁸: Սա է պատճառը, որ մի կողմից դատարանն ընդլայնում է հրապարակայնության սահմանները՝ ներառելով այնպիսի բաղադրիչներ, որոնք հայրենի քրեական դատավարությունը երբևէ չի դիտել որպես հրապարակայնության սկզբունքի բաղկացուցիչ, մյուս կողմից դատարանը չի բացարձակացնում այս սկզբունքը և այն դիտարկում է արդարացի դատաքննության բոլոր տարրերի համակցությամբ:

Հրապարակային քննությունը նախ և առաջ կոչված է ապահովելու դռնբաց դատական քննությունը առաջին ատյանի դատարանում: Սակայն տեխնիկական պատճառներից ելնելով հրապարակային քննությունը երբեմն կարող է պարտադիր չհամարվել⁹: Եթե առաջին ատյանի դատարանում հրապարակային դատական քննություն չի անցկացվում, ապա դա կարող է փոխհատուցվել ավելի բարձր ատյանի դատարանում հրապարակային քննու-

յուն անցկացնելով: Սակայն այն պարագայում, եթե վերադաս դատարանը չի անդրադառնում կամ իրավասու չէ անդրադառնալու գործի փաստական կողմին, առկա է 6-րդ հոդվածի խախտում¹⁰: Միևնույն ժամանակ, եթե վերադաս դատական ատյանը հրապարակայնության բացակայության պայմաններում բեկանում է ստորադաս դատարանի՝ հրապարակային քննությամբ կայացրած արդարացման դատավճիռը, ապա առկա է 6-րդ հոդվածի խախտում: Նման դիրքորոշում Դատարանն արտահայտել է Իգուալ Կոլն ընդդեմ Իսպանիայի գործով, երբ հայցվորն արդարացվել է առաջին ատյանի դատարանում դռնբաց դատական նիստի ընթացքում, սակայն Շրջանային դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը: Այս գործով Դատարանը նշել է. «Տվյալ դեպքում շրջանային դատարանի իրականացրած քննության սահմանները թույլ են տալիս Դատարանին համարելու, որ դռնբաց դատական նիստ անհրաժեշտ էր: Իրականում շրջանային դատարանը չի սահմանափակվել գործի օբյեկտիվ կողմին այլ իրավական մեկնաբանություն տալով, այլ նաև վերանայել և նորովի է գնահատել առաջին ատյանի դատարանի ապացուցած փաստերը: Վերջինս անցնում է ըստ իրավունքի քննության սահմանը: Հետևաբար, վերադաս դատարանը գործը վերանայել է ըստ իրավունքի և ըստ փաստի: Հաշվի առնելով հայցվորի արդարացումն առաջին ատյանի դատարանի կողմից՝ դռնբաց նիստի ժամանակ ներկայացվել են բազմաթիվ ապացույցներ, ինչպես իրեղեն՝ դատական սեկվեստրի բանկային հաշվից տեղեկանքներ, այնպես էլ անձնական՝ հայցվորի հայտարարությունը, Դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից հայցվորի դատապարտումը առանց նրան լսելու չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված արդար դատաքննության պահանջին»¹¹: Նշենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը

ՔՐԵՍԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

այս առումով դատական քննության հրապարակայնության առավել խիստ և հստակ երաշխիքներ է նախատեսում: Մասնավորապես, հրապարակայնության սկզբունքն ամբողջությամբ կիրառվում է դատական քննության բոլոր փուլերում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածում դատական քննության հասկացությունն օգտագործվում է լայն իմաստով, և այս հարցում օրենքը որևէ սահմանափակում չի նախատեսում: Անգամ արագացված դատական քննության կարգի կիրառման դեպքում դատաքննությունը պետք է դնրբաց լինի: Մինչդեռ Եվրոպական դատարանը պարզեցված ընթացակարգով դատական քննությանը հրապարակայնության պահանջ չի ներկայացնում: Այսպես՝ Հերմինն ընդդեմ Իտալիայի գործով Դատարանը նշել է, որ. «նիստերը հրապարակային չեն եղել դիմողի կամավոր խնդրանքի հիման վրա պարզեցված քննության կիրառման հետևանքով: Պարզեցված քննությունն անվիճելի առավելություններ է նախատեսում մեղադրյալի համար. դատապարտման դեպքում նրա պատիժը էականորեն նվազեցվում է, և դատախազությունը չի կարող պատժի հետ կապված բողոք ներկայացնել... Մյուս կողմից՝ պարզեցված վարույթը հանգեցնում է ներպետական օրենսդրությամբ նախատեսված դատավարական երաշխիքների նվազեցման. դա վերաբերում է, մասնավորապես, լսումների հասարակական բնույթին և Գլխավոր դատախազի գրասենյակի կողմից գործում չներառված ապացույցների ձեռք բերելու խնդրանք ներկայացնելու հնարավորությանը»¹²: Դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն ունակ է եղել հասկանալու պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ իր խնդրանքի հետևանքները, հիմք ընդունելով, որ այս վեճը հասարակական շահի հետ որևէ առնչություն է ունեցել՝ այդպի-

սով խոչընդոտելով վերոհիշյալ դատավարական երաշխիքներից հրաժարվելուն, ինչպես նաև այն հանգամանքը, որ Իտալիայի օրենսդրությամբ պարզեցված վարույթի ամրագրումն ուղղված է բացառապես քրեական դատավարության պարզեցմանը և արագացմանը, նշել է. «Այն փաստը, որ առաջին և երկրորդ ատյաններում գործի քննությունը կատարվել է դմնփակ և հետևաբար՝ առանց հասարակության ներկայացուցիչների մասնակցության, չի կարող դիտվել որպես Կոնվենցիայի խախտում...»¹³:

Եթե բացառիկ հանգամանքեր չկան, Դատարանը հրապարակային դատական քննության բովանդակության մեջ ներառում է նաև դատական քննության բանավորության պահանջը¹⁴: Աքսենն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործով կայացրած վճռում Դատարանը նշել է, որ քրեական գործերով բանավորությունը պարտադիր չէ, եթե վերաքննիչ դատարանը մերժում է բողոքը միայն իրավունքի հիմքով¹⁵: Սակայն եթե վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնա և՛ փաստին, և՛ իրավունքին, մեղավորության կամ անմեղության, կամ պատժի վերանայման հարցերի, բանավորությունն անհրաժեշտ է¹⁶:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում է դմնփակ դատական քննություն անցկացնելու հիմքերը: ՀՀ քր. դատ. օր 16-րդ հոդվածի 2-րդ մասը մասնավորեցնում է կոնվենցիոն հիմքերը և հստակ սահմանում, թե կոնկրետ ինչ հանգամանքների առկայության պարագայում, ինչպիսի շահեր պաշտպանելու նպատակով և ում նախաձեռնությամբ կարող է դմնփակ դատական քննություն անցկացվել:

ՀՀ քր. դատ. օր 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի որոշմամբ դմնփակ դատական քննություն կարող է անցկացվել պետական կամ ծառայողական գաղտնիքի հետ առնչվող հանցագործությունների գործերով:

Դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդությամբ դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել նաև՝

1) անձնական և ընտանեկան կյանքին, անձի պատվին ու արժանապատվությանն առնչվող հանցագործությանների վերաբերյալ գործերով.

2) անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությանների վերաբերյալ գործերով.

3) քրեական դատավարությանը մասնակցող անձանց կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության անհրաժեշտության դեպքում:

Դատարանը դռնփակ դատական քննություն կարող է անցկացնել նաև ազգային անվտանգության և հասարակական կարգի պաշտպանության նկատառումներով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Այսպիսով, ՀՀ քր. դատ. օր-ը մանրամասնում է հրապարակայնության սահմանափակման կոնվենցիոնալ հիմքերը և սահմանում, որ նույնիսկ նշված հիմքերի առկայության պարագայում հրապարակայնությունը կարող է սահմանափակվել միայն բացառիկ դեպքերում, երբ դա չի վնասի արդարադատության իրականացմանը կամ չի հանգեցնի դատավարության հրապարակայնության սկզբունքի չարդարացված սահմանափակման:

Թեև, ընդհանուր կանոնի համաձայն, դատական քննությունը դռնբաց է, և դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել միայն դատարանի որոշմամբ, այնուամենայնիվ նույնիսկ դռնբաց դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանը պետք է զգուշություն ցուցաբերի, քանի որ որոշ ապացույցների հրապարակային հետազոտումը կարող է հանգեցնել կոնվենցիոնալ մեկ այլ՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման: Մասնավորապես, Պանտե-

լեյենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով Դատարանը նշել է. «Անհրաժեշտ է նշել, որ Վերաքննիչ դատարանը, վերանայելով գործը, հանգել է այն եզրակացությանը, որ դիմողի անձնական տեղեկության նկատմամբ առաջին ատյանի դատարանի դատավորների վերաբերմունքը չի համապատասխանել հոգեբուժական տվյալների հավաքման, պահպանման, օգտագործման և տարածման համար հատուկ ռեժիմին... Հիմք ընդունելով վերոգրյալ պատճառաբանությունը՝ Դատարանը գտնում է, որ այս կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում»¹⁷:

Կարծում ենք՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տեսանկյունից հրապարակայնության սկզբունքն անհրաժեշտ է տարածել նաև մինչդատական վարույթում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունների քննարկման նկատմամբ: ՀՀ քր. դատ. օր-ի համաձայն՝ միջնորդությունը քննում է դատավորը միանձնյա, դռնփակ դատական նիստում՝ միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ (ՀՀ քր. դատ. օր. 283 հոդվածի առաջին մաս): Նման կարգավորման պարագայում, երբ միջնորդությունների քննությունն իրականացվում է փակ, հասարակական հսկողությունից դուրս, բարձրանում է դատարանի կողմից կամայական որոշումներ կայացնելու հավանականությունը: Այս մոտեցման հակառակորդները որպես իրենց դիրքորոշման հիմնավորում կարող են նշել նախաքննության զաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, սակայն, կարծում ենք, որ ճկուն մոտեցում դրսևորելու պարագայում նման խնդիր չի առաջանա: Պրակտիկան ցույց է տալիս, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություններ կայացնելու վարույթն իրականացնող մարմինը բավարարվում է միայն համապատասխան հիմքերի առկայությունը նշելով առանց դրա հիմքում կոնկրետ ապացույցներ դնելու: Ավելին, նույնիսկ եթե համապատաս-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷ ԵՎ

ՂԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

խան հիմքերի առկայությունը հիմնավորվում է կոնկրետ ապացույցներով, դրանք, որպես կանոն, նախաքննության ընթացի վրա էական ազդեցություն ունենալ չեն կարող: Սակայն, ամեն դեպքում, երբ առկա է նախաքննության գաղտնիքը հրապարակելու վտանգ, դատարանին պետք է իրավունք վերապահել որոշում կայացնել դռնփակ քննություն անցկացնելու մասին: Նման ընթացակարգն դատավորի զգոնությունն ու պատասխանատվությունը բարձրացնող կարևոր երաշխիք է, և եթե անգամ դատարանը որոշում է կայացնում դռնփակ քննություն անցկացնելու մասին, այն պետք է հիմնավորված լինի: Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշումը ամեն դեպքում պետք է հրապարակվի դռնբաց դատական նիստում, քանի որ այն չի բովանդակում այնպիսի տվյալներ, որոնք կարող են խախտել նախաքննության գաղտնիությունը:

ՀՀ. մր. դատ. օր. 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանների դատավճիռները և այլ վերջնական որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն: Դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանի որոշման հիման վրա կարող են հրապարակայնորեն հայտարարվել դատավճռի կամ այլ վերջնական որոշման միայն ներածական կամ եզրափակիչ մասերը. չեն հրապարակվում այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դռնփակ դատական քննություն անցկացնելու համար: Դատավճռի հրապարակման առումով ևս ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը ոչ միայն համապատասխանում է Կոնվենցիայի պահանջներին,

այլև նախատեսում է դատական ակտին հասարակության իրազեկումն ու հասարակական հսկողությունն ապահովող գործուն երաշխիքներ: Կոնվենցիան դռնբաց դատական նիստում դատավճիռը հրապարակելու պահանջ չի ներկայացնում: Սուտերն ընդդեմ Շվեյցարիայի գործով Դատարանը նշել է. «1889թ-ի օրենքի 197-րդ բաժնի համաձայն՝ Վճռաբեկ զինվորական դատարանի 1977թ. հոկտեմբերի 21-ին կայացրած դատավճիռը տրամադրվել է կողմերին, սակայն չի հրապարակվել դռնբաց դատական նիստում... Յուրաքանչյուր ոք, ում համար դա հետաքրքրություն է ներկայացնում, կարող է ծանոթանալ Ձինվորական վճռաբեկ դատարանի դատավճռի ամբողջական տեքստին կամ ձեռք բերել դրա պատճենը. բացի դրանից՝ այնպիսի կարևոր դատավճիռները, ինչպիսին է Սուտերի գործով կայացված որոշումը, հետագայում հրատարակվում են պաշտոնական ժողովածուներում: Դրա դատական պրակտիկան, հետևաբար, որոշ դեպքերում բաց է հասարակական վերահսկողության համար: Ինչ վերաբերում է Ձինվորական վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով քննարկված հարցերին և վերջինիս որոշմանը, որի արդյունքում վերաքննիչ դատարանի որոշումը վերջնական էր դարձել, և ոչինչ չէր փոփոխվել պրն. Սուտերի վերաբերյալ դրա հետևություններում, 6-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանությունը..., որը վերաբերում է դատավճռի կայացմանը, շատ կոշտ է թվում և ոչ անհրաժեշտ 6-րդ հոդվածի նպատակներին հասնելու համար... Այսպիսով, Դատարանը համաձայն է Կառավարության և Հանձնաժողովի մեծամասնության հետ՝ եզրակացնելով, որ Կոնվենցիան չի պահանջում դատավարության վերջին փուլում կայացված դատավճռի բարձրաձայն հրապարակում»¹⁸:

¹ St'u Уильям Бернам Правовая система Соединенных штатов Америки. М., РИО "Новая юстиция", 2007, էջ 507:

² Гегель. Философия права. М., 1990, էջ 446:

³ St'u Axen v. Federal Republic of Germany, 8 December 1983, Series A no 72; Pretto v. Italy, 8.12.1983, Series A no 71; Sutter v. Switzerland, 22 February 1984, Series A No 74.

-
- ⁴ Տես X-ն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական Հանձնաժողովի N1475/62 որոշում, Coll. Dens.31, p.43 (1963):
- ⁵ Տես X-ն ընդդեմ Նորվեգիայի բողոք N3444/67, 13YBECHR 302 (1970); Sunday Times v. UK, Series A no 30 (1979);
- ⁶ Քրաքսին ընդդեմ Իտալիայի գործով դատարանը նշել է. «Պրոֆեսիոնալ դատավորների փորձն ու պատրաստվածությունը թույլ են տալիս վերջիններիս ուշադրություն չդարձնել արտաքին ազդեցությանը»: (Craxi v. Italy, բողոք N34896/97, 5 December, (2002)):
- ⁷ Տես The European System for the Protection of Human Rights. Edited by R. St. J. Macdonald, F. Matscher, H Petzold. Martinus Nijhoff Publishers, Dordrecht, Boston, London. էջ 393.
- ⁸ Տես Pretto, para. 22; Axen, para. 26; Sutter, para. 27; Campbell and Fell, para. 91.
- ⁹ Տես Nuala Mole and Catharina Harby. The right to a fair trial. A guide to the implementation of Article 6 of the European Convention on Human Rights. Human rights handbooks, No.3, 2006, էջ 20:
- ¹⁰ Տես Nuala Mole and Catharina Harby, նշվ. աշխատությունը, էջ 21:
- ¹¹ Igual Coll v. Spain, բողոք N37496/04, 10.03.2009, para. 36,37:
- ¹² Hermi v. Italy /GC/, բողոք N18114/02, 18.10.2006, para. 78.
- ¹³ Նույն տեղում, para. 81:
- ¹⁴ Տես Fischer v. Austria, 26 April 1995, para.44:
- ¹⁵ Տես Axen v. Federal Republic of Germany, 8 December 1983, para. 28:
- ¹⁶ Տես Ekbatani v. Sweden, 26 May 1988, and Cooke v. Austria, 8 February 2000:
- ¹⁷ Panteleyenکو v. Ukraine . բողոք N11901/02, 29.06.2006, para. 61, 62:
- ¹⁸ Sutter v. Switzerland. բողոք N8209/78, 22.02.1984, para. 31, 34:
-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՏԵՔՍՏԵՐԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ և ԴՐԱՆՑ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Լյուդվիկ ԳՎԿԹՅԱՆ

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

Ի նչպես դատական փորձաքննության յուրաքանչյուր տեսակի, այնպես էլ հայոց լեզվով կատարված տեքստերի դատական հեղինակագիտական հետազոտության նշանակությունը պայմանավորված է այն խնդիրներով, որոնց լուծմանն այն ուղղված է: Կրիմինալիստիկական հետազոտման խնդիր ասելով՝ սովորաբար նկատի են ունենում հարցերի այն շրջանակը, որոնց լուծմանն ուղղված է այս կամ այն փորձագիտական հետազոտությունը:

Հարկ է նշել, որ գրականության մեջ առանձնացվում են հեղինակագիտական փորձաքննության «գլխավոր խնդիրներ» և «հիմնական հարցեր» հասկացությունները¹: Նման մոտեցումը արդարացի է, քանի որ հեղինակագիտական հետազոտության խնդիրներից յուրաքանչյուրի շրջանակներում լուծվում են տարաբնույթ հարցեր, որոնք միասին վերցրած կազմում են դրա միջոցով լուծվող գլխավոր խնդիրների բովանդակությունը: Ընդ որում, հեղինակագիտական փորձաքննության գլխավոր խնդիրներն իրենց բովանդակությամբ առավել ընդգրկուն են, քանի որ ներառում են ոչ միայն դրա միջոցով լուծվող հարցերը, այլ նաև գրավոր տեքստերի հետ աշխատելու կանոնների մշակումը, գրավոր և բանավոր խոսքի հետազոտության մեթոդիկայի կատարելագործումը և այլն: Ինչ վերաբերում է հեղինակագիտական հետազոտությամբ լուծվող հարցերին, ապա

դրանք ներառվում են հեղինակագիտական հետազոտության միջոցով լուծվող այս կամ այն խնդրի շրջանակներում և կազմում դրա բովանդակության մի մասը:

Պետք է նշել, որ դատական հեղինակագիտական փորձագիտական հետազոտության խնդիրների դասակարգման վերաբերյալ կրիմինալիստիկական գրականության մեջ միատեսակ մոտեցում գոյություն չունի: Տարբեր հեղինակներ առաջարկում են կրիմինալիստիկական հետազոտության այս տեսակի խնդիրների տարբեր դասակարգումներ:

Այսպես, որոշ հեղինակներ առանձնացնում են հեղինակագիտական հետազոտությունների նույնացման և դիագնոստիկական խնդիրները², հեղինակների մեկ այլ խումբ հեղինակագիտական հետազոտությունների խնդիրները բաժանում է նույնացման և դիագնոստիկական խնդիրների, իսկ դիագնոստիկական խնդիրները բաժանում երկու առանձին խմբերի՝ դասակարգման և իրադրական³:

Տ. Վ. Գոմոնը գրավոր խոսքի լեզվաբանական փորձաքննության խնդիրները բաժանում է չորս առանձին խմբերի՝ նույնացման, դասակարգման, դիագնոստիկական և իրադրական⁴:

Հեղինակների մեկ այլ խմբի կարծիքով՝ տեքստերի դատական հեղինակագիտական հետազոտությամբ լուծվում են միայն դասակարգման խնդիրներ⁵, մյուսներն էլ առանձնացնում են դատական հեղինակագիտական փորձաքննության նույնացման, դասակարգման և դիագնոստիկական խնդիրները⁶:

Մեր կարծիքով, տեքստերի (այդ թվում

նաև՝ հայոց լեզվով կատարված) կրիմինալիստիկական հեղինակագիտական հետազոտության դասակարգման խնդիրների առանձնացումը դիագնոստիկական խնդիրների շարքում ճիշտ չէ: Բանն այն է, որ, ի տարբերություն դիագնոստիկական խնդիրների, դասակարգման խնդիրների բնույթը բոլորովին այլ է, և այն դիագնոստիկական խնդիրների առանձին տեսակ համարելը իրավացի չէ: Դասակարգման խնդիրներն իրենց բնույթով և նշանակությամբ առավելապես նույնացման են և կապված են նույնացման, այլ ոչ թե դիագնոստիկական խնդիրների հետ, քանի որ ուղղված են հետազոտվող օբյեկտի խմբային պատկանելության որոշմանը կամ, այսպես կոչված, խմբային իդենտիֆիկացմանը, իսկ դիագնոստիկական խնդիրները, որոնք, ըստ էության, նույնացման հետ չկապված խնդիրներ են, ուղղված են երևույթների, իրադրությունների և վիճակների ուսումնասիրմանը⁷: Կարծում ենք, դատական հեղինակագիտական հետազոտության խնդիրների շարքում որոշ հեղինակների կողմից առաջարկվող դիագնոստիկական-դասակարգման խնդիրներն ըստ էության վերաբերում են դատական փորձաքննություններով լուծվող խնդիրների այնպիսի խմբին, որոնք կրիմինալիստիկայում անվանվում են խմբային պատկանելության որոշում կամ խմբային իդենտիֆիկացում⁸: Ուստի կարծում ենք՝ դատական հեղինակագիտական հետազոտության դասակարգման խնդիրները պետք է ընդգրկել ոչ թե դիագնոստիկական, այլ իդենտիֆիկացման (նույնացման հետ կապված) խնդիրների շարքում:

Այսպիսով, հայոց լեզվով կատարված տեքստերի կրիմինալիստիկական հեղինակագիտական հետազոտության խնդիրները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝

ա) *իդենտիֆիկացման կամ նույնացման (նույնացման հետ կապված)*, որի մեջ կարելի է ընդգրկել *անհատական նույնացման և դասակարգման (հեղինակի խմբային*

պատկանելության որոշման կամ խմբային իդենտիֆիկացման) խնդիրները,

բ) *դիագնոստիկական-իրադրական, որոնք ուղղված են տեքստի կատարման հանգամանքների և պայմանների բացահայտմանը:*

Հայոց լեզվով կատարված տեքստերի դատական հեղինակագիտական հետազոտության խնդիրների առաջին խումբն են կազմում նույնացման խնդիրները, որոնց մեջ առանձնացվում են խնդիրների երկու առանձին ենթախմբեր՝ ա) *անհատական իդենտիֆիկացման և բ) դասակարգման (հեղինակի խմբային պատկանելության որոշման՝ խմբային իդենտիֆիկացման):*

Հայոց լեզվով կատարված տեքստերի նույնացման նշանակությունն ու դատական հեղինակագիտական հետազոտության նույնացման հետ կապված խնդիրները քննարկելու և բացահայտելու համար, կարծում ենք, հարկ է առաջին հերթին անդրադառնալ կրիմինալիստիկական նույնացման տեսության որոշ հիմնադրույթների ու հասկացությունների, որոնք ընկած են բոլոր տեսակի փորձաքննությունների, այդ թվում՝ դատական հեղինակագիտական հետազոտությունների հիմքում:

Հայտնի է, որ կրիմինալիստիկական իդենտիֆիկացման գործընթացն ուղղված է օբյեկտի անհատականացմանը: Փորձագետի համար օբյեկտի նույնացումը նշանակում է բոլոր հետազոտվող այլ օբյեկտներից որոշակի օբյեկտը տարբերակելու գործընթացը⁹:

Իդենտիֆիկացման պրոցեսում օբյեկտները բաժանվում են *նույնացվողների (իդենտիֆիկացվող) և նույնացնողների (իդենտիֆիկացնող):* Իդենտիֆիկացվող են համարվում այն օբյեկտները, որոնք իրենց հատկություններն արտահայտում են այլ օբյեկտների վրա (մարդիկ, կենդանիները, առարկաները և այլն): Նույնացնող են համարվում նույնացվող օբյեկտների թողած հետքերը կամ այլ արտահայտությունները (գիրը, կնիքի դրոշմը, գրավոր խոսքը, ձայնը և այլն), որոնց միջոցով իրականացվում

ՔՐԵՍԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

է նույնացումը¹⁰:

Հարկ է նկատել, որ նույնացնող և նույնացվող օբյեկտները հարաբերվում են ինչպես *աղբյուրը և արդյունքը*. նույնացվող օբյեկտը աղբյուր է հանդիսանում նույնացնող օբյեկտի՝ որպես արդյունքի առաջացման համար: Նույնացման գործընթացը, ըստ էության, ենթադրվող աղբյուրի և առաջացած արդյունքի համեմատական վերլուծություն է. փորձագետի խնդիրն է պարզել, թե արդյոք առաջացած արդյունքը ենթադրվող աղբյուրի ծնունդն է: Ընդ որում, աղբյուրի և արդյունքի միջև կապի բացահայտման համար անհրաժեշտ է պարզել, թե նույն աղբյուրը կարո՞ղ է արդյոք առաջացնել նույն արդյունքը, թե՞ ոչ: Այլ կերպ ասած՝ նույնացումն իրականացվում է՝ պարզելու երկու հետազոտվող օբյեկտների համար ընդհանուր աղբյուր ծառայող մեկ կոնկրետ օբյեկտին:

Ավածը մասնավորեցնելով հայոց լեզվով կատարված տեքստերի՝ հեղինակին պարզելու նպատակով իրականացվող հետազոտման վրա՝ կարելի է հավաստել, որ հեղինակի խոսքային վարքագիծը և վիճելի տեքստը հարաբերվում են որպես նույնացվող և նույնացնող օբյեկտներ: Այդ հարաբերությունը կարելի է ներկայացնել որպես աղբյուրի և արդյունքի հարաբերություն: Այդ դեպքում իդենտիֆիկացվող (նույնացվող) օբյեկտ է հանդիսանում գրավոր տեքստի հեղինակը, որի խոսքային վարքագծի հմտություններն արտահայտվում են գրավոր տեքստում համապատասխան հատկանիշների միջոցով: Տվյալ դեպքում գրավոր տեքստը իդենտիֆիկացնող օբյեկտն է՝ մարդու խոսքային վարքագծի նյութական օբյեկտ-արդյունքը: Ընդ որում, նույնացվող օբյեկտը՝ հեղինակը, իր խոսքային վարքագծով աղբյուր է նույնացնող օբյեկտի (վիճելի տեքստի)՝ որպես արդյունքի առաջացման համար: Այս առումով հեղինակի նույնացման գործընթացը, ըստ

էության, ենթադրվող աղբյուրի և առաջացած արդյունքի համեմատական վերլուծությունն է. փորձագետի խնդիրն է պարզել, թե արդյոք առաջացած արդյունքը՝ վիճելի և համեմատական հետազոտության մոտ ինչպես հանդիսացող տեքստերը, ենթադրվող աղբյուրի՝ հեղինակի խոսքային վարքագծի ծնունդն է:

Այսպիսով, հեղինակագիտական հետազոտության էությունը վիճելի և համեմատվող տեքստերի մեկ միասնական աղբյուրի պարզումն է: Վերջինիս համեմատական հետազոտությամբ հաստատվում է հեղինակի նույնությունն իր հետ՝ գրավոր կամ բանավոր խոսքի հատկանիշների ուժով նրա թողած արտահայտության՝ գրավոր տեքստի համեմատական հետազոտության միջոցով:

Կրիմինալիստիկական իդենտիֆիկացման գործընթացն իրականացվում է հետազոտվող օբյեկտների որոշակի հատկանիշների (հատկությունների) ուսումնասիրության և համեմատության հիման վրա: Իդենտիֆիկացման հատկանիշ ասելով՝ ընդունված է հասկանալ օբյեկտների հատկությունների այն ամբողջությունը, որն օբյեկտի մասին բավարար և ամբողջական ինֆորմացիա է տալիս, և որի հիման վրա հնարավոր է այդ օբյեկտն առանձնացնել նույնատիպ (նույնասեռ) այլ օբյեկտներից: Իդենտիֆիկացման հատկանիշները արտահայտում են որոնվող օբյեկտի էությունը և անհրաժեշտ են այդ օբյեկտի նույնացման համար¹¹: Ընդ որում, անհատական նույնացման համար անհրաժեշտ է արձանագրել հատկանիշների այնպիսի համակցության համընկնում, որը կարող է պատկանել միայն մեկ, եզակի օբյեկտին¹²:

Հայոց լեզվով կատարված տեքստերի հեղինակին պարզելու նպատակով իրականացվող կրիմինալիստիկական նույնացման հետազոտության հիմքում ընկած է հեղինակի խոսքային վարքագիծը կազմող լեզվական և մտավոր հմտությունների (գրավոր և բանավոր խոսքի հատկանիշների) անկրկնելի միասնությունը:

Կրիմիևալիստիկական հեղինակագիտական հետազոտության նույնացման խնդիրների շարքում առանձնացվում են հարցերի որոշակի շրջանակ, որոնց լուծմանն ուղղված է հետազոտության քննարկվող տեսակը, և որոնց լուծման անհրաժեշտությունը կարող է ծագել տարբեր քրեական գործերի քննության ընթացքում: Մասնավորապես, անհատական նույնացման խնդիրների մեջ կարելի է առանձնացնել հեղինակին պարզելու նպատակով հայոց լեզվով կատարված տեքստերի կրիմիևալիստիկական հետազոտության հետևյալ հարցերը՝

ա) *հայոց լեզվով կատարված մեկ կամ մի քանի տեքստերի կամ դրանց մասերի (առանձին հատվածների) որոշակի հեղինակին (հեղինակներին) պարզելը,*

բ) *հայոց լեզվով կատարված տեքստի ենթադրվող հեղինակի բացառումը,*

գ) *այն հարցի լուծումը, թե հայոց լեզվով կատարված տեքստը կազմողը (կատարողը) արդյոք միաժամանակ տեքստի հեղինակն է, թե՞ ոչ,*

դ) *արդյո՞ք վիճելի տեքստը պատկանում է տեքստերի այն խմբին, որոնց հեղինակը հայտնի է,*

ե) *այլ հարցեր, որոնք կարող են լուծվել կոնկրետ գործերի առանձնահատկությունների ելնելով:*

Վերը թվարկված հարցերի լուծումը հնարավոր է գրավոր և բանավոր խոսքի հատկանիշների ուսումնասիրության և գնահատման պարագայում, որոնք կրիմիևալիստիկական իդենտիֆիկացման գործընթացում հանդես են գալիս որպես իդենտիֆիկացման հատկանիշներ: Այս առումով հեղինակին պարզելու նպատակով հայոց լեզվով կատարված տեքստերի հեղինակի իդենտիֆիկացումն իրականացվում է հայերեն գրավոր և բանավոր խոսքի ընդհանուր և մասնավոր հատկանիշների հետազոտությամբ:

Գրավոր տեքստերի դատական հեղինակագիտական հետազոտության նույնացման հետ կապված խնդիրների մյուս

խումբն են կազմում *հեղինակի խմբային (սոցիալական) պատկանելության որոշման* կամ, այսպես կոչված, *դասակարգման խնդիրները*: Ընդ որում, դասակարգման խնդիրների լուծման անհրաժեշտությունը կարող է ծագել հատկապես այն դեպքում, երբ գործում առկա է ընդամենը վիճելի տեքստը, և տեքստերի համեմատական մոլշներ չեն կարող ներկայացվել փորձագետին, օրինակ՝ գործով կասկածյալների բացակայության պատճառով¹³: Մեկ օրինակով հեղինակագիտական հետազոտության ենթակա տեքստեր կարող են լինել, օրինակ, սպառնալիք պարունակող նամակները, գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ անանուն կամ կեղծ հաղորդագրությունները և այլն:

Բացի այդ, դասակարգման խնդիրների լուծման անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել նաև վիճելի տեքստերի և համեմատական մոլշների հատկանիշների անհապատասխանությամբ, կամ եթե տեքստում արտահայտված գրավոր կամ բանավոր խոսքի հատկանիշները բավարար չեն դրա հեղինակին նույնացնելու համար:

Ինչպես հայտնի է, կրիմիևալիստիկայում առանձնացվում են իդենտիֆիկացվող և իդենտիֆիկացնող օբյեկտների ընդհանուր և մասնավոր հատկանիշները, որոնք նույնացման խնդիրների լուծման համար համեմատվում են, և ընդհանուր ու մասնավոր հատկանիշների միասնության համընկնման դեպքում հաստատվում է օբյեկտների անհատական-որոշակի նույնությունը: Այն դեպքում, երբ իդենտիֆիկացման խնդրի լուծման համար մասնավոր հատկանիշները համարվում են ոչ բավարար, իդենտիֆիկացման խնդրի որոշումը սահմանափակվում է այդ օբյեկտը նույնասես օբյեկտների խմբի մեջ ընդգրկելով, այսինքն՝ օբյեկտի խմբային պատկանելության որոշումով կամ խմբային իդենտիֆիկացմամբ¹⁴, կամ տրվում է հավանական հետևություն հետազոտվող օբյեկտների

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

նույնության կամ տարբերության մասին: Վերջին դեպքում անհրաժեշտ է օբյեկտների ընդհանուր հատկանիշների ամբողջության համընկում:

Նույնը վերաբերում է նաև դատական հեղինակագիտական հետազոտությանը. հեղինակի խոսքային վարքագծի մասնավոր հատկանիշների հետազոտությամբ պարզվում է վիճելի տեքստի կոնկրետ հեղինակը, իսկ ընդհանուր հատկանիշների հետազոտությամբ՝ խմբային (սոցիալական) պատկանելությունը, այսինքն՝ սոցիալական այն խումբը, որին պատկանում է հեղինակը: Ընդ որում, այս դեպքում հեղինակի խոսքի հատկանիշները հետազոտելիս հաշվի են առնվում նրա բարբառի և սոցիոլեկտի հատկանիշները¹⁶:

Եթե անհատական իդենտիֆիկացման խնդրի լուծմամբ փորձագետը պատասխանում է այն հարցին, թե «Ո՞վ է վիճելի տեքստի հեղինակը», ապա խմբային իդենտիֆիկացման խնդրի դեպքում փորձագետին ներկայացվում է՝ «Ի՞նչ սոցիալական խմբի է պատկանում վիճելի տեքստի հեղինակը» հարցը:

Պետք է մշել, որ գրականության մեջ հեղինակի խմբային պատկանելության որոշման կամ դասակարգման խնդրի լուծումը անվանվում է հեղինակի անձի նկարագրություն (կերպարում) կամ «խոսքային պատկերում»¹⁶: Ընդ որում, առանձնացվում են հեղինակի անձի նկարագրության երկու խմբեր՝ ա) սոցիալ-լեզվաբանական, որի մեջ մտնում է նաև անձի սոցիալ-բարբառային նկարագրությունը, բ) հոգեբանական, որը վերաբերում է հեղինակի հոգեբանական-լեզվաբանական նկարագրությանը:

Առաջին խմբի շրջանակներում հեղինակի անձի նկարագրությունը տրվում է՝ ելնելով նրա կրթական մակարդակից և լեզվի տիրապետելու ունակությունից: Այս խմբի մեջ են մտնում նաև հեղինակի խոսքի բար-

բառային հատկանիշների հիման վրա նրա լեզվական մշակույթի ծագման վայրի և դրա փոփոխության ուսումնասիրությունը:

Հեղինակի հոգեբանական-լեզվաբանական նկարագրությունը նրա տարիքի, սեռի, հոգեբանության, առողջական վիճակի նկարագրությունն է¹⁷:

Հարկ է նկատել, որ քննչական և դատական մարմինների պրակտիկայում փորձագետների կողմից տրված եզրակացությունները հեղինակի անձի նկարագրությունների կամ, այսպես կոչված, «խոսքային պատկերի» վերաբերյալ կարող են ունենալ ավելի շատ տակտիկական մշանակություն, քան ապացուցողական արժեք¹⁸: Դրանք թույլ են տալիս կառուցել քննչական վարկածներ վիճելի տեքստի հեղինակի վերաբերյալ, նեղացնել կասկածվող անձանց շրջանակը՝ վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն տալով քննությունն իրականացնելու որոշակի անձանց նեղ շրջանակի նկատմամբ, բարձրացնելով նաև քննության որակն ու արդյունավետությունը:

Հեղինակին պարզելու նպատակով հայոց լեզվով կատարված տեքստերի կրիմինալիստիկական հեղինակագիտական հետազոտության դասակարգման կամ խմբային իդենտիֆիկացման խնդիրների մեջ են մտնում նաև տեքստի հեղինակի տարիքի, սեռի, կրթության, մասնագիտության, մայրենի լեզվի, զբաղմունքի տեսակի, լեզվական հմտությունների ձևավորման տեղի, մշտական բնակության վայրի, ազգային պատկանելության և այլ հանգամանքների պարզումը: Այսինքն՝ այս դեպքում փորձագետի խնդիրն է որոշել մարդկանց այն տարիքային, սեռային, կրթական, աշխարհագրական և այլ սոցիալական խումբը, որին պատկանում է վիճելի տեքստի հեղինակը:

Հայոց լեզվով կատարված տեքստերի հեղինակի պատկանելության պարզումը այս կամ այն սոցիալական խմբին իրականացվում է՝ ելնելով նրա կրթական մակարդակից, մասնագիտությունից, սոցիալ-ժա-

գումնաբանական առանձնահատկություններից, որոնք իրենց արտահայտությունն են գտնում վիճելի տեքստում՝ արտահայտված գրավոր կամ բանավոր խոսքի հատկանիշների միջոցով:

Յեղիմակի խմբային պատկանելության որոշման հարցում էական նշանակություն ունեն անձի խոսքային վարքագծի այն հատկանիշները, որոնք բնութագրում են հեղինակի սոցիալական դերը հասարակական հարաբերություններում: Անձի գրավոր խոսքի առանձնահատկությունները անմիջականորեն կապված են նրա այն դերի հետ, որը նա իրականացնում է հասարակական հարաբերություններում: Ընդգրկվելով տարբեր սոցիալական հարաբերությունների մեջ և իրականացնելով տարբեր դերեր՝ անձը ձեռք է բերում յուրաքանչյուր սոցիալական դերին համապատասխան բառապաշար, սոցիալական ոճական ընդհանուր հատկանիշներ, ինչն էլ հիմք է հանդիսանում անձի խմբային պատկանելության որոշման համար: Դա բացատրվում է նրանով, որ սոցիալիզացիայի գործընթացները էականորեն ազդում են անձի գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկությունների վրա¹⁹: Սոցիալ-լեզվաբանական գործոնների ուժով հեղինակի խոսքային վարքագծի՝ քերականական, բառապաշարային, շարահյուսական և այլ հատկանիշները կրում են էական փոփոխություններ²⁰: Ընդ որում, սոցիալական դերի հիման վրա անձի խմբային պատկանելության որոշման հետ սերտորեն կապված է նաև մասնագիտական խոսքի (պրոֆեսիոնալիզմի), ժարգոնաբանության (ժարգոնիզմի), բարբառայնության (դիալեկտիզմի) և խոսքի այլ հատկանիշների հիման վրա անձի խմբային պատկանելության որոշումը:

Յեղիմակի խմբային պատկանելության որոշման խնդրին է վերաբերում առաջին հերթին տեքստի հեղինակի կրթական մակարդակի և մասնագիտության պարզումը: Մտավոր զարգացման աստիճանը որոշվում է մտքերն արտահայտելու լրիվությամբ,

բառապաշարի հարստությամբ, խոսքային հնարքներով: Բանավոր խոսքի դեպքում կարևոր նշանակություն ունի հատկապես արտասանական ընդունված տարբերակների օգտագործումը:

Տեքստում որոշակի մասնագիտական բառերի հաճախակի օգտագործումը կարող է վկայել հեղինակի կոնկրետ մասնագիտությանը պատկանելու, իսկ հեղինակի գրավոր խոսքի մշակվածության բարձր աստիճանը՝ նրա գրագետ լինելու մասին: «Գրագետ, ճիշտ ձևակերպված գրավոր խոսքը մարդու գիտելիքների, մտավոր զարգացման, բարեկրթության վկայությունն է»²¹:

Յեղիմակի խմբային իդենտիֆիկացման խնդրի լուծման գործում կարևոր նշանակություն ունի *գործառական ոճական հատկանիշների* հետազոտությունը: Գործառական ոճերը հասարակական կյանքում տարբեր գործառնությունների ժամանակ կիրառվող ոճերն են, որոնք դասակարգվում են ըստ հասարակական կյանքում լեզվի իրականացրած գործառնությունների: Գործառական ոճի շրջանակներում առանձնացվում են դրա հետևյալ տեսակները՝ ա) գիտական, բ) պաշտոնական, գ) հրապարակախոսական, դ) առօրյա-կենցաղային, ե) գեղարվեստական²²: Ելնելով տեքստում օգտագործված ոճական առանձնահատկություններից՝ այն կարելի է դասել գործառական ոճի այս կամ այն տեսակին:

Տեքստում առկա որոշակի բարբառային բառերի վերլուծությամբ կարելի է պարզել հեղինակի ծննդավայրը՝ նրա գրավոր և բանավոր խոսքի հատկանիշների ձևավորման տեղը, կամ հեղինակի մշտական բնակության վայրը: Բանավոր խոսքի դեպքում այդ հատկանիշները լրացվում են նաև առոգանությամբ՝ հնչերանգով, շեշտադրումով, խոսքի թափով և այլն²³:

Դասակարգման խնդիրներին են վերաբերում նաև հեղինակի մայրենի լեզվի պարզումը: Ինչպես արդեն նշել ենք, մայ-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

րենի լեզու ասելով՝ ի նկատի է առնվում այն լեզուն, որն անձը յուրացրել է իր մանկության ընթացքում՝ ծնողների կամ մեծահասակների լեզվի ընդօրինակման ճանապարհով, որն էլ նրա հաղորդակցության, անհատականության ձևավորման և մտքերի ձևակերպման առաջին հիմնական միջոցն է²⁴: Որպես կանոն, հեղինակի մայրենի լեզվին տիրապետելու աստիճանը ավելի բարձր է լինում, քան որևէ այլ լեզվի տիրապետելու աստիճանը: Այս հանգամանքը կարող է օգտագործվել հեղինակի մայրենի լեզվի որոշման համար:

Չեղինակի ազգային պատկանելության մասին կարելի է հետևություններ անել՝ ելնելով նրա խոսքի դարձվածաբառապաշարային, շարահյուսական, քերականական, իմաստաբանական առանձնահատկություններից: Բանավոր խոսքի դեպքում ազգային պատկանելությունը կարող է որոշվել խոսողի առոգանության, մասնավորապես խոսքի հնչերանգի հատկանիշներից ելնելով, որն արտահայտվում է ձայնի բարձրացմամբ և իջեցմամբ, հատկապես երբ խոսողը զգացնում է արտահայտում²⁵:

Ինչ վերաբերում է դատական հեղինակագիտական փորձաքննության *իրադրական-դիագնոստիկական խնդիրներին*, ապա, ինչպես արդեն նշել ենք, այդ խնդիրներն էականորեն տարբերվում են այդ փորձաքննության նույնացման խնդիրներից և ուղղված են հեղինակին իդենտիֆիկացնելու հետ չկապված մի շարք հարցերի լուծմանը:

Ինչպես հայտնի է, կրիմինալիստիկական դիագնոստիկական ընդհանրապես ուսումնասիրում է իրադրություններ, երևույթներ, գործընթացներ, որոնք կապված են հանցագործության կատարման եղանակի, կիրառված միջոցների, հետքերի առաջացման մեխանիզմի, հանցագործության հետևանքների և գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանք-

ների ուսումնասիրման հետ: Նույնը վերաբերում է նաև հայոց լեզվով կատարված տեսքերի հեղինակագիտական փորձաքննության ընթացքում իրականացվող դիագնոստիկական հետազոտություններին, որի ընթացքում ուսումնասիրվում են հանցագործության կատարման պրոցեսում հայերեն խոսքի կիրառման ներքին և արտաքին պայմանները, գրավոր տեքստի կազմման մեխանիզմը և հանգամանքները, դրա կապը հանցավոր դեպքի և հանցավոր իրադրության հետ: Այլ կերպ ասած՝ հեղինակագիտական դիագնոստիկական հետազոտության հիմնական խնդիրը այն գործոնների բացահայտումն է, որի պայմաններում կատարվել է վիճելի գրավոր տեքստը:

Տեքստերի հեղինակագիտական դիագնոստիկական հետազոտություններում էական նշանակություն ունեն վիճելի տեքստի *իրադրական ոճի* հատկանիշները: Իրադրական ոճը պայմանավորված է այն իրադրությամբ, այն իրավիճակով և պայմաններով, որում իրականացվում է հաղորդակցությունը կամ հեղինակի խոսքի շարադրումը: Այստեղ կարևոր նշանակություն ունեն հաղորդման նպատակը, հաղորդվող նյութի նկատմամբ վերաբերմունքը, հաղորդողի և ընկալողի հարաբերությունները: Լեզվաբանության մեջ ոճի այս տեսակների շարքում առանձնացվում են հանդիսավոր, պաշտոնական, երգիծական, բանավիճային, խրատական և այլ տարատեսակները:

Խոսքը կարող է էական ազդեցություններ կրել խոսքային միջավայրում: Խոսողի սեռը, տարիքը, խոսողների միջանձնային հարաբերությունները, ինչպես նաև խոսակցության թեման և տեղը հաղորդակցության այն հիմնական գործոններն են, որոնք ազդում են խոսքային իրադրության վրա²⁶:

Իրադրական դիագնոստիկային են վերաբերում փաստաթղթի տեքստի կատարման իրադրության, հետազոտվող խոսքային հաղորդակցության ներքին և արտա-

քին պայմանների, տեքստի կազմման ժամանակ հեղինակի կողմից համապատասխան ոճական կամ իմաստային տարբերակների ընտրության հանգամանքների պարզումը (այդ թվում՝ գրավոր խոսքի դիտավորյալ խեղաթյուրման հատկանիշների, հեղինակի արտասովոր հոգեֆիզիոլոգիական վիճակի, տեքստի կազմման պահին արտաքին արտասովոր պայմանների պարզումը և այլն)²⁷:

Այն դեպքում, երբ հեղինակագիտական փորձաքննությունն իրականացվում է պարզելու համար հեղինակի հոգեֆիզիոլոգիական վիճակը գրելու պահին, նշանակվում է համալիր դատահոգեբանական և դատահեղինակագիտական փորձաքննություն:

Տեքստերի դատական հեղինակագիտական կրիմինալիստիկական հետազոտության դիագնոստիկական խնդիրների շրջանակներում կարող են լուծվել այնպիսի հարցեր, ինչպիսիք են, օրինակ՝

ա) *հեղինակի կողմից գրավոր կամ բանավոր խոսքի հատկանիշների դիտավորյալ խեղաթյուրման հատկանիշների պարզումը*²⁸,

բ) *տեքստի կազմման պահին հեղինակի հոգեֆիզիոլոգիական վիճակի պարզումը*,

գ) *այն հարցերի պարզումը, թե փաստաթուղթը կատարվել է թելադրությամբ, թե՞ արտագրվել է բնօրինակից*,

դ) *թելադրության դեպքում քանի՞սն են եղել թելադրողները, արդյո՞ք անձն իր ազատ կամքով է գրել թելադրությունը, թե՞ հարկադրաբար*,

ե) *թելադրությունը կատարվել է հեղի-*

նակի ազատ խոսքի՞, թե՞ նախապես մշակված տեքստը կարդալու եղանակով,

զ) *տեքստը մեկ կամ մի քանի հեղինակների կողմից կազմված լինելու հանգամանքի պարզումը (համահեղինակության հատկանիշների պարզումը) և այլն*:

Իհարկե, դիագնոստիկական խնդիրներին առնչվող հարցերը սպառնիչ թվարկել հնարավոր չէ: Ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից և առանձնահատկություններից՝ փորձագետին կարող են առաջադրվել գրավոր տեքստերի հեղինակագիտական դիագնոստիկական հետազոտություններին առնչվող բազմաբնույթ այլ հարցեր:

Չեղինակին պարզելու նպատակով հայտ լեզվով կատարված տեքստերի կրիմինալիստիկական հետազոտության դիագնոստիկական խնդիրների լուծման համար հետազոտության ենթակա օբյեկտ են համարվում գրավոր և բանավոր խոսքի ընդհանուր և մասնավոր լեզվական ու մտավոր հատկանիշները: Այդ հատկանիշների հետազոտությունը հնարավորություն է տալիս լուծելու ոչ միայն իդենտիֆիկացման, այլ նաև դիագնոստիկական խնդիրները:

Անփոփելով նշենք, որ դիագնոստիկական հետազոտությունը հեղինակագիտական փորձաքննության առավել բարդ և կարևոր ուղղություններից է, որը պահանջում է լեզվաբանության, հոգեբանության, հոգեբանական լեզվաբանության, սոցիալական լեզվաբանության և այլ բնագավառների հատուկ գիտելիքների կիրառում:

¹ Տե՛ս **Kniffka H.**, Working in Language and Law: a German Perspective, New York, 2007, էջ 9-11:

² Տե՛ս **Баранов Ю.Н.**, Теоретические основы применения лингвистических знаний в криминалистике при производстве фонокопических и автороведческих экспертиз // Диссертация... канд. юрид. наук, Челябинск, 2004, էջ 83:

³ Տե՛ս **Вул С.М., черняк Л.М. и др.**, Вопросы судебно-автороведческой диагностической экспертизы, К., 1984, էջ 3:

⁴ Տե՛ս **Гомон Т.В.**, Судебно-автороведческая экспертиза текстов документов, составленных с намеренным искажением письменной речи. Автореф... канд. юрид. наук, М., 1992, էջ 14:

- ⁵ Տե՛ս **Grant T., Baker K.**, Identifying Reliable, Valid Markers of Authorship: a Response to Chaski, "Forensic Linguistics: International Journal of Speech, Language and the Law", Birmingham, 2001, Volume 8, Number 1, էջ 66-80:
- ⁶ Տե՛ս **Белкин П.С.**, Криминалистическая энциклопедия, М., 2000, էջ 12-13; **Комиссаров А.Ю.**, Криминалистическое исследование письменной речи, М., 2000, էջ 11-15:
- ⁷ Տե՛ս **Корухов Ю.Г.**, Криминалистическая диагностика при расследовании преступлений, М., 1998, էջ 65-66:
- ⁸ Խմբային (սեռային) պատկանելության որոշման մասին մանրամասն տե՛ս **Օհանյան Լ.Պ.**, Կրիմինալիստիկական Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2007, էջ 57-63:
- ⁹ Տե՛ս **Champod C.**, Overview and Meaning of ID. In **Siegel J.A., Saukko P.J., Knupfer G.C. (Eds.)**, Encyclopedia of Forensic Sciences, New York, 2000, Volume 3, էջ 1077:
- ¹⁰ Տե՛ս **Օհանյան Լ.Պ.**, Կրիմինալիստիկական Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2007, էջ 63-64:
- ¹¹ Տե՛ս Криминалистика: Учебник / **Под ред. Е.П. Ищенко.** М., 2000, էջ 54:
- ¹² Տե՛ս **Терзиев Н.В.**, Идентификация и определение родовой (групповой) принадлежности. Лекции по криминалистике, М., 1961, էջ 10-17:
- ¹³ Տե՛ս **Grant T.**, Approaching Questions in Forensic Authorship Analysis. In **Gibbons J., Turell T.M. (Eds.)**, Dimensions of Forensic Linguistics, Amsterdam, 2008, էջ 215-229:
- ¹⁴ Տե՛ս Теория и практика лингвистического анализа текстов СМИ в судебных экспертизах и информационных спорах: Сборник материалов научно-практического семинара. Часть 2., **Под ред. проф. М.В. Горбаневского**, М., 2002, էջ 121:
- ¹⁵ Լեզվի օգտագործման սոցիալական տարբերությունները և տարբեր հասարակական խմբերի միջև լեզվական հաղորդակցության առանձնահատկություններն ուսումնասիրում է սոցիալական լեզվաբանությունը (տե՛ս **Chambers J.K.**, Sociolinguistic Theory: Variation and Its Social Significance, Toronto, 1995, էջ 2):
- ¹⁶ Տե՛ս **Gibbons J.P.**, Forensic Linguistics: an Introduction to Language in the Justice System, Oxford, 2003, էջ 307:
- ¹⁷ Տե՛ս **Grant T.**, նշված աշխատ., էջ 223-224:
- ¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 224:
- ¹⁹ Տե՛ս **Moosmiller S.**, Phonological Variations in Speaker Identification, "Forensic Linguistics...", Birmingham, 1997, Volume 4, Number 1, էջ 29-47; **Леонтьев А.А., Шахнарович А.М., Батов В.И.**, Речь в криминалистике и судебной психологии, М., 1977, էջ 12-13:
- ²⁰ Տե՛ս **Foulkes P., Barron A.**, Telephone Speaker Recognition amongst Members of a Close Social Network, "Forensic Linguistics...", Birmingham, 2000, Volume 7, Number 2, էջ 180-198:
- ²¹ **Չարրիեյան Վ.**, Գրավոր խոսք, Եր., 2007, էջ 9:
- ²² Ոճերի դասակարգման մասին մանրամասն տե՛ս **Եզեկյան Լ.Կ.**, Ոճագիտություն, Եր., 2006, էջ 29:
- ²³ Տե՛ս **Օհանյան Լ.Պ.**, Կրիմինալիստիկական Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2007, էջ 371:
- ²⁴ Տե՛ս **Вул С.М., Черняк Л.М., Гулак А.Т. и др.**, նշված աշխատ., էջ 7:
- ²⁵ Տե՛ս **Օհանյան Լ.Պ.**, Կրիմինալիստիկա, Եր., 2004, էջ 458-459:
- ²⁶ Տե՛ս **Buhr R.H., Pass K.J.**, The Influence of Style-Shifting on Voice identification, "Forensic Linguistics...", London, 1996, Volume 3, Number 1, էջ 33:
- ²⁷ Տե՛ս **Вул С.М., Черняк Л.М. и др.**, նշված աշխատ., էջ 3; Теория и практика лингвистического анализа текстов СМИ..., **Под ред. проф. М. В. Горбаневского**, М., 2002, էջ 122:
- ²⁸ Տե՛ս **Гомон Т.В.**, նշված աշխատ., էջ 14:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՆՂԱՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԿԱՆ ԿՆՔՎԱԾ ԳՅՅ-Ի ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՂԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արման ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրոպական միության (ԵՄ) պայմանագրային հարաբերությունների նախապատմությունը սկսվում է 1996 թվականից, երբ Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքվեց Գործընկերության և համագործակցության համաձայնագիր (այսուհետև նաև Համաձայնագիր): Այն ուժի մեջ է մտել 1999թ. մայիսի 31-ին և կնքվել է տասը տարի նախնական ժամկետով: Սակայն սույն Համաձայնագրի 94-րդ հոդվածի համաձայն, եթե դրա գործողության ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ կողմերից որևէ մեկը մյուս կողմին գրավոր ծանուցում չներկայացնի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին, ապա դրա գործողության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի ամեն տարի: Քանի որ կողմերից որևէ մեկը հանդես չի եկել նման նախաձեռնությամբ, ուստի Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը շարունակում է մնալ Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունների կարգավորման միակ իրավական ձևաչափը: Համաձայնագրի գործողությունը չի խոչընդոտում նաև այն հանգամանքը, որ 2009թ. դեկտեմբերի 1-ին ուժի մեջ մտած Լիսաբոնի պայմանագիրը վերացրել է Եվրոպական ընկերակցությունները, քանի որ իրականում Եվրոպական միությունը կլանել է Եվրոպական ընկերակցություններին և այժմ հենց նա է հանդիսանում Եվրոպական ընկերակցությունների իրավահա-

ջորդը, իսկ իրավահոջորդությունը նշանակում է նաև այն իրավունքների և պարտականությունների փոխանցում, որոնք բխում են միջազգային իրավունքի այլ սուբյեկտների հետ Եվրոպական ընկերակցությունների կնքած միջազգային փաստաթղթերից: Փաստորեն, ներկայումս Հայաստանի Հանրապետության հետ կնքած Գործընկերության և համագործակցության համաձայնագրի մյուս կողմում հանդես են գալիս Եվրոպական միությունն ու անդամ պետությունները:

Բավականին հետաքրքրական է խնդրո առարկա համաձայնագրի դրույթների ուղղակի գործողության հնարավորության հարցը: Սակայն, նախքան այս հարցի քննարկմանը անցնելը փորձենք հասկանալ, թե ինչ տեղ են զբաղեցնում երրորդ պետությունների հետ հարաբերություններում Եվրոպական միության կնքած միջազգային համաձայնագրերը այս ինտեգրացիոն կազմավորման իրավական համակարգում, ինչ պետք է Եվրոպական միության իրավունքի իմաստով հասկանալ՝ դրույթի ուղղակի գործողություն ասելով, և ինչ չափանիշներ են առկա Եվրոպական միության կողմից երրորդ պետության հետ կնքած միջազգային համաձայնագրի դրույթների ուղղակի գործողության համար:

Եվրոպական միության կնքած միջազգային համաձայնագրերը Միության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Այս իրողությունը հաստատվել է Եվրոպական ընկերակցությունների դատարանի կողմից *Haegeman*-ի գործում՝ հիմք ընդունելով Եվրոպական ընկերակցության հիմնադրման մասին պայմանագրի 300-րդ հոդվածի 7-րդ մասը, համաձայն որի այդ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆԵ

հողվածի պայմաններին համապատասխան կնքված համաձայնագրերը պարտադիր են Եվրոպական ընկերակցության ինստիտուտների և անդամ պետությունների համար¹: «Միջազգային իրավունքի լեզվով» ասած Եվրոպական միությունում դրսևորվում է մոնիստական մոտեցումը այն հարցի վերաբերյալ, թե ինչպես են միջազգային իրավական նորմերը ներթափանցում վերջինիս իրավական համակարգ, քանի որ, ինչպես բխում է վերոգրյալից, միջազգային համաձայնագրի կնքումը արդեն ինքնին իրավաբանորեն պարտադրում է Եվրոպական միությանը, և դրա համար այլ ձևականություն չի պահանջվում: Ընդ որում նշենք, որ Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը կնքվել է պատշաճ կարգով, քանի որ այն վավերացվել է ինչպես Եվրոպական միության, այնպես էլ անդամ պետությունների կողմից՝ նրանց ներպետական ընթացակարգերին համապատասխան: Եվրոպական միության կողմից այդ համաձայնագիրը վավերացվել է Եվրոպական միության խորհրդի համապատասխան որոշմամբ²:

Այն փաստը, որ Եվրոպական միության կնքած միջազգային համաձայնագրերը Միության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, ինքնին վկայում է այն մասին, որ այդ համաձայնագրերը կարող են ազդեցություն ունենալ նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավաբանական կարգավիճակի վրա՝ նրանց համար առաջացնելով իրավունքներ և սահմանելով պարտականություններ, քանի որ, ինչպես Եվրոպական ընկերակցությունների դատարանն է սահմանել, «Ընկերակցության իրավունքի սուբյեկտներ հանդիսանում են ոչ միայն անդամ պետությունները, այլ նաև նրանց քաղաքացիները»³: Ա-

վելին, Եվրոպական ընկերակցությունների դատարանի պրակտիկայի համաձայն՝ Եվրոպական միության կողմից երրորդ պետությունների հետ հարաբերություններում կնքած միջազգային համաձայնագրերը կարող են ազդեցություն ունենալ ոչ միայն անդամ պետությունների քաղաքացիների իրավաբանական կարգավիճակի վրա, այլ նաև համաձայնագրի կողմ հանդիսացող երրորդ պետության քաղաքացիների իրավաբանական կարգավիճակի վրա⁴: Այս հանգամանքը նշանակում է, որ Եվրոպական միության իրավական համակարգի սուբյեկտներ են նաև երրորդ պետությունների քաղաքացիները:

Եվրոպական միության իրավական համակարգի բաղկացուցիչ մաս հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավաբանական կարգավիճակի վրա ազդելու և նրանց համար իրավունքներ և պարտականություններ առաջացնելու Եվրոպական միության կողմից կնքված միջազգային համաձայնագրերի հատկությունը Եվրոպական միության իրավունքում հայտնի է ուղղակի գործողության (direct effect) սկզբունք անվանումով: Ռեզուլտատի գործողության սկզբունքը Եվրոպական միության իրավական համակարգի ինքնատիպությունը ընդօրոշ և դրա բուն էությունն արտահայտող հասկացություններից մեկն է: Այն ձևավորվել է ինտեգրացիոն գործընթացների խորացմանը զուգահեռ՝ Եվրոպական ընկերակցությունների դատարանի կողմից: Որոշ հեղինակներ այնքան են կարևորում այս սկզբունքի տրամաբանության հիմքում ընկած կոնցեպցիան, որ երբեմն այն անվանում են ուղղակի գործողության դոկտրին⁵:

Եվրոպական միության իրավունքի մասնագիտական գրականության մեջ, ելնելով Եվրոպական ընկերակցությունների դատարանի նախադեպային իրավունքից, ընդունված է «ուղղակի գործողություն» բառակապակցությունը հասկանալ լայն և նեղ իմաստներով:

Լայն իմաստով ԵՄ իրավունքի նորմե-

րի ուղղակի գործողությունը վերջիններիս վկայակոչվելու հատկությունն է անդամ պետությունների ազգային դատական մարմիններում: Այս ըմբռնումը հիմնականում բխեցնում են հիմք ընդունելով *Van Gend en Loos* գործը⁸:

Նեղ հմաստով ուղղակի գործողությունը եՄ իրավունքի նորմերի հատկությունն է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար առաջացնելու դատական պաշտպանության ենթակա իրավունքներ և պարտականություններ:

Եվրոպական միության իրավունքի մասնագիտական գրականության մեջ և Եվրոպական ընկերակցությունների դատարանի նախադեպային որոշումներում այս հասկացությունը հանդիպում է նաև ուղղակի կիրառելիության (*direct applicability*) սկզբունք կամ դոկտրին անվանումներով⁹: Այս մոտեցումը իր արտահայտությունն է գտել ինտեգրացիայի սկզբնական շրջանում հատկապես Եվրոպական ընկերակցությունների դատարանի կողմից քննած և լուծում ստացած մի շարք գործերի կապակցությամբ կայացված որոշումներում¹⁰: Սակայն միտումը աստիճանաբար փոխվեց, և այժմ թե՛ Եվրոպական ընկերակցությունների դատարանը, թե՛ գիտական շրջանակները ֆիզիկական և իրավաբանական անձանց համար իրավունքներ և պարտականություններ առաջացնելու Եվրոպական միության իրավունքի նորմերի հատկությունը բնորոշելու համար առավելապես օգտագործում են «ուղղակի գործողություն» բառակապակցությունը: Այս մոտեցումը, թերևս, ավելի ընդունելի է, քանի որ ակտի ուղղակի կիրառելիություն հասկացությունը վերաբերում է այս կամ այն ակտի իմպլեմենտացմանը անդամ պետությունների իրավական համակարգեր: Այսինքն, այս կամ այն ակտի ուղղակի կիրառելիությունը նշանակում է, թե արդյոք ակտը ընդունման պահից անդամ պետության իրավական համակարգի բաղկացուցիչ մաս է, թե դրա համար անհրաժեշտ է ներպետական մակարդակում համապա-

տասխան իմպլեմենտացիոն ակտի ընդունում: Բացի այդ՝ ակտի ուղղակի կիրառելիությունը դեռևս չի նշանակում դրա ուղղակի գործողություն, որը, ինչպես ստորև կտեսնենք, կախվածության մեջ է դրվում որոշակի չափանիշների բավարարելու համագամանքից¹¹:

Եվրոպական ընկերակցությունների դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Եվրոպական միության իրավունքի նորմերի ուղղակի գործողության սկզբունք բնորոշ է ոչ միայն դրանց ամրագրման ինքնուրույն աղբյուր հանդիսացող հիմնադիր պայմանագրերին¹², կանոնակարգերին¹³, դիրեկտիվներին¹⁴ և որոշումներին¹⁵, այլ նաև Եվրոպական միության՝ երրորդ պետությունների հետ կնքած միջազգային համաձայնագրերին: Ինչպես վերը նշված մյուս ակտերի, այնպես էլ միջազգային համաձայնագրերի դրույթները կարող են ուղղակի գործողություն ունենալ, եթե բավարարում են որոշակի չափանիշների, որոնց շրջանակը սահմանվել է 1987թ. քննված *Demirel*-ի գործում: Վերջինիս համաձայն՝ «Եվրոպական ընկերակցության կողմից կնքած միջազգային համաձայնագրերի դրույթների ուղղակի գործողության հատկությամբ օժտված լինելու հարցը պարզելու համար անհրաժեշտ է ելնել կնքված միջազգային համաձայնագրի բովանդակությունից, նպատակից և բնույթից: Ավելին, այդպիսի ակտի դրույթը, որին ուղղակի գործողության հատկությամբ օժտելու փաստը հանդիսանում է խնդրո առարկա, պետք է հստակ և ճշգրիտ պարտականություն պարունակի, որի իրականացումը կամ ազդեցությունը կախվածության մեջ չի դրվում հետագա միջոցի ընդունումից»¹⁶: Եվրոպական ընկերակցությունների դատարանի պրակտիկայի համաձայն՝ միջազգային համաձայնագրերի ուղղակի գործողության չափանիշները չեն տարբերվում նաև կախված այն հանգամանքից, թե միջազգային համաձայնագրի որ տեսակի դրույթների ուղղակի գործողության հարցն է օրակարգում դրված¹⁷:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆԵ

Այսպիսով, պարզելով Եվրոպական միության իրավական համակարգում Եվրոպական միության կողմից երրորդ պետությունների հետ հարաբերություններում կնքված միջազգային համաձայնագրերի զբաղեցրած տեղը, դրույթի ուղղակի գործողություն հասկացությունը և Եվրոպական միության կողմից երրորդ պետության հետ կնքված միջազգային համաձայնագրի դրույթների ուղղակի գործողության չափանիշները, այժմ փորձենք վեր հանել Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի դրույթների ուղղակի գործողության հնարավորությունը:

Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի բովանդակության մանրակրկիտ վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ այն պարունակում է դրույթներ, որոնք Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին Եվրոպական միության տարածքում օժտում են որոշակի իրավունքներով: Մասնավորապես, Համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի տարածքում ծագող ապրանքները ընկերակցություն ներկրվում են առանց քանակական սահմանափակումների՝ վնաս չպատճառելով սույն Համաձայնագրի, 14-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածներին»¹⁶:

Բացի այդ՝ Համաձայնագրի 20-րդ հոդվածի համաձայն՝ «հաշվի առնելով յուրաքանչյուր անդամ պետությունում կիրառելի օրենքները, պայմանները և ընթացակարգերը՝ ընկերակցությունը և անդամ պետությունները պետք է ջանքեր գործադրեն, որպեսզի ապահովեն, որ անդամ պետության տարածքում օրինական կերպով աշխատող Հայաստանի քաղաքացիներին

ցուցաբերվող վերաբերմունքը իրենց սեփական քաղաքացիների համեմատությամբ զերծ լինի ցանկացած տեսակի խտրականությունից՝ հիմնական քաղաքացիության գործոնի վրա, կապված աշխատանքի պայմանների, վարձատրության, աշխատանքից ազատելու հետ»¹⁷:

Ավելին, Համաձայնագրի 23-րդ հոդվածի համաձայն՝ «Ընկերակցությունը և անդամ պետությունները պարտավորվում են Հայաստանյան ընկերություններ հիմնադրելու համար ցուցաբերել երրորդ պետություններին ցուցաբերվող վերաբերմունքի համեմատությամբ ոչ պակաս նպաստավոր վերաբերմունք, ինչպես սահմանված է 25-րդ հոդվածի (դ) կետում»¹⁸:

Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի դրույթների ուղղակի գործողության խնդրի ուսումնասիրման անհրաժեշտությունը բարձրացել է հատկապես այն բանից հետո, երբ Եվրոպական ընկերակցությունների դատարանը **Igor Simutenkov-ի գործում** սահմանել է, որ Եվրոպական ընկերակցությունների ու անդամ պետությունների և Ռուսաստանի դաշնության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի¹⁹ 23-րդ հոդվածի 1-ին մասը կարող է ունենալ ուղղակի գործողություն և Ռուսաստանի դաշնության քաղաքացիներին Եվրոպական միության տարածքում օժտել դրանից բխող դատական պաշտպանության ենթակա իրավունքներով: Այդ գործի փաստակազմի համաձայն՝ Ռուսաստանի դաշնության քաղաքացի Իգոր Սիմուտենկովը՝ որպես պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ, աշխատում էր Իսպանիայում՝ Տեներիֆե ֆուտբոլային ակումբում: Իսպանիայի ֆուտբոլի ֆեդերացիան ընդունում է Ընդհանուր Կանոնակարգեր, որոնց դրույթներից մեկը սահմանում է, որ ազգային մրցումների ժամանակ Եվրոպական տնտեսական գոտու մեջ չմտնող երկրնե-

րից կարող են մասնակցել միայն սահմանափակ թվով ֆուտբոլիստներ: Որպեսզի Սիմուտենկովը կարողանա մասնակցել այդ մրցույթներին, նա պետք է ունենա Իսպանիայի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից տրված հատուկ թույլտվություն: Սիմուտենկովը, հիմնվելով 1994թ. Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված Գործընկերության ու համագործակցության համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին մասի վրա փորձեց Իսպանիայի Բարձրագույն դատարանի առջև վիճարկել Ընդհանուր Կանոնակարգերի այդ սահմանափակող դրույթը վերը նշված հոդվածին հակասելու հիմքով: Այդ հոդվածի համաձայն՝ «*հաշվի առնելով յուրաքանչյուր անդամ պետությունում կիրառելի օրենքները, պայմանները և ընթացակարգերը՝ Ընկերակցությունը և անդամ պետությունները պետք է ջանքեր գործադրեն, որպեսզի ապահովեն, որ անդամ պետության տարածքում օրինական կերպով աշխատող Ռուսաստանի քաղաքացիներին ցուցաբերվող վերաբերմունքը իրենց սեփական քաղաքացիների համեմատությամբ զերծ լինի ցանկացած տեսակի խտրականությունից հիմնված քաղաքացիության գործոնի հիման վրա՝ կապված աշխատանքի պայմանների, վարձատրության, աշխատանքից ազատելու հետ*»: Եվրոպական ընկերակցությունների դատարանը, քննելով գործը, եզրակացրեց, որ հիշյալ 23-րդ հոդվածի 1-ին մասին բովանդակությունից հետևում է, որ այն հստակ է, ճշգրիտ ու անպայմանակ և Ռուսաստանի Դաշնության հետ կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի նպատակից բխում է դրա 23-րդ հոդվածի 1-ին մասին ուղղակի գործողության հատկանիշով օժտելը:

Հանգամանքների նման համընկման պարագայում առաջանում է անհրաժեշտություն կատարելու հետևյալ հարցադրումը. արդյո՞ք Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների մի

կողմից և Հայաստանի Հանրապետության միջև մյուս կողմից 1996թ. կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի վերը նշված դրույթները կարող են ունենալ ուղղակի գործողություն և Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին օժտեն Եվրոպական միության տարածքում դատական պաշտպանության ենթակա իրավունքերով: Այս հարցին պատասխանելու համար պետք է փորձել պարզել, թե արդյոք դրանում պարունակվող դրույթները բավարարում են Եվրոպական միության կնքած միջազգային համաձայնագրերի ուղղակի գործողության համար սահմանված չափանիշներին: Այդպիսի չափանիշներ, ինչպես արդեն գիտենք, հանդիսանում են դրույթի հստակ և ճշգրիտ լինելը, անպայմանականությունը, ազգային ինստիտուտացիոն միջոցներից զերծ լինելը և կնքված համաձայնագրի նպատակը:

Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների մի կողմից և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 12-րդ, 20-րդ և 23-րդ հոդվածները բավարար չափով հստակ և ճշգրիտ են, քանի որ դրանց բովանդակությունը երկիմաստ մեկնաբանությունների և անորոշությունների տեղիք չի տալիս:

Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 20-րդ հոդվածի հստակ և ճշգրիտ լինելը հաստատող լրացուցիչ փաստարկ է **Simutenkov-ի և Pokrzeptowicz-Meyer-ի գործերը, որոնցում համանման բովանդակություն ունեցող դրույթի ուղղակի գործողության հարցը քննարկելիս Եվրոպական ընկերակցությունների դատարանը սահմանել է, որ խնդրո առարկա դրույթները հստակ ու ճշգրիտ են**²⁰:

Բացի հստակ և ճշգրիտ լինելուց Եվրոպական ընկերակցության ու անդամ պե-

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆԵ

տությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքած Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 12-րդ, 20-րդ և 23-րդ հոդվածները պետք է լինեն անպայմանական: Սա նշանակում է, որ դրանց կիրառումը և ազդեցությունը չպետք է ենթարկված լինեն ԵՄ ինստիտուտների կամ անդամ պետությունների կողմից հետագա միջոցների ձեռնարկմանը: Նշված հոդվածների բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք չեն պարունակում ԵՄ ինստիտուտների կամ անդամ պետությունների կողմից հետագա միջոցների ձեռնարկման վերաբերյալ վերապահումներ, որոնք կարող են կախվածության մեջ դնել այդ հոդվածների կիրառման և ազդեցության հարցերը:

Ինչպես ցույց է տալիս Եվրոպական ընկերակցությունների դատարանի պրակտիկան Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների մի կողմից և Հայաստանի Հանրապետության միջև կնքած Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 20-րդ հոդվածի ուղղակի գործողությանը չի կարող խորընդոտել նաև դրանում տեղ գտած «հաշվի առնելով յուրաքանչյուր անդամ պետությունում կիրառելի օրենքները, պայմանները և ընթացակարգերը...» բառակապակցությունը: Մասնավորապես, **Igor Simutenkov-ի** գործում Եվրոպական ընկերակցությունների դատարանը գտավ, որ Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված Գործընկերության ու համագործակցության համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին մասը, որը, ընդ որում, ձևակերպված է նույն կերպ, ինչ որ Հայաստանի Հանրապետության հետ կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 20-րդ հոդվածի 1-ին մասը, ունի ուղղակի գործողություն, և այնտեղ տեղ գտած «հաշվի առնելով յուրաքանչյուր

անդամ պետությունում կիրառելի օրենքները, պայմանները և ընթացակարգերը...» բառակապակցությունը չի կարող խոչընդոտել միջազգային համաձայնագրերի դրույթների ուղղակի գործողության չափանիշներին 23-րդ հոդվածի 1-ին մասը բավարարող համարելու համար²¹:

Եվրոպական ընկերակցությունների դատարանը, չնայած գլխավոր փաստաբան Յակոբսի կողմից տրված բացասական եզրակացությանը²², լիովին նույն մոտեցումն է դրսևորել *Pokrzeptowicz-Meyer* գործում՝ սահմանելով, որ Լեհաստանի հետ կնքված Եվրոպական համաձայնագրի 37-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած «հաշվի առնելով յուրաքանչյուր անդամ պետությունում կիրառելի պայմանները և ձևականությունները...» բառակապակցությունը չի խոչընդոտում այդ դրույթի ուղղակի գործողությանը²³: Այս դրույթի բովանդակությունը և ձևակերպված էր նույն կերպ, ինչ որ վերը քննարկված մախորդ երկու համաձայնագրերի դրույթները, և վերաբերում էր Եվրոպական միության աշխատաշուկա Լեհաստանի քաղաքացիների ներթափանցելու իրավունքին :

Այսպիսով, ելնելով Եվրոպական ընկերակցությունների դատարանի պրակտիկայի վերլուծությունից՝ կարող ենք ասել, որն Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների մի կողմից և Հայաստանի Հանրապետության միջև կնքած Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 20-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած «հաշվի առնելով յուրաքանչյուր անդամ պետությունում կիրառելի օրենքները, պայմանները և ընթացակարգերը...» բառակապակցությունը այդ դրույթի ուղղակի գործողության հարցը կասկածի տակ դնող գործոն չի կարող հանդիսանալ:

Եվրոպական միության կողմից երրորդ պետությունների հետ կնքած միջազգային համաձայնագրերի դրույթների ուղղակի գործողության վերջին և թերևս առավել դժվար բավարարելի չափանիշը համա-

ծայնագրի այնպիսի նպատակի առկայությունն է, որից բխում է դրա որոշ դրույթներին ուղղակի գործողության հատկությամբ օժտելու անհրաժեշտությունը: Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 1-ին հոդվածով որպես նպատակներ են հռչակվում կողմերի միջև քաղաքական երկխոսության համար համապատասխան հենքի ստեղծումը, Հայաստանի Հանրապետության ժողովրդավարության ամրապնդմանը, տնտեսությունը զարգացնելուն, շուկայական տնտեսությանն անցնելու ավարտին նպաստելը, կողմերի միջև առևտրին, ներդրումներին և ներդաշնակ տնտեսական կապերին նպաստելը՝ դրանով խթանելով կայուն տնտեսական զարգացմանը, օրենսդրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, գիտական, տեխնոլոգիական և մշակութային համագործակցության համար հիմքի ստեղծումը²⁴: Թվարկված նպատակներից երևում է Եվրոպական միության դրսևորած պահպանողական մոտեցումը Հայաստանի Հանրապետության հետ հարաբերություններում: Դա հատկապես ակնհայտ է դառնում, երբ համեմատական են անցկացնում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության հետ կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրերի նպատակների միջև:

Ռուսաստանի Դաշնության հետ կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը, պետք է խոստովանենք, ավելի հավակնոտ է քան, Հայաստանի Հանրապետության հետ կնքվածը, քանի որ այն, բացի Հայաստանի Հանրապետության հետ կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրով հետապնդվող վերը նշված նպատակներից, որպես նպատակ հռչակում է ապագայում Եվրոպական ընկերակցության և Ռուսաստանի Դաշնության միջև ազատ առևտրային գոտի հիմնադրելու հա-

մար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, որը առավելապես կծածկի բոլոր տեսակի ապրանքների առևտուրը, ինչպես նաև ներառում է պայմանների ստեղծումը՝ ընկերություններ հիմնադրելու ազատության, ծառայությունների միջսահմանային առևտրի և կապիտալի տեղաշարժերի համար²⁵:

Այս պայմաններում, թերևս, կարելի է ենթադրել, որ Եվրոպական ընկերակցությունների դատարանը Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի դրույթների ուղղակի գործողության հարցը պարզելիս, եթե սոսկ այդ համաձայնագրի նպատակով սահմանափակվի, ամենայն հավանականությամբ կմերժի դրա դրույթների վրա հիմնվելու և անդամ պետությունների դատական մարմիններում իրենց իրավունքներն ու շահերը պաշտպանելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հնարավորությունը: Այդ իսկ պատճառով Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի դրույթների ուղղակի գործողության անհրաժեշտությունը հիմնավորելիս պետք է ելնել ոչ միայն այդ համաձայնագրից, այլ նաև Եվրոպական միության կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ իրականացվող ընդհանուր արտաքին քաղաքականությունից: Մասնավորապես, ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է Եվրոպական միության կողմից նախաձեռնված Եվրոպական հարևանության քաղաքականությանը, որի իրականացման գործիքը յուրաքանչյուր մասնակից պետության համար Եվրոպական միության կողմից նրա կարիքները հաշվի առնելով մշակված հատուկ Գործողությունների ծրագիրն է: Դրանք իրենցից երկկողմանի միջազգային համաձայնագրեր չեն ներկայացնում, այլ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆՔ

հանդիսանում են Եվրոպական հարևանության քաղաքականության գործնական իրացումն ապահովելուն ուղղված գործիքներ: Այդպիսի մի ծրագիր նշակվել է նաև ուղղված Հայաստանի Հանրապետությանը, որը մեր երկրի համար կարևոր համարվող առաջնահերթությունների կողքին հռչակում է նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ուժեղացումը Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան²⁶: Եթե Եվրոպական միությունը իրականում հետաքրքրված է մեր երկրում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բարձր մակարդակի ապահովմամբ, ապա պետք է շահագրգռված լինի, որ մեր երկրի քաղաքացիներին տրվի իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության բարձր մակարդակ նաև Եվրոպական միության տարածքում: Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացմանը ուղղված ԵՄ/ՀՀ Գործողությունների ծրագիրը որպես մեղմ իրավունքի աղբյուր կարող է նպաստող դեր ունենալ

Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքած Գործընկերության և համագործակցության համաձայնագրի դրույթների ուղղակի գործողությունը ճանաչելու համար: Մանավանդ Եվրոպական ընկերակցությունների դատարանը բազմիցս իր կողմից քննվող գործերի արդյունքում կայացվող որոշումների հիմքում դրել է մեղմ իրավունքի աղբյուրներ²⁷:

Այսպիսով, Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը պարունակում է դրույթներ, որոնք սահմանում են հստակ և ճշգրիտ պարտականություն և որոնց իրականացումը կամ ազդեցությունը կախվածության մեջ չի դրվում հետագա միջոցի ընդունումից: Միակ չափանիշը, որը կարող է խոչընդոտել այդ համաձայնագրի դրույթների ուղղակի գործողությանը, դրա նվազ հավակնոտ նպատակն է, որը բխեցնելու հարցում առաջարկվում է ելնել ոչ միայն համաձայնագրի նպատակից, այլ նաև՝ որպես մեղմ իրավունքի աղբյուր հանդիսացող Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացմանն ուղղված ԵՄ/ՀՀ Գործողությունների ծրագրից:

¹ St' u case 181/73 *Hageman v. Belgium*, {1974} ECR 449:

² St' u Council and Commission Decision 99/602 of 31 May 1999 on the conclusion of the Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part, {1999} OJ L 239:

³ St' u case C-26/62 *NV Algemene Transporten Expeditie Onderneming van Gend en Loos v. Nederlandse Administratie der Belastingen*, {1963} ECR 13:

⁴ St' u case C-265/03, *Igor Simutenkov v Ministerio de Educacion y Cultura and Real Federacion Espanola de Futbol*, (2005) ECR I-2579 :

⁵ St' u Nigel Foster, *EU Law: Questions and Answers*, 6th edition, New York, Oxford University Press, 2007, էջ 31:

⁶ St' u case C-26/62 *Van Gend en Loos*, {1963} ECR 13 :

⁷ St' u *Marise Cremona and Brunno de Witte*, *EU foreign relations law: constitutional fundamentals*, essays in European law, North America (US and Canada), Hart Publishing, 2008 and case C-12/86 *Meryem Demire v Stadt Schw'nbisch Gm'nd*, {1987} ECR 3719:

⁸ St' u case C-12/86 *Meryem Demirel v Stadt Schw'nbisch Gm'nd*, {1987} ECR 3719:

⁹ St' u Nigel Foster, "EU Law: Questions and Answers", 6th edition, New York, Oxford University Press, 2007, էջ 37:

-
- ¹⁰ St'u case 26/62, *Van Gend en Loos v Netherlands*, {1963} ECR 1:
- ¹¹ St'u case 93/71, *Leonesio v Italian Ministry of Agriculture and Forestry*, {1972} ECR 287:
- ¹² St'u 41/74, *Van Duyn v Home Office*, {1974} ECR 1337:
- ¹³ St'u case 9/70, *Franz Grad v Finanzamt Traunstein*, {1970} ECR 825:
- ¹⁴ St'u case C-12/86 *Meryem Demirel v Stadt Schwäbisch Gmünd*, {1987} ECR 3719, par. 14:
- ¹⁵ St'u cases C-265/03, *Igor Simutenkov v Ministerio de Educacign y Cultura and Real Federacign Española de FOtbol*, (2005) ECR I-2579, C-12/86 *Meryem Demirel v Stadt Schwäbisch Gmünd*, {1987} ECR 3719:
- ¹⁶ St'u article 12 (1) of the Partnership and Cooperation Agreement concluded between the European Community and Member States on the one part and the Republic of Armenia on the other, {1999} OJ L 239/3:
- ¹⁷ St'u article 20 (1) of the Partnership and Cooperation Agreement concluded between the European Community and Member States on the one part and the Republic of Armenia on the other, {1999} OJ L 239/3:
- ¹⁸ St'u article 23 (1) of the Partnership and Cooperation Agreement concluded between the European Community and Member States on the one part and the Republic of Armenia on the other, {1999} OJ L 239/3:
- ¹⁹ St'u OJ 1997, L 327
- ²⁰ St'u cases C-265/03, *Igor Simutenkov v Ministerio de Educacign y Cultura and Real Federacign Española de FOtbol*, (2005) ECR I-2579, par. 22 and C-162/00, *Land Nordrhein-Westfalen v Beata Pokrzepowicz-Meyer*, (2002) ECR I-1049, par. 21:
- ²¹ St'u case C-265/03, *Igor Simutenkov v Ministerio de Educacign y Cultura and Real Federacign Española de FOtbol*, (2005) ECR I-2579, par. 24:
- ²² St'u article by Christine Kaddous, "Effects of International Agreements in the EU Legal Order" in Marise Cremona and Brunno de Witte, "EU foreign relations law: constitutional fundamentals", essays in European law, North America (US and Canada), Hart Publishing, 2008, էջ 302:
- ²³ St'u case C-162/00, *Land Nordrhein-Westfalen v. Beata Pokrzepowicz-Meyer*, (2002) ECR I-1049, par. 23:
- ²⁴ St'u article 1 of the Partnership and Cooperation Agreement concluded between the European Community and Member States on the one part and the Republic of Armenia on the other, {1999} OJ L 239/3:
- ²⁵ St'u article 1 of the **Agreement on partnership and cooperation establishing a partnership between the European Communities and their Member States, of one part, and the Russian Federation, of the other part**, {1997} OJ L 327/3:
- ²⁶ St'u point 3 of EU/ARMENIA ACTION PLAN (), available at 10.03.2010 :
- ²⁷ St'u case C-322/88, *Grimaldi v. Fonds des Maladies Professionals*, (1989) ECR 4407:
-

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԴԱՐՑԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Սառա ՇԻՐԱԶՅԱՆ

ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս

Վերջին տասնամյակներում հաճախակի է քննարկվում այսպես կոչված «գլոբալիզացիա» հասկացությունը իր տարբեր դրսևորումներով: Ժամանակակից այս տերմինը ոչ այլ ինչ է, քան տնտեսական ինտեգրացիայի հին գործընթացը բնորոշող նոր միջոց¹: Այսպես կոչված «տնտեսական գլոբալիզացիան» էապես փոխկապակցված է Բրեթոն Վուդի(Bretton Woods) ինստիտուտների առաջացման հետ, որոնք իրենց հերթին հիմք դրեցին միջազգային տնտեսական երեք հիմնական կառույցների ստեղծմանը²:

Տնտեսական գլոբալիզացիայի զարգացմամբ և Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ/WTO) հիմնադրմամբ առաջացան հակասական խնդիրներ: Բանն այն է, որ ի սկզբանե ԱՀԿ-ի հիմնական մանդատը միջազգային առևտրի ազատականացումն էր՝ հիմնականում սահմանի վրա առևտրային խոչընդոտները նվազեցնելու միջոցով, սակայն ժամանակի ընթացքում ԱՀԿ-ն ընդլայնեց իր գործունեությունը և իր կարգավորման ոլորտ ընդգրկեց մտավոր սեփականության, ծառայությունների առևտրի, առևտրային տեխնիկական խոչընդոտների հետ կապված հարցեր³: ԱՀԿ-ի շրջանակներում գործող վեճերի կարգավորմանը հասցեագրվեցին առողջապահության, սննդի անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված մի շարք նոր խնդիրներ, մինչդեռ ԱՀԿ-ն ստեղծված

չէր նման նոր խնդիրներին հստակ պատասխանելու հնարավորությամբ: Այս վիճահարույց նոր հարցերի շարքում կենտրոնական տեղ գրավեց այսես կոչված ազատ առևտրի և շրջակա միջավայրի պաշտպանության մրցակցության խնդիրը:

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում քննարկելու այսպես կոչված **միջազգային առևտուրն ընդդեմ շրջակա միջավայրի պաշտպանության** բանավեճը, թե ինչպիսի փոխհարաբերության մեջ է գտնվում առևտրի ազատականացումը շրջակա միջավայրի պաշտպանության անհրաժեշտության հրամայականի հետ: Այս նպատակով կքննարկենք շրջակա միջավայրի պաշտպանությանն ոլորտում կիրառվող տնտեսական սակցիաների օրինականության և արդյունավետության հիմնահարցերը:

Այս առումով անհրաժեշտ է հասկանալ ԱՀԿ-ի դերը առևտրի շարունակական ազատականացման հարցում, ինչպես նաև ուսումնասիրել, թե ինչպես և երբ կարելի է սահմանափակել ազատ առևտուրը՝ շրջակա միջավայրի պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Ինչպես արդեն իսկ նշվեց, ներկայումս միջազգային իրավունքի հակասական հարցերի շարքին է դասվում ազատ առևտրային քաղաքականության և շրջակա միջավայրի պաշտպանության անհրաժեշտության մրցակցության խնդիրը: Դարց է ծագում, թե արդյոք ազատ առևտուրն ու շրջակա միջավայրի պաշտպանությունը միմյանց հակադրվում են, թե կարող են հանդես գալ որպես համատեղելի նպա-

տակներ⁴: Հակասական են հատկապես ԱՀԿ-ի շրջանակներում կիրառվող միակողմանի տնտեսական սանկցիաները և ազգային որոշումները՝ ի հակադրություն բազմակողմանի, ունիվերսալ տնտեսական սանկցիաների⁵: Շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված տնտեսական սանկցիաների կիրառման օրինականության հարցը վերլուծելիս անհրաժեշտ է տարբերակել պետության կողմից միակողմանի, սեփական նախաձեռնությամբ կիրառվող տնտեսական սանկցիաները բազմակողմանի սանկցիաներից: Դեռ ավելին, տնտեսական սանկցիաների կիրառման օրինականության և արդյունավետության խնդիրն իր հերթին կրկին հանգեցնում է Հյուսիսի և Հարավի այն է՝ զարգացող և զարգացած պետությունների միջև ընթացող մշտական վեճին: Ջարգացող երկրները միակողմանի տնտեսական սանկցիաները ընդունում են որպես ազատ առևտրին ուղղված վտանգ՝ էկոլոգիական ինպերիալիզմի նոր տեսակ⁶, որի միջոցով ԱՄՆ և Եվրոպական Միությունն ըստ էության թելադրում են իրենց էկոլոգիական ստանդարդներն ու իրենց շուկայի դրները փակում զարգացող երկրների առջև:

Միջազգային հանրության կողմից շրջակա միջավայրի միասնական պաշտպանությունը կատարվում է համակողմանի (ունիվերսալ) էկոլոգիական պայմանագրեր կնքելու միջոցով (Multilateral Environmental Agreements (MEAs)): ՄԱԿ-ը խրախուսում է շրջակա միջավայրի ունիվերսալ պայմանագրերի կնքումն իր՝ Շրջակա միջավայրի ծրագրի շրջանակներում⁷:

MEA-ի մի մասը արգելում է առևտուրը ոչ անդամ պետությունների հետ, քանի դեռ վերջիններս չեն հետևում պայմանագրային պահանջներին: Այսպես օրինակ՝ Կենդանական և բուսական աշխարհի՝ անհետացման սպառնալիքի տակ գտնվող տեսակների միջազգային առևտրի 1973 թ. կոնվենցիան⁸ արգելում է պաշտպանության տակ գտնվող բուսական կամ կենդա-

նական տեսակների առևտուրը կոնվենցիայի անդամ չհանդիսացող պետությունների հետ: 1989 թ. Վտանգավոր թափոնների միջսահմանային տեղափոխման և դրանց վերացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին Բազելի կոնվենցիան⁹ արգելում է թափոնների արտահանումն ու ներմուծումը անդամ չհանդիսացող պետություններից:

Անշուշտ կարելի է վիճարկել, որ շրջակա միջավայրի ոլորտում առևտուրը սահմանափակող այս պայմանագրային նորմերը հակասում են ԱՀԿ-ի անկյունաքարային՝ ազգային ռեժիմի և առավել բարենպաստվող ազգի սկզբունքներին:

Սակագների և առևտրի մասին համաձայնագրի (GATT/ՊԱՍՏ)¹⁰ հոդված I-1 սահմանում է առավել բարենպաստվող ազգի սկզբունքը, ըստ որի՝ պետության պարտականությունն է համաձայնեցված ոլորտում գործընկեր պետությանը, նրա ֆիզիկական և իրավաբանական անձանց, ապրանքներին տրամադրել առավել նպաստավոր պայմաններ, որոնք տրամադրված են ցանկացած երրորդ պետությանը, նրա ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ ապրանքներին: Առավել բարենպաստվող ազգի սկզբունքի էությունը այն է, որ ՊԱՍՏ հոդված I-1 նախատեսում է առավել բարեհաճ մոտեցում ԱՀԿ բոլոր անդամ պետությունների միատեսակ ապրանքներին՝ կապված ներմուծման և արտահանման նկատմամբ կամ դրանց առնչությամբ կամ դրանց համար կատարվող վճարումների, միջազգային փոխանցման նկատմամբ կիրառվող ցանկացած տեսակի մաքսային տուրքերի, վճարների, այդ տուրքերի ու վճարների գանձման եղանակների հետ:

Ինչ վերաբերում է ազգային ռեժիմի սկզբունքին, ապա այս դեպքում պետությունը պարտավոր է համաձայնեցված ոլորտում օտարերկրյա պետություններին, դրանց ֆիզիկական և իրավաբանական անձանց, ապրանքներին իր տարածքում տրամադրելու այն նույն պայմանները, որ ունեն ազգային ապրանքներին և տնտե-

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆԵ

սակաճ գործունեության սուբյեկտները (GATT, հոդված III): Ըստ էության, պետությունը պարտավոր է միևնույն վերաբերմունքը ցուցաբերել ներմուծված և տեղական ապրանքների հանդեպ:

Միջազգային իրավունքի մասնագետն այս հակասության պատասխանը միանգամից կփորձեր գտնել *jus cogens*¹² կամ միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր նորմին հղում կատարելով, որից շեղումն անթույլատրելի է¹²: Էկոլոգ ակտիվիստը կվիճարկեր, որ շրջակա միջավայրի պաշտպանությունն իրենից միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր պահանջ է ներկայացնում, և Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 59-րդ և 64-րդ հոդվածների համաձայն՝ միջազգային իրավունքի պարտադիր նորմին հակասող ցանկացած պայմանագիր անվավեր է: Ուստի եթե ընդունենք, թե MAE-ի դրույթներն իրենցից *jus cogens* նորմեր են ներկայացնում, ապա ՀԱԿ-ի դրույթները միանգամից կորցնում են իրենց ուժը: Մանրամասն չանրադառնալով այս հարցի իրավական վերլուծությանը՝ կարծում ենք, որ առավել հետաքրքրական է այս համատեքստում քննության դնել ԳԱՏՏ-ի հոդված XX-ով նախատեսված բացառությունները, որոնց համաձայն՝ ԱՀԿ անդամ պետությունները իրավունք ունեն կիրառել տնտեսական սանկցիաներ, որոնք կաշված են պաշտպանելու «մարդու, կենդանիների կամ բույսերի կյանքն ու առողջությունը» (ԳԱՏՏ հոդված XX(b)), կամ որոնք վերաբերում են «սպառվել-վերջանալու ենթակա բնական պաշարների պահպանմանը, եթե այդ միջոցները իրագործվում են նեքին արտադրության կամ սպառման սահմանափակումների հետ միասին» (ԳԱՏՏ, հոդված XX (g))¹³:

Այս բացառությունների սահմանագիծն արտացոլված է հոդված XX նախաբանում

(իրավաբանական գրականության մեջ այն ընդունված է անվանել *chapeau*), որի պահանջն է «...այդ միջոցները չեն կիրառվում այնպիսի եղանակով, որը կհանդիսանա միևնույն պայմաններ ունեցող երկրների միջև կամայական ու չարդարացված խտրականություն կամ միջազգային առևտրի քողարկված սահմանափակում»:

Թեև մինչ օրս որևէ բողոք չի հասցեագրվել ԱՀԿ-ի վեճերի կարգավորման մարմնին, սակայն ԱՀԿ-ի անդամ պետությունների մեծամասնությունը նաև MAE-ի պայմանագիր կողմեր են: Կարծում ենք, որ վերջիններս գտնում են, որ շրջակա միջավայրի պաշտպանության ունիվերսալ պայմանագրերը չեն խախտում ԳԱՏՏ-ի առարկան ու նպատակները և ամբողջությամբ արդարացված են ԳԱՏՏ-ի հոդված XX բացառությունների լույսի ներքո: Ուստի կարելի է եզրահանգել, որ ունիվերսալ, բազմակողմանի տնտեսական սանկցիաները, որոնք ուղղված են շրջակա միջավայրի պաշտպանությանը, կարող են հանդես գալ որպես արդյունավետ և օրինական քաղաքական գործիք: Մեկ այլ հակասական հարց է, թե ով և ինչպես է որոշում, թե շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում կնքված այս կամ այն պայմանագիրը արդյոք ունիվերսալ է և կարող է դասվել MEA-ների շարքը: Կարծում ենք, սա հետաքրքիր հարցադրում է հետագա հետազոտությունների համար:

Մեկ այլ ուշադրության արժանի հարց է, թե ԱՀԿ-ն անդամ պետությունը ցանկանում է արդյոք շրջակա միջավայրի պաշտպանության ունիվերսալ կոնվենցիաներով նախատեսված շրջանակներից դուրս միակողմանիորեն կիրառել շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված տնտեսական սանկցիա: Այս առումով միջազգային տնտեսական իրավունքը ճանաչում է երկու տեսակի տնտեսական սանկցիա, որոնք ուղղված են՝

- ապրանքի որակներին,
- արտահանող պետությունում ապրանքի արտադրման գործընթացին¹⁴:

Միջազգային տնտեսական իրավունքի համաձայն՝ ԱՅԿ անդամ ցանկացած պետություն իրավունք ունի արգելելու այնպիսի ապրանքների ներմուծումը իր երկիր, որոնք վտանգավոր է համարում իր քաղաքացիների համար, քանի դեռ նման արգելքը վերաբերում է ապրանքի որակին¹⁶: Իհարկե, այս արգելքը պետք է բավարարի առավել բարենպաստվող ազգի և ազգային ռեժիմի պահանջներին:

Այնուհանդերձ, շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով կիրառվող ամենահակասակ տնտեսական սանկցիաները նրանք են, որոնք ոչ թե վերաբերում են ապրանքի որակին, այլ հենց ապրանքի արտադրման գործընթացին¹⁶: Ալլան Օքսլեն գտնում է, որ միակողմանի տնտեսական արգելքի միջոցով էկոլոգիական որևէ արդյունք երաշխավորելը անարդյունավետ է և անբավարար:

Այնուամենայնիվ, ԱՅԿ իր որոշումներով էապես զարգացրել է շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղորտում միակողմանի կիրառվող տնտեսական սանկցիաների կիրառությունը: Այս հարցը ծագեց Shrimp/Sea Turtle հակասական գործով, երբ ԱՄՆ արգելեց Ասիայի ձկնորսների որսած մանր խեցգետինների մուտքը ԱՄՆ շուկա՝ պատճառաբանելով, որ ասիացի ձկնորսների որսի մեթոդները չեն համապատասխանում ԱՄՆ էկոլոգիական ստանդարտներին¹⁷: ԱՄՆ վիճարկում էր, որ չափազանց շատ ծովային կրիաներ են ստուկել ձկնորսական այդ մեթոդների պատճառով, քանի որ ձկնորսների օգտագործած կարթերը հնարավորություն չեն տվել ծովային կրիաներին խուսափել և փախչել¹⁸: ԱՅԿ-ն վերաքննիչ պալատը փորձեց հստակեցնել տնտեսական սանկցիաների էքստրատերիտորիալ կիրառման ու ապրանքների արտադրման մեթոդների հետ դրանք պայմանավորելու մասին ԱՅԿ-ի պահանջի վիճահարույց որոշումը: Վերաքննիչ պալատի որոշման ամենակարևոր հատվածն այն էր, որ «ՊԱՏՏ-ի XX հոդվածի **g** կետով նախատեսված բացառություն-

ըն ընդգրկում է նաև տնտեսական այն սանկցիաները, որոնք ուղղված են պաշտպանելու **սպառվել-վերջանալու ենթակա բնական պաշարները** ներմուծող պետության իրավագործության սահմաններից դուրս»:

Փաստորեն, սույն որոշումից կարելի է եզրահանգել, որ ազատ առևտրի և շրջակա միջավայրի պաշտպանությունը հավասարակշռելիս ԱՅԿ-ի վերաքննիչ պալատն ըստ էության նախապատվություն է տալիս միակողմանի տնտեսական սանկցիաների կիրառման քաղաքականությանը, որը, իր հերթին, կրկին է թեժացնում Զյուսիսի և Զարավի՝ զարգացողի և զարգացվածի, արդյունաբերականի և ոչ արդյունաբերականի միջև ընթացող վեճը: Դեռ ավելին, կարելի է ասել, որ նման մոտեցումը պրոտեկցիոնիզմի նոր դրսևորում է, որն արդարացիորեն կարելի է անվանել «էկոլոգիական պրոտեկցիոնիզմ», որի իրական նպատակն է գերտերություններին թույլատրել կիրառելու իրենց էկոլոգիական ստանդարտներն ու թելադրելու իրենց քաղաքականությունը սեփական սահմաններից դուրս:

ՊԱՏՏ-ի հոդված XX-ի նոր մեկնաբանությունը նոր մարտահրավերներ է նետում համաշխարհային առևտրի «ազատ» և «անկախ» համակարգին: Ցանկացած տնտեսագետ կվիճարկեր, որ այն հակասում է Ռիկարդոյի «համեմատական առավելության» (comparative advantage) տեսությանը¹⁹ և ստեծում է պրոտեկցիոնիզմի նոր եղանակ:

Մի շարք իրավաբաններ գտնում են, որ տնտեսական սանկցիաների նման կիրառությունը ամբողջությամբ հակասում է ԱՅԿ-ի *modus operanti*-ին: Դրանց հիմնական նպատակը ոչ թե շրջակա միջավայրի պաշտպանությունն է, այլ սոսկ այս կամ այն տնտեսվարող սուբյեկտներին պատժելն ու ներքին շուկայի պաշտպանությունը: Ուստի, այս կամ այն երկրում ներդրում կատարելիս պրոտեկցիալ արտահանողը պարտավոր է մի շարք գործոններ հաշվի

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆԵ

առնել: Հատկապես անընդունելի է այն, որ ստեղծված իրավիճակում զարգացող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Եթովպիան, Բանգլադեշը և այլն, պարտավոր են հարմարեցնել իրենց արտադրանքը այսպես կոչված «էկոլոգիական» նոր պահանջներին՝ իրենց ապրանքը միջազգային շուկա հանելու համար:

Միջազգային էկոլոգիական և տնտեսական իրավունքի առաջատար մասնագետ Ֆրանկ Բիերմանն առաջ է քաշում մի շարք լուծումներ, որոնց շնորհիվ շրջակա միջավայրի պաշտպանությունը և համաշխարհային ազատ առևտրի համակարգը կարող են դառնալ միմյանց չբացառող նպատակներ: Անհրաժեշտ է նախ և առաջ նախապատվությունը տալ ունիվերսալ, բազմակողմանի որոշումներին և առաջին հերթին վերանայել ԱՀԿ-ի և MEA-ների փոխհարաբերության հարցը: Ինչպես Բիերմանն արդարացիորեն առաջարկում է, անհրաժեշտ է ԱՀԿ-ն նախարարների կոնֆերանսի միջոցով ընդունել և հաստատել զԱՏՏ հողված XX պաշտոնական մեկնաբանություն: Նման մեկնաբանության առկայության պայմաններում կբացառվի պետությունների կողմից հողված XX բացառությունների միակողմանի և կամային մեկնաբանություններն ու ապրանքների արտադրման գործընթացին ուղղված միակողմանի տնտեսական սանկցիաների կիրառումը²⁰:

Դեռ ավելին՝ իդեալական կլիմեր, եթե պետությունները համաձայնեին և հաստատեին շրջակա միջավայրի պաշտպանության ունիվերսալ պայմանագրերի ցանկը, որոնց համար թույլատրելի կլինեն կիրառել զԱՏՏ հողված XX բացառություններով նախատեսված տնտեսական սահմանափակումները:

Ակադեմիական գրականության մեջ նույնիսկ առաջարկ է արվել ստեղծելու Համաշխարհային էկոլոգիական կազմակերպություն, որն առավել արդյունավետորեն

կարող է արծազանքել շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրներին, քանի որ ԱՀԿ ըստ էության էկոլոգիական կազմակերպություն է: Սակայն, չենք կարծում, որ նման մարմին ստեղծելը նպատակահարմար է: Այն կարող է ավելի շատ խնդիրներ ստեղծել, քան լուծել. մասնավորապես՝ ո՞վ է այն ֆինանսավորելու, ինչպիսի՞ ընթացակարգով կարելի է դրա անդամ դառնալ, այն դատական մարմին է լինելու, թե՞ ոչ, և այլն:

Այսպիսով, գոյություն ունեն շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված երկու տեսակի սանկցիաներ՝ պետությունների կողմից միակողմանիորեն կիրառվող և բազմակողմանի, այսպես կոչված՝ ունիվերսալ սանկցիաներ:

Այսպիսով, տնտեսական սանկցիաների արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե դրանք իրապես կիրառվում են շրջակա միջավայրը պաշտպանելու նպատակով, թե այս կամ պետության կամայականության դրսևորում են և պրոտեկցիոնիզմի նոր դրսևորում:

զԱՏՏ-ի հողված XX-ի պաշտոնական մեկնաբանության առկայության և MAE-ի ցանկը ԱՀԿ-ին կցելու պարագայում, կարծում ենք, ունիվերսալ տնտեսական սանկցիաները կարող են հանդես գալ որպես արդյունավետ քաղաքական գործիքներ:

Ինչ վերաբերում է պետությունների կողմից կիրառված միակողմանի, կամայական տնտեսական սանկցիաներին, կարծում ենք, միջազգային իրավունքն այն չի թույլատրում ոչ մի պարագայում, իսկ մեր խորին համոզմամբ Shrimp/Sea Turtle գործով ԱՀԿ-ն վերաքննիչ պալատի որոշումը երևի թե սոսկ «բացառություն» էր կանոնից:

Ամեն դեպքում պետք է մոռանալ, որ ԱՀԿ-ի հիմքում ընկած է ազգային ինքնիշխանության և պետությունների հավասար վերաբերմունքի գաղափարները, իսկ եթե միակողմանի տնտեսական սանկցիաները սկսեն իրավացիորեն շրջանառվել պետությունների կողմից, ապա միջազգային շուկաները պարզապես կօժտվեն պրոտեկ-

սիրնիզմի նոր եղանակով:

Ինչպես ասել է համաշխարհային էկոլոգիական նախաձեռնության գլխավոր խորհրդական Բրեննան Վան Դայքը, «առևտրի և շրջակա միջավայրի պաշտպանության բանավեճը չհաջողված դիվանագիտության մի պատմություն է»²¹, սակայն այն հաջողությամբ պսակելու նոր

փորձեր, անշուշտ, կարելի է անել: Կարծում ենք՝ պետությունները կարող են այն հաջողելու եղանակներ գտնել և քաղաքական կամք դրսևորել՝ բարեփոխելու տնտեսական կանոնները, որպեսզի վերջիններս բավարարեն նաև շրջակա միջավայրի պաշտպանության պահանջները:

¹ Տե՛ս Wayne Ellwood, No-no Sense Guide to Globalization, New Internationalist, 2002, էջ 12:

² Այս մասին առավել մանրամասն տե՛ս Bordo, Michael D. and Eichengreen, Barry, A Retrospective on the Bretton Woods System, The University of Chicago Press, 1993:

³ Տե՛ս Steven Bernsteain and Erin Hannah, Non-State Global Standard Setting and the WTO: Legitimacy and the Need for the Regulatory Space, 11(3) Journal of International Law, 2008, էջ 577:

⁴ Տե՛ս Biernann F, 'The rising tide of green unilateralism in the world trade law: options for reconciling the emerging North-South conflict' 2001, JWT, էջ 1:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս Alan Oxley, Environmental Trade Sanctions: What Is At Stake, 18 (4) Policy Volume, 2002-2003, էջ 17:

⁷ Տե՛ս Negotiating and Implementing the MEAs: A manual for NGOs, United Nations Environment Program (UNEP), մայիս 2007, <http://www.unep.org/delc/docs/MEAs%20Final.pdf>:

⁸ Տե՛ս The Convention on International Trade in Endangered Species of Wild Fauna and Flora, Washington, 3 March 1989, in force 1 July 1975, 12 ILM, 1975:

⁹ Տե՛ս Basel Convention on the Control of Transboundary Movements of Hazardous Wastes and Their Disposal, 22 March 1989, in force 24 May 1992, 37 ILM 1998:

¹⁰ Տե՛ս The General Agreement on Tariffs and Trade, 1947, http://www.wto.org/english/docs_e/legal_e/gatt47_e.pdf

¹¹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս M. Cherif Bassioni, International Crimes, Jus Cogens and Obligatio Erga Omnes, Law and Contemporary Problems 1996:

¹² Տե՛ս 1969 Vienna Convention on the Law of Treaties, հոդվածներ 53 և 64:

¹³ Տե՛ս WTO CTE, 'GATT/WTO Dispute Settlement practice relating to GATT Article XX paragraphs b; d; g', Note by the Secretariat, WT/CTE/W/203, 8 մարտ, 2002:

¹⁴ Տե՛ս Charniovitz S 'The Law of Environmental "PPMs" in the WTO Debunking the Myth of Illegality' (2002) 27 YJIL:

¹⁵ Տե՛ս WTO SPS Agreement:

¹⁶ Տե՛ս W. Chang, "GATTing a Green Trade Barriers: Eco-labeling and the WTO Agreement on Technical Barriers to Trade", 31 Journal of World Trade, 1997:

¹⁷ Տե՛ս United States-Import Prohibition of Certain Shrimp and Shrimp Products Case, 12 October 1998, 38 ILM, 1999:

¹⁸ Id:

¹⁹ Տե՛ս Steven M. Suranovic, The theory of Comparative Advantage- Overview, Chapter 40:

²⁰ Տե՛ս Biernann F, 'The rising tide of green unilateralism in the world trade law: options for reconciling the emerging North-South conflict' 2001, JWT:

²¹ Տե՛ս նույն տեղում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆԵ

**ՋԱՐԳԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳԼՈՐԱԼԻԶԱՅԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Գիանա ՂԱԶԱՐՅԱՆ

*ԵՊՀ եվրոպական և միջազգային
իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

Ավելի քան մեկ տասնամյակ է, ինչ տնտեսական գլոբալիզացիան դարձել է ամենաշահարկվող եզրույթներից մեկը: Սակայն, այդքանով հանդերձ, դրա էությունն ամբողջությամբ դեռևս բացահայտված չէ, և հասարակական զարգացման տարբեր հարթություններում այն նոր իմաստ և բովանդակություն է ստանում: Գլոբալիզացիա տերմինը, մասնավորապես՝ տնտեսական գլոբալիզացիան, շատերը կիրառում են բնութագրելու հետսառըպատերազմյան ժամանակաշրջանը: Թեպետ տնտեսական գլոբալիզացիան չունի ընդունված միասնական սահմանում, բայց վստահորեն կարելի է պնդել, որ այն ազգային տնտեսությունների աստիճանական ինտեգրումն է սահմանազուրկ գլոբալ տնտեսությանը:

Մասնավորապես, ըստ համաշխարհային բանկի գլխավոր տնտեսագետ և տնտեսագիտության ոլորտում 2001 թվականի նոբելյան մրցանակակիր Ջոզեֆ Սթիգլիցի. «Գլոբալիզացիան տրանսպորտային և կապի ծախսերի էական նվազեցման, մի պետությունից մեկ այլ պետություն ապրանքների, ծառայությունների, կապիտալի, գիտելիքի և մարդկանց հոսքի արհեստական խոչընդոտների վերացման ճանապարհով պետությունների և մարդկանց սերտ ինտեգրումն է»¹:

Տնտեսական գլոբալիզացիան՝ որպես համաշխարհային և ներազգային ժամանակակից տնտեսության զարգացման խթան, ունի երկու հիմնական շարժիչ ուժ՝ տեխնոլոգիաները և առևտրի ազատակա-

նացումն ու օտարերկրյա ուղղակի ներդրումները:

Վերջին հիսուն տարվա ընթացքում նկատվում է զարգացած պետությունների կողմից օտարերկրյա առևտրի խոչընդոտների աստիճանական նվազեցում: Առևտրի ազատականացումը, կապիտալի ազատ շարժի խթանումը դարձել են ոչ միայն համաշխարհային տնտեսության հսկաների, այլ նաև զարգացող պետությունների³ տնտեսական քաղաքականության անկյունաքարը:

Թեպետ գլոբալիզացիայի հետևանքների վերաբերյալ մոտեցումներն ու գնահատականները միանշանակ չեն⁴, սակայն անվիճելի է, որ այն անդառնալի գործընթաց է: Դա նախևառաջ պայմանավորված է նրանով, որ միջազգային ազատականացված առևտուրն այժմ ունի ամուր ինստիտուցիոնալ հիմքեր, այն է՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության բազմակողմ պայմանագրերը⁵: Բացի այդ՝ գլոբալ տնտեսությունից մեկուսացումը կարող է խոչընդոտել պետությունների զարգացմանը, ինչպես օրինակ Հյուսիսային Կորեայի դեպքում:

Տնտեսական գլոբալիզացիայի ընդլայնման խոսուն ցուցանիշ է համաշխարհային համախառն ներքին արդյունքի մեջ ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների աճը: Մասնավորապես, եթե 1950 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանումը կազմում էր համախառն ներքին արտադրանքի 8 տոկոսը, ապա 2000 թվականին այն աճեց մինչև 24.6 տոկոս: Ինչ վերաբերում է զարգացող պետություններին, ապա վերջիններս արձանագրել են արտահանման ծավալների աննախադեպ աճ: Այս ոլոր-

տում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զարգացող երկրների համախառն ներքին արտադրանքի մեկ չորրորդը բաժին է ընկնում արտահանմանը, ինչն ավելի բարձր ցուցանիշ է, քան բազմաթիվ զարգացած պետությունների համար: Ավելին, վերջին տարիներին փոխվել է նաև զարգացող երկրների արտահանման կառուցվածքը: Եթե զարգացող շատ երկրներ դեռևս գիջում են հումքի արտահանման ծավալներով, այլ է վիճակը տեխնոլոգիաների և կենցաղային ապրանքների պարագայում: Վերջիններիս չափաբաժինը արտահանման ամբողջ ծավալների մեջ բավական մեծացել է: Սկսած 1990-ական թվականների սկզբներից՝ բարձր տեխնոլոգիաների արտահանման ոլորտում առաջատար դիրքերում են Չինաստանը, Հնդկաստանը և Մեքսիկան⁸:

Ինչպես նշեցինք, տեխնոլոգիական զարգացմանը և միջազգային առևտրի ընդլայնմանը զուգահեռ գլոբալիզացիայի հաջորդ շարժիչ ուժը օտարերկրյա ներդրումներն են: «Համաշխարհային ներդրումների մասին 2007 թվականի զեկույցը» ընդգծում է զարգացող երկրների համար օտարերկրյա ներդրումների կարևորությունը: Մասնավորապես, 2006 թվականին զարգացող և անցումային տնտեսություններ ունեցող պետություններում օտարերկրյա ներդրումների ծավալները գերազանցեցին երբևէ գրանցված ցուցանիշները և 55.9 տոկոսով գերազանցեցին 2001թ. ցուցանիշները⁹: Մինևույն զեկույցում, սակայն, իրավացիորեն նշվում է, որ օտարերկրյա ներդրումների բաշխումը զարգացող պետությունների միջև հավասարաչափ չէ:

Չնայած գլոբալիզացիայի դրական հետևանքները տեսանելի են բոլորի համար, այնուամենայնիվ դրանց ընկալումն ու հետագա գնահատականները միանշանակ չեն: Վերջին 10 տարվա ընթացքում տնտեսական գլոբալիզացիայի հետևանքների վերաբերյալ զարգացած պետությունների քաղաքացիների դժգոհություններն արտահայտվեցին բազմամարդ ցույ-

ցերով, որ տեղի ունեցան Պրահայում, Մոնտրեալում, Վաշինգտոնում, Ժնևում¹⁰:

Ըստ տնտեսական գլոբալիզացիայի ընդդիմադիրների՝ ներկայումս վերազգային կորպորացիաների տնտեսական շահերի նկատմամբ ընդգծված հետաքրքրություն է ցուցաբերվում: Նրանք նշում են, որ բավարար չափով հաշվի չեն առնվում ոչ միայն զարգացող երկրների շահերը, այլ նաև սոցիալական, մշակութային և բնապահպանական շահերն ընդհանրապես: Որպես աղքատության, բնապահպանական աղետների, գործազրկության պատճառ վկայակոչվում է գլոբալիզացիան: Բազմաթիվ գլոբալ տնտեսական միավորումների առկայությունը հանգեցնում է անհավասարության, սոցիալական անարդարության և շրջակա միջավայրի վատթարացման¹¹:

Միջազգային տնտեսագիտական ինստիտուտի 2001 թվականի հետազոտությունները ցույց են տալիս, որ բազմաթիվ ամերիկացիներ դեմ են առևտրի հետագա ազատականացմանը, ներգաղթին և արտաքին ուղղակի ներդրումներին, քանի որ այս ամենը բացասաբար է անդրադառնում վերջիններիս աշխատատեղերի վրա: Եվրոպայում տնտեսական գլոբալիզացիայի ընդդիմադիրները ևս մեծ թիվ են կազմում¹²:

Առևտրի համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրեն Պասկալ Լամին 2007 թվականի իր ելույթում նշել է. «Գլոբալիզացիայի հետևանքների նկատմամբ ձևավորվել է հանրային բացասական կարծիք: Մենք նման մտավախություն ենք նկատում, օրինակ, երբ հարցը վերաբերում է աճող մրցակցությանը: Ներկայումս շատ երկրներ տարակուսում են՝ արդյոք շարունակեն¹³ աջակցել առավել ազատ առևտրին, թե՞ ներկրվող ապրանքների, ծառայությունների և օտարերկրյա ներդրումների դեմ նոր պատենշներ կառուցեն»¹⁴:

Նման բացասական մոտեցումները պայմանավորված են այն խնդիրներով, որոնք գլոբալիզացիայի հետևանքով առա-

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆԵ

ջացել են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում: Մասնավորապես, զարգացող երկրների համար գլոբալիզացիայի բացասական հետևանքները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնք անգամ գլոբալիզացիայի բազմաթիվ առավելությունների պայմաններում անգամ հնարավոր չէ անտեսել: Նախ՝ զարգացող երկրները պարտադրվում են ազատականացնել և հնարավորինս արագ բացել իրենց շուկաները: Նման պարագայում, ի տարբերություն արդյունաբերական զարգացած պետությունների զարգացող երկրների տնտեսություններն ի վիճակի չեն դիմազրավել արտաքին ռիսկային գործոններին: Բացի այդ՝ զարգացած պետությունները պայմանավորվածություն են ձեռք բերում փակել իրենց շուկաները զարգացող երկրներից ներկրվող գյուղատնտեսական ապրանքների համար, և վերջապես՝ զարգացող երկրները չունեն առևտրային համաձայնագրերի և համաշխարհային առևտրի միջազգային կանոնների շուրջ բանակցելու համար անհրաժեշտ ներուժ և տեղեկատվություն արդյունավետ բանակցելու համար¹²:

«Գլոբալիզացիան և դրա թերությունները» մենագրության մեջ Ջոզեֆ Սթիգլիցը, անդրադառնալով գլոբալիզացիայի առավելություններին, փաստում է, որ միջազգային առևտրի համար իրենց տնտեսությունների ազատականացումը շատ երկրների օգնեց զարգանալ ավելի արագ, քան դա հնարավոր էր առանց նման քայլեր ձեռնարկելու: Ըստ Սթիգլիցի՝ գլոբալիզացիայի շնորհիվ է, որ զարգացող երկրներում շատ մարդիկ այժմ ապրում են առավել բարեկեցիկ կյանքով: Գլոբալիզացիան վերջ դրեց զարգացող երկրների մեկուսացմանը: Անգամ եթե կան բացասական կողմեր, միևնույն է, դրանք ուղեկցվում են նաև օգուտներով¹³: Ստիգլիցի այս պնդումը կարելի է ապացուցել պարզ օրինակներով:

1992 թվականին, երբ Ջամայկայի ներքին շուկան բացվեց ԱՄՆ-ից կաթ ներմուծողների համար, իհարկե ազգային ֆերմերները և արտադրողները վնաս կրեցին, բայց միևնույն ժամանակ շատ չքավոր երեխաների համար կաթը դարձավ ավելի մատչելի: Նույնը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ օտարերկրյա նոր ընկերությունների մուտքը ազգային շուկա կարող է վնասել պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկություններին, բայց միևնույն ժամանակ նպաստել նոր տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրության նոր ճյուղերի ստեղծմանը: Ըստ Սթիգլիցի՝ նրանք, ովքեր վատաբանում են գլոբալիզացիան, հաճախ շրջանցում են դրա օգուտները¹⁴:

Այնուամենայնիվ, ակնհայտ են նաև գլոբալիզացիայի բացասական հետևանքները: Էներգետիկ պաշարների սակավությունը, բնապահպանական խնդիրների սրացումը, քաղաքական անկայունությունը, ֆինանսական շուկաների փոփոխականությունը ևս պայմանավորված են գլոբալիզացիայով: Այս ամենն առավել սուր դրսևորում ստացավ զարգացող երկրներում, երբ շատ ազգային տնտեսություններ ի վիճակի չզտնվեցին դիմակայելու տնտեսական գլոբալիզացիայի հետևանքով ի հայտ եկած մարտահրավերներին: Այդ իսկ պատճառով ձևավորվել է այն կարծիքը, որ գլոբալիզացիան հզորացրեց զարգացած տնտեսությունները և էլ ավելի թուլացրեց թուլերին:

Հարց է առաջանում՝ արդյո՞ք գլոբալիզացիան առավելապես ուղղված է վերագալիս կորպորացիաների և հզոր տնտեսություն ունեցող երկրների զարգացմանը: Կարո՞ղ է արդյոք գլոբալիզացիան անխտիր նպաստավոր լինել բոլորի համար: Գիտնականներից շատերը համակարծիք են, որ համաշխարհային առևտրից կարող են օգուտ ստանալ բոլորը: Մասնավորապես, Ադամ Սմիթը հիմնավորում է այս մտեցումը՝ փաստելով, որ ցանկացած պետություն իր արտադրությունը կզարգացնի

այն ուղղությամբ, որի մեջ վերջինս առավելություն կունենա իր հարևանների նկատմամբ, և կզնի այն ապրանքները, որի արտադրությունն իրենից առավել մեծ ծախսեր կպահանջի¹⁵:

Սմիթի պարզ և անհերքելի տեսությունը հետագայում զարգացրեց Դեյվիդ Ռիկարդոն, որը զարգացրեց հարաբերական առավելության տեսությունը¹⁶: Այս տեսությունը շարունակում է մնալ ամենահիմնարար բացատրությունը, թե ինչպես ամենաաղքատ պետություններն անգամ կարող են օգուտ ստանալ միջազգային առևտրից:

Համաշխարհային բանկի 2001 թվականի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այն զարգացող պետությունները, որոնք 1980-ականներին և 1990-ականներին ընդլայնել են իրենց ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը, ավելի մեծ տնտեսական աճ են գրանցել: Այդ երկրներից շատերը, օրինակ Չինաստանը, Հնդկաստանը, ընդունել են միջազգային շուկաներում ազգային արտադրողների մուտքը խրախուսող ներպետական հայեցակարգ: 2006-ին Չինաստանը և Հնդկաստանը համապատասխանաբար 9.4 և 11.1 տոկոս տնտեսական աճ գրանցեցին¹⁷: Այնուամենայնիվ, ոչ բոլոր պետություններն են հաջողությամբ ինտեգրվել գլոբալ տնտեսությանը: Այսպես, ըստ Համաշխարհային բնակի 2001թ. զեկույցի՝ մոտավորապես 2 միլիարդ մարդ Աֆրիկայում, նախկին խորհրդային միության հանրապետություններում աղքատ են¹⁸:

Առևտրի համաշխարհային կազմակերպության՝ «Առևտուր, եկամուտների անհավասարություն և աղքատություն» վերտառությամբ 2000թ-ի ուսումնասիրության համաձայն՝ առևտրի ազատականացումը սովորաբար նպաստում է աղքատության նվազեցմանը¹⁹: Այն մարդկանց թույլ է տալիս օգտագործելու իրենց ներուժը, նպաստում է տնտեսական աճին, օգնում է պաշտպանել ազգային տնտեսությունը ցնցումներից: Մյուս կողմից ուսումնասի-

րությունները փաստում էին, որ առևտրի ազատականացմանն ուղղված տնտեսական բարեփոխումների պատճառով որոշ տնտեսավարողներ վնասներ կկրեն: Արդյունքում աղքատությունը կարող է ժամանակավորապես խորանալ, սակայն պատեհ քաղաքական հակազդեցությունը ուղղված կլինի ոչ թե բարեփոխումների գործընթացի դադարեցմանը, այլ դժվարությունների հաղթահարմանն ուղղված միջոցների ձեռնարկմանը: Ըստ Առևտրի համաշխարհային կազմակերպության «Առևտրի ազատականացման կարգավորում» 2003թ.-ի ուսումնասիրության՝ առևտրի ազատականացման ճիշտ կարգավորումը շատ ավելի եկամտաբեր է և քիչ ծախսատար, քան դրանից հրաժարվելը²⁰:

Համաշխարհային առևտուրը կարող է հանգեցնել ոչ միայն տնտեսական, այլ նաև ոչ տնտեսական օգուտների: Միջազգային առևտուրը խթանում է խաղաղության հաստատմանը: Խաղաղությունը մասամբ առևտրային համակարգի երկու հիմնական սկզբունքների կիրառման արդյունք է: Այդ սկզբունքներն են՝ առևտրի կայուն ընթացքի ապահովումը և առևտրի ուղրտում ծագած վեճերի կառուցողական և արդար կարգավորումը: Խաղաղությունը նաև այդ համակարգի միջոցով ստեղծվող և ամրապնդվող համընդհանուր վստահության և միջազգային համագործակցության արդյունք է: Պատմությունը լի է փաստերով, երբ առևտրային վեճերը վերածվել են պատերազմների: Առավել հայտնի է 1930-ականների առևտրային պատերազմը, երբ պետությունները մրցում էին՝ միմյանց նկատմամբ առևտրային արգելքներ սահմանելով՝ ներքին արտադրողներին պաշտպանելու և այլ պետությունների հարկադրական արգելքներին հակազդելու նպատակով:

Համաշխարհային առևտուրը նպաստում է բազմակողմանի շփումներին և համագործակցությանը, երբ պետությունները հանդես են գալիս ոչ թե թշնամիներ, այլ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆԵ

գործընկերներ: Ըստ Մոնտեսքյոյի. «Խաղաղությունը առևտրի բնական արդյունքն է: Բեռնափոխադրումներ իրականացնող երկու ազգեր միմյանցից փոխադարձ կախվածության մեջ են գտնվում. եթե մեկը նպատակ ունի գնելու, մյուսը՝ վաճառելու, և նրանց միությունը հիմնվում է փոխադարձ կարիքների վրա»²¹: Այն պետությունը, որն ընդունում է առևտուրը խստացնող միջոցներ, ուղղակիորեն տնտեսական խոչընդոտներ է առաջացնում ներմուծող երկրների համար: Այդ իսկ պատճառով պրոտեկցիոնիզմը վեճի աղբյուր է: Ընդունված է այն տեսակետը, որ «եթե ապրանքները չեն հատում սահմանները, ապա դա անում են զինվորները»²²: Այսպիսով, միջազգային առևտուրը կարևոր խթան կարող է լինել խաղաղության և միջազգային հրաբերությունների հաստատման համար: 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական ակտից երկու շաբաթ անց Առևտրի համաշխարհային բանկի անդամ պետությունները համաձայնության եկան սկսել Դոհայի զարգացման նստաշրջանը, որն ուղղված էր առևտրի ազատականացման հետագա բանակցություններին: Ըստ Առևտրի համաշխարհային բանկի գլխավոր տնօրեն Պասկալ Լամիի՝ բանակցությունները սկսելու նպատակը պարզ էր. «Ահաբեկչությունը հանգեցնում է անկայունության, մինչդեռ գլոբալ առևտրի կանոնները խթանում են կայունության հաստատմանը»²³:

Տնտեսական գլոբալիզացիան կարող է նպաստել նաև զարգացող երկրներում ժողովրդավարության հաստատմանը: «Ազատ առևտուրն այսօր» վերտառությամբ գրքում Ջազդիչ Բազվաթին եզրակացնում է, որ միջազգային առևտուրը նպաստում է մարդկանց կենսամակարդակի բարձրացմանը և միջին խավի ձևավորմանը, ինչն իր հերթին հանգեցնում է ժողովրդավարության հաստատմանը²⁴:

Մինչ շատ տնտեսագետներ, հիմնվելով

Ռիկարդոյի՝ հարաբերական առավելության տեսության վրա, խորհուրդ են տալիս պետություններին իրականացնել միջազգային առևտրին նպաստող քաղաքականություն, ձեռնպահ մնալ տնտեսական պատենտներից և ազատականացնել իրենց ներքին շուկան, այնուամենայնիվ շատ քաղաքական գործիչներ չեն հետևում այս խորհրդին: Պետությունները, մտնելով միջազգային առևտրի մեջ, հաճախ ընդունում են խստացնող միջոցներ: Մինչդեռ տնտեսական գլոբալիզացիայի սկզբունքները և պրոտեկցիոնիզմը հաճախ իրար հակադրվող կատեգորիաներ են: Պրոտեկցիոնիզմի հիմնական նպատակը ներպետական տնտեսությունը և աշխատատեղերը պաշտպանելն է, որին պետությունները հաճախ դիմում են, երբ ազգային տնտեսությունը ճգնաժամային իրավիճակում է, կամ առաջացել է նոր զարգացող արտադրության ոլորտը պաշտպանելու անհրաժեշտություն: Այդ քայլին առավել հաճախ դիմում են զարգացող պետությունները, որոնք փորձում են պաշտպանել իրենց արտադրությունը զարգացող երկրներից ներկրվող արտադրանքից: Թեպետ մաքսային տուրքերի և ներմուծման սահմանափակումների միջոցով նոր զարգացող արտադրության պաշտպանությունը երբեմն արդյունավետ միջոց է, սակայն միայն այն դեպքում, երբ նման միջոցները կրում են ոչ թե մշտական, այլ ժամանակավոր բնույթ: Ջարգացող երկրների կառավարությունները դիմում են նաև վերոգրյալ մեթոդներին, քանի որ հարկային և մաքսային պարտավորությունները բյուջետային դեֆիցիտը լրացնելու միջոցներ են²⁵:

Պրոտեկցիոնիզմի տևական բնույթը կանխելու համար նախևառաջ անհրաժեշտ է տնտեսական գլոբալիզացիայի արդյունավետությունը համընդգրկուն դարձնել ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար: 2002 թվականին Միավորված ազգերի կազմակերպության Հազարամյակի գեկույցը ներկայացնելիս ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քո-

Ֆի Անանը նշեց .«Գլոբալիզացիայի օգուտները ակնհայտ են...տնտեսական սրընթաց աճ, բարձր կենսապայմաններ և նոր հնարավորություններ...: Սակայն ներկայիս խնդիրներից է այս հնարավորությունների ոչ հավասարաչափ բաշխումը»²⁶:

Գլոբալիզացիան պետք է դառնա շարժիչ ուժ բոլոր պետությունների տնտեսական զարգացման համար և հավասար հնարավորություններ ընձեռի հատկապես զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրների համար: Ըստ Օքսֆամ հրատարակչության ուսումնասիրությունների՝ գլոբալիզացիայի բացասական հետևանքները և հնարավորությունների ոչ հավասարաչափ բաշխումը ներկայումս պայմանավորված են առևտրի թե միջազգային և թե ազգային մակարդակներում վատ կառավարմամբ: Միջազգային առևտրային համակարգի լավ կառավարումը կարող է միայն նպաստել աղքատության և անհավասարության նվազեցմանը²⁷: 2001 թվականին G-20-ի անդամ երկրների ֆինանսների նախարարներին և կենտրոնական բանկերի կառավարիչներին ուղղված իր ելույթում Համաշխարհային բանկի նախագահ Վոլֆենստոնը առաջարկեց տնտեսական գլոբալիզացիան և առևտրի ազատականացումը տնտեսական զարգացմանն ուղղելու գործողությունների ծրագիր, որը ներառում էր այդ նպատակին ուղղված գործունեության չորս հիմնական ուղղություն՝

- առավել արդյունավետ կառավարում,
- առևտրային խոչընդոտների վերացում,
- ֆինանսական օժանդակություն,
- միջազգային առավել արդյունավետ համագործակցություն²⁸:

Կարծում ենք՝ խոսելով առևտրային խոչընդոտների վերացման մասին՝ պետք է հատկապես կարևորել զարգացող պետությունների դեմ կիրառվող խոչընդոտների վերացումը: Չարգացած երկրները բազմակողմանի պայմանագրերի և միակողմանի գործողությունների միջոցով պետք է

ընդլայնեն զարգացող երկրներից ապրանքների և ծառայությունների ներկրման հնարավորությունները: Չարգացող երկրների միջազգային առևտրին ինտեգրվելու համար պակաս կարևոր չէ զարգացման համար ֆինանսական օժանդակություն տրամադրելը: Ինչ վերաբերում է միջազգային համագործակցությանը, ապա արդյունավետ գլոբալիզացիան պահանջում է գլոբալ կառավարում և բազմակողմանի գործողություններ՝ ուղղված գլոբալ խնդիրների լուծմանը: Գլոբալ կառավարման խնդրահարույց հարցերից է զարգացող երկրներին գլոբալ որոշումների կայացման գործընթացի մեջ ներգրավելը:

2007 թվականին Առևտրի համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրեն Պասկալ Լամին, իր ելույթում խոսելով առևտրի բազմակողմանի ազնիվ կանոնների սահմանման և զարգացող երկրներում առևտրային կարողությունների կառուցման մասին, նշել է, որ դրանք այն միջոցներն են, որոնք տնտեսական գլոբալիզացիան և միջազգային առևտուրը կուղղորդեն ի նպաստ բոլոր պետությունների տնտեսական զարգացման²⁹: Դոհայի՝ զարգացման նստաշրջանի շրջանակներում Առևտրի համաշխարհային կազմակերպության բանակցությունները ուղղված էին միջազգային առևտրի այն կանոնների բարեփոխմանը, որոնք անհավասար պայմաններ էին ստեղծում զարգացող երկրների համար հատկապես գյուղատնտեսության ոլորտում: Սակայն միայն միջազգային ինստիտուցիոնալ փոփոխությունները բավական չեն առևտրի ազատականացումը տնտեսական աճի փոխակերպելու համար: Առևտրի ազատականացումը պետք է ուղեկցվի ներպետական գործողությունների ծրագրի մշակմամբ՝ ուղղված արդյունավետ ֆիսկալ քաղաքականության, մրցակցային մթնոլորտի, սոցիալական անվտանգության ներդրմանը:

Գլոբալիզացիայի և միջազգային առևտրի օգուտներն առավել տեսանելի կլինեն այն հասարակություններում, որոնց

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆԵ

գարգացման մակարդակը թույլ է տալիս շարժվելու համաշխարհային գարգացման գործընթացներին համահունչ՝ հաղթահարելով մշակութային բազմազանության գործոնը: Տնտեսական գարգացման վրա այս գործոնի բացասական ազդեցությունը Սամուելսոնը հիմնավորում է՝ ներկայացնելով Լատինական Ամերիկայի երկրների օրինակը, երբ անգամ պրոտեկցիոնիզմից հրաժարումը և տասը տարվա (1985-1996թթ.) ընթացքում հարկերը միջինը 50-ից 10% իջեցնելը չտվեց սպասված արդյունքը: Սամուելսոնը այս հանգամանքը բացատրում է նրանով, որ շատ հասարակություններ չեն կարողանում հեշտությամբ ընդունել կապիտալիստական ինստիտուտները³⁰:

Սակայն արագ գարգացող աշխարհում մշակույթի վերափոխումն ու մշակութային արժեքների ընդօրինակումն անխուսափելի են՝ հատկապես հաշվի առնելով կոնկրետ պետությունների համար դրա արդյունքում տեսանելի նյութական օգուտները: Ավածի վառ օրինակ է Հնդկաստանը, որը, 1980-ական թվականներից հրաժարվելով պրոտեկցիոնիզմից, 2006 թվականին գրանցեց 9.4% տարեկան տնտեսական աճ³¹:

Այսպիսով, համակարծիք ենք Դանի Ռոդրիկի այն մոտեցմանը, որ 21-րդ դարի մարտահրավերը մշակութային բազմազանության պայմաններում հասարակության և շուկայի միջև կայուն հավասարակշռություն ստեղծելն է³²:

Ամփոփելով վերոգրյալ գործոնները՝ տեղին է մեջբերել նաև Ջոզեֆ Սթիգլիցի քննադատությունը՝ ուղղված գլոբալիզացիայի ներկա համակարգին: Նա այդ համակարգը կոչում է «Գլոբալ կառավարում առանց գլոբալ կառավարության, երբ մի

քանի ինստիտուտներ՝ Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը և մի քանի մասնակիցներ...», ընդունում են որոշումներ, որոնց ազդեցությունը կրում է ամբողջ աշխարհը»³³: Քննադատելով այդ համակարգը՝ Սթիգլիցը կոչ է անում բարեփոխել միջազգային տնտեսական կարգը կառավարող կառույցները և հնարավորություն ընձեռնել բոլոր պետություններին մասնակցելու այն որոշումների կայացմանը, որոնք ազդեցություն են թողնելու դրա վրա:

Այսպիսով, տնտեսական գլոբալիզացիան, ամուր ինստիտուցիոնալ հիմքեր ունեցող ազատականացված միջազգային առևտուրը և կապիտալի ազատ շարժը գարգացող երկրների ոչ միայն տնտեսական աճի խթանման, այլ նաև մի շարք ոչ տնտեսական օգուտների, մասնավորապես խաղաղության, ժողովրդավորության հաստատման հիմնական միջոցներն են: Անգամ գլոբալիզացիայի բացասական հետևանքները՝ էներգետիկ պաշարների սակավությունը, բնապահպանական խնդիրների սրացումը, քաղաքական անկայունությունը, ֆինանսական շուկաների փոփոխականությունը, պատշաճ հակազդեցության միջոցառումների իրականացման դեպքում կարող են մեղմվել: Այդ իսկ պատճառով, գարգացող երկրներին (այդ թվում՝ Հայաստանին) առևտրային կարողությունների կառուցման համար ֆինանսական օժանդակության տրամադրումը, առևտրային խոչընդոտների վերացումը, միջազգային համագործակցության ընդլայնումը և միջազգային առևտրի առավել արդյունավետ կառավարումը, մասնավորապես գարգացող երկրներին որոշումների կայացման գործընթացի մեջ ներգրավելը այն հիմնական ուղղություններն են, որոնց պետք է միտված լինի սահմանազուրկ գլոբալ տնտեսության գարգացման հետագա ընթացքը:

¹ J. Stiglitz, *Globalization and Its Discontents*. Penguin, 2002. էջ 9:

² Տես՝ M. Wolf, «Global Opportunities»// *Financial Times*, 6 May 1997:

- ³ «Ձարգացող երկրներ» եզրույթը սովորաբար օգտագործվում է բնորոշելու համար նյութական բարեկեցության ցածր մակարդակ ունեցող պետությունները: Թեև չկա միասնական ընդունված սահմանում, սակայն մի շարք միջազգային կազմակերպություններ հիմք ընդունելով տարբեր չափանիշներ, դասակարգել են այդ պետությունները: Առավել հաճախ հանդիպող չափանիշ է երկրի համախառն երթին արդյունքը: Թեև Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամների մեջ մեծ թիվ են կազմում զարգացող երկրները, սակայն ԱՅԿ-ն չունի «զարգացող երկրներ» եզրույթի կոնկրետ սահմանում, և անդամները իրենք են հայտարարում զարգացող, թե զարգացած պետությունների շարքին են դասվում, ինչը այլ անդամ պետությունները կարող են վիճարկել, քանի որ ԱՅԿ-ի մի շարք համաձայնագրերում արտոնություններ են սահմանված զարգացող երկրների համար (Generalized System of Preferences) (տես՝ http://www.wto.org/english/tratop_e/devel_e/d1who_e.htm):
- ⁴ Այս մասին մանրամասն տես՝ J. Stiglitz, *Globalization and Its Discontents*. Penguin, 2002, PINELOPI KOUJIANOU GOLDBERG AND NINA PAVCNIK, “Distributional Effects of Globalization in Developing Countries” *Journal of Economic Literature* Vol. XLV (March 2007), էջ 39–82:
- ⁵ Առևտրի համաշխարհային կազմակերպության ինստիտուցիոնալ հիմքերն են՝ 1995թ. հունվարի 1-ին ընդունված «Մարակեշի համաձայնագիրը», որով ստեղծվեց Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, 19942թ.-ի «Սակագների և առևտրի մասին ընդհանուր համաձայնագիրը» (GATT), 1994թ.-ի «Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիրը» (GATS), 1994թ.-ի «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիրը» (TRIPS) և այլն:
- ⁶ Stu՝ Kevin Watkins, Penny Fowler. *Rigged rules and Double Standards: Trade, Globalization and the Fight against Poverty*. Oxfam Publications 2002:
- ⁷ Stu՝ UNCTAD Secretariat, *World Investment Report 2007: Transnational Corporations, Extractive Industries and Development, An Overview*, հասանելի է http://www.wtocom.org.tw/SmartKMS/do/www/readDoc?document_id=87167 կայքում (22.02.10 դրությամբ):
- ⁸ Stu՝ “In the Shadow of Prosperity” // *Economist*, 18 January 2007, էջեր 15-22:
- ⁹ Stu՝ Peter Van Den Bossche, *The Law and the Policy of the world trade organization: Text Cases and Materials*. Cambridge University Press. 2008, էջ 9-13:
- ¹⁰ Stu՝ Peter Van Den Bossche, *The Law and the Policy of the world trade organization: Text Cases and Materials*. Cambridge University Press. 2008, էջ 9-11:
- ¹¹ Stu՝ P. Lamy, “Trends and Issues Facing Global Trade”, *Speech delivered in Kuala Lumpur, Malaysia on 17 August 2007*, հասանելի է www.wto.org/english/news_e/sppl_e/sppl65_e.htm կայքում, (23.02.2010 դրությամբ):
- ¹² Ժնևում գործում է Առևտրի համաշխարհային կազմակերպության իրավունքի խորհրդակցական կենտրոնը (ACWL), որը անկախ միջկառավարական կազմակերպություն է և գործում է Առևտրի համաշխարհային կազմակերպությունից անկախ: Կենտրոնը կոչված է օժանդակելու զարգացող երկրներին Առևտրի համաշխարհային կազմակերպության իրավունքի հետ կապված հարցերով: Կենտրոնի մասին տեղեկատվությունը հասանելի է www.acwl.ch կայքում (15.02.2010 դրությամբ):
- ¹³ Stu՝ J. Stiglitz, *Globalization and Its Discontents*. Penguin, 2002. էջ 4-5:
- ¹⁴ Stu՝ նույն տեղը, էջ 5-6:
- ¹⁵ Stu՝ A. Smith, *An Inquiry into the nature and Causes of the Wealth of Nations*. 1976. Edited by E. Cannan (University of Chicago Press, 1976), vol 1, էջ 478-9:
- ¹⁶ Stu՝ David Richardo, *The Principles of Political Economy and Taxation*, 1987:
- ¹⁷ Stu՝ The Economist Intelligence Unit: *Country Briefings: China*, հասանելի է <http://www.economist.com/countries/China/>, and *India*, հասանելի է <http://www.economist.com/countries/>

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ**ԻՐԱՎՈՒՆՔ**

- India/ կայքերում (15.02.2010 դրությամբ):
- ¹⁸ Տե՛ս The Worl Bank, World Development Report (WDR) 2000/2001: Attacking Poverty, հասանելի է՝ <http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/EXTPOVERTY/0,,contentMDK:20194762~pagePK:148956~piPK:216618~theSitePK:336992,00.html> կայքում (23.02.2010 դրությամբ):
- ¹⁹ Տե՛ս D. Ben-David, H. Nordstrom and A. Winters, Trade, Income Disparity and Poverty. Special Studies Series (WTO, 2000):
- ²⁰ Տե՛ս M. Baccetta and M. Jansen, Adjusting to Trade Liberalization: The Role of Policy, Institutions and WTO Disciplines, Special Studies Series (WTO, 2003), էջ 6:
- ²¹ C. de Montesquieu, De l'Esprit des Lois. English translation by Thomas Nugent is, հասանելի է www.constitution.org/cm/sol.htm կայքում (15.01.2010 դրությամբ):
- ²² P. Lamy 'Managing Global Security: the Strategic importance of global trade', Speech to the International Institute for strategic studies, in Geneva on September 8 2007, հասանելի է www.wto.org/english/news/_e/spp1_e/spp166_e.htm կայքում (25.01.2010 դրությամբ):
- ²³ Նույն տեղում:
- ²⁴ J. Bhagwati, Free Trade Today (Princeton University Press, 2002), էջ 43-4:
- ²⁵ J. Jackson, W. Davey and A. Sykes, Legal Problems of International Economic Relations, 4th edition (Westgroup 2002) էջ 20-1:
- ²⁶ United Nations General Assembly, UN Millennium Declaration, Resolution adopted on 8 September, para. 11:
- ²⁷ Տե՛ս Peter Van Den Bossche, The Law and the Policy of the world trade organization: Text Cases and Materials. Cambridge University Press. 2008, էջ 9-11:
- ²⁸ Տե՛ս 'Responding to the Challenges of Globalization', Remarks to the G-20 Finance Ministers and Central Bank Governors by James D. Wolfensohn, President, World Bank Group, Ottawa, 17 November 2001, հասանելի է www.worldbank.org կայքում (20.02.2010 դրությամբ):
- ²⁹ Տե՛ս P. Lamy, "Trends and Issues Facing Global Trade", Speech delivered in Kuala Lumpur, Malaysia on 17 August 2007, հասանելի է www.wto.org/english/news/_e/spp1_e/spp166_e.htm կայքում (25.01.2010 դրությամբ):
- ³⁰ Տե՛ս R. Samuelson, "Persistent Poverty Defines the Wisdom on Globalization", International Herald Tribune, 21 september 2000:
- ³¹ Տե՛ս Peter Van Den Bossche, The Law and the Policy of the world trade organization: Text Cases and Materials. Cambridge University Press. 2008, էջ 16-22:
- ³² Տե՛ս D. Rodric "Has Globalization Gone Too Far" (Institute for International Economics, 1997), էջ 85:
- ³³ J. Stiglitz, Globalization and Its Discontents. Penguin, 2002, էջ 9:

ИМПЛЕМЕНТАЦИЯ ЕВРОПЕЙСКОЙ КОНВЕНЦИИ О ЗАЩИТЕ ПРАВ ЧЕЛОВЕКА И ОСНОВНЫХ СВОБОД В АКТАХ СУДА ЕС

Ани АКОПЯН

Соискатель кафедры конституционного и муниципального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета

Впервые Суд ЕС обратился к Европейской конвенции о правах человека по поводу дела *Нолда* в 1974г¹. Этому решению предшествовало так называемое решение «*Саланг 1*» Немецкого Национального суда², который поднял вопрос об ответственности за защиту прав человека в правовом пространстве Сообщества. Решение по делу *Нолда* было подкреплено ратификацией Францией Европейской конвенции о защите прав человека и основных свобод. В целом, необходимо отметить, что май 1974 года имел достаточно серьезное значение для сотрудничества системы Европейской конвенции о правах человека и Суда ЕС.

Тем не менее, до решения по делу *Нолда*³ обращение суда ЕС к Европейской конвенции о правах и свободах не носило особо важного характера. В решении по делу *Нолда* Суд ЕС подчеркнул особый характер обязательств государств-участниц Сообщества по защите основных прав человека, основанных на конституционных традициях: «основные права формируют неотъемлемую часть основных принципов права, которые проповедуются Судом ЕС. В процессе обеспечения прав человека Суд ЕС обязан основываться на конституционные традиции, единые для всех стран-участниц и поэтому не может позволить деятельность несовместимую с фундамен-

тальными правами, признанными и гарантированными в Конституциях этих стран». Вместе с тем в решении по делу *Нолда* на счет Европейской конвенции о правах и свободах отмечается: «международные договоры по защите прав человека, согласно которым государства-участники сотрудничали или к которым они присоединились могут также представлять собой рекомендации, которые в свою очередь могут приниматься во внимание в рамках законодательства Сообщества»⁴.

Что касается международных рекомендаций, то Суд ЕС принял во внимание такие обязательства в рамках своих полномочий.

Дебаты, развернувшиеся в Германии и которые нашли свое отражение в разбирательстве по делу «*Саланг 1*» поставили вопрос о том, может ли передача компетенций Сообществу быть исключительной, если результатом становится уменьшение защиты основных прав, предоставляемых в рамках отдельной национальной конституции. На этот вопрос немецкий суд ответил категорическим «нет». Итальянский Конституционный суд с меньшей агрессией, но также поднимал эту тему.

Ответная реакция Суда ЕС не заставила себя долго ждать. В прошлом Суд ЕС отказывался считать законность судебных актов Сообщества под ракурсом национальных конституций⁵. Пролонгация такой позиции, очевидно, не способствовала бы удовлетворению необоснованных интересов национальных конституционных судов. Если бы эти суды были бы неудовлетворены, тогда

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆԵ

приоритетность права Сообщества⁶, которая в то время была достаточно новой и неопределенной, могла попасть под угрозу. Поэтому решение Суда ЕС в первую очередь должно опираться на конституционные традиции стран-участниц, что благотворно отразилось бы на позиции Конституционных судов этих стран по отношению к Суду ЕС. Вклад этих стран в систему защиты прав человека посредством интерпретации национальных конституций был бы впоследствии признан. Так или иначе, для Суда ЕС такой подход к праву мог бы стать чем-то вроде миной замедленного действия.

Обращение к Европейской Конвенции о правах и свободах в то время не должно было, в частности, относиться к решениям национальных конституционных судов. Поскольку все страны-участницы к тому времени ратифицировали Европейскую Конвенцию о правах и свободах, такое обращение могло придать правосудию некий специальный статус выражения общеевропейских ценностей. Тем не менее, интерпретация положений защиты прав человека не относится к ряду простых вопросов. И действительно, Европейский суд по правам человека признает важность некоторых традиций в решении вопросов, следуя идее оставить решение вопроса на усмотрение договаривающихся сторон. Данная составляющая подчеркнута как минимум одним из генеральных адвокатов. Тем не менее, привлекательность существования одного согласованного документа, устанавливающего основные права человека всегда будет существенной для Суда ЕС. С другой стороны, слишком сильный акцент на приоритетность Конвенции о правах и

свободах может в определенной степени отразиться на принципе субординации между Страсбургским судом и судом в Люксембурге.

С момента первого обращения к Европейской конвенции по правам и свободам, Суд ЕС или его генеральные адвокаты обращались к этому документу при рассмотрении более чем шестидесяти дел. Следуя примеру Суда ЕС, законодательные органы Сообщества также неоднократно ссылались на Европейскую конвенцию по правам и свободам человека в различных законах и нормативных актах. В частности примером может стать упоминание преамбулы о Едином Европейском акте⁷, статей F(2)⁸ и K.2(1)⁹ Договора о Европейском Союзе. Развитие практики последовательного обращения Суда ЕС к Европейской конвенции о правах и свободах человека в процессе судебной деятельности доказывает ее легитимность в прецедентном праве. Как высказался один из Генеральных адвокатов: «Статья F.2 Договора ЕС придает выразительность прецедентному праву Суда ЕС. По отношению к Договору ЕС, она согласовывает и консолидирует прецедентное право Суда ЕС, подчеркивая первостепенную значимость уважения фундаментальных прав человека».

Совсем недавно, когда рассматривался вопрос компетенции Сообщества по поводу присоединения к Европейской Конвенции по правам и свободам, используя в качестве законной основы Статью 235 ЕС, Суд ЕС, отклоняя эту основу, настаивал на следующем: «уже достаточно устоялось, что фундаментальные права формируют интегральную составляющую основных принципов права, соблюдение которых обеспечивает Суд ЕС. С этой целью Суд ЕС пытается наладить связь между конституционными традициями общими для государств

участниц и между руководящими указаниями, предложенными международными договорами по защите прав человека, подписанными этими странами¹⁰.

Достаточно интересно, что в деле по *Нолду* суд ЕС ссылается на Статью 234 Договора ЕС, гарантирующую международные обязательства государств-участниц, которые в свою очередь предшествуют Договору о Европейском экономическом сообществе¹¹. Пять из государств-участниц Европейского Сообщества ратифицировали Европейскую Конвенцию о правах и свободах до вступления в силу Договора о Европейском экономическом сообществе. Возможно молчание Суда ЕС по вопросу о Статье 232 ЕС является неким стимулом для дебатов, развернувшихся на национальном уровне.

Включение в Договор ЕС положений, которые могли бы подорвать его превосходство, конечно, не было целью Суда ЕС, когда он пытался определить свою собственную позицию. Однако после решения по делу *Нолда* акценты изменились, теперь ориентир сместился в сторону конституционных традиций, подкрепленных договорами, в том числе и Европейской Концепцией по правам и свободам, занимающей в свою очередь особое место в системе имеющихся договоров. Двадцатью годами ранее Суд ЕС настаивал на том, что: «необходимо основываться на общих конституционных традициях государств-участниц, а что касается международных договоров, то они могут быть приняты во внимание в рамках законодательства Сообщества»¹².

Один из наиболее спорных вопросов, который был поднят выше отмеченным движением это масштаб ответственности Сообщества и Суда ЕС в делах, касающихся прав человека. Суд ЕС выделил очень специфичную роль для себя в процессе защиты прав человека, что

проявилось в намеренной минимизации потенциальных пересечений с Европейским судом по правам человека. Но поскольку область действия правового пространства Сообщества увеличивается, эти рвения становятся совершенно напрасными. Тем не менее, при этом Суд ЕС подвергался критике за неспособность принимать вызовы по защите прав человека в силу серьезной ограниченности сферы его юрисдикции¹³.

В этой связи достаточно актуально рассмотреть некоторые судебные решения генеральных адвокатов и Суда ЕС, которые, так или иначе, обращались к Европейской Конвенции о правах и свободах.

С точки зрения взаимодействия права ЕС и Европейской Конвенции по правам и свободам достаточно интересно рассмотреть содержание статей последней еще до обращения Суда ЕС к ее положениям. Пятнадцать положений Европейской Конвенции по правам и свободам были отмечены в судебных решениях и постановлениях Суда ЕС. Примеры таких обращений представлены в таблице 1.

Статья 169 Договора ЕС позволила Комиссии предъявить иск Суду ЕС против государств-участниц за невыполнение договорных обязательств. Только дважды Суд ЕС и его генеральные адвокаты упомянули Европейскую Конвенцию по правам и свободам в рассмотрении данного дела. Казалось бы, что Комиссия обычно воздерживается от предположения, что государства-участницы нарушают положения по правам человека, отраженные в Европейской Конвенции по правам и свободам. Тем не менее, при рассмотрении одного из упомянутых дел решением Суда ЕС стала в частности необходимость разработки Судом путей применения адаптированной в национальных правовых системах

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ**ԻՐԱՎՈՒՆԵ**

Европейской Конвенции по правам и свободам человека в рамках правового пространства Сообщества.

Это косвенно ограничило сферу отступления Договора ЕС на основе Статьи 8 Европейской Конвенции о пра-

вах и свободах: «Регламент 1612/68 должен интерпретироваться также в свете требований уважения к семейной жизни, изложенных в Статье 8 Европейской Конвенции о правах и свободах. Это требования является одним из фундаментальных прав, которое согласно Суду ЕС регулируется прецедентным правом, признается Правом Европейского Сообщества и закреплено в Едином евро-

Таблица 1. Имплементация положений Конвенции по правам и свободам в судебных актах ЕС.

Статьи Европейской Конвенции о правах и свободах	Число судебных дел, в которых были сделаны ссылки	Статьи Договора ЕС, в соответствии с которыми были возбуждены дела.
Статья 2. Право на жизнь	1	Статья 177
Статья 3. Запрещение пыток	2	Статья 177
Статья 5. Право на свободу и личную неприкосновенность	3	Статья 177
Статья 6. Право на справедливое судебное разбирательство	18	5 дел по статье 173, 9- по статье 177, 3 дела рассматривались в Суде Первой инстанции, 1 отклонение апелляции против решения Суда Первой инстанции
Статья 7. Наказание исключительно на основании закона	6	1 дело по статье 173, 5 - по статье 177
Статья 8. Право на уважение частной и семейной жизни	13	1 дел по статье 169, 5- по статье 173, 5- по статье 177, 2 дела рассматривались в Суде Первой инстанции
Статья 9. Свобода мысли, совести и религии	2	1 дело по статье 173, 1 - по статье 177
Статья 10. Свобода выражения мнения	13	1 дело по статье 169, 2 - по статье 173, 10 - по статье 177
Статья 11. Свобода собраний и объединений	2	Статья 177
Статья 12. Право на вступление в брак	1	Статья 177
Статья 13. Право на эффективное средство правовой защиты	3	1 дело по статье 173, 2 - по статье 177
Статья 14. Запрещение дискриминации	6	1 дело по статье 173, 5 - по статье 177
Статья 1. Протокол N 1. Право беспрепятственно пользоваться своим имуществом.	6	1 дело по статье 173, 5 - по статье 177
Статья 2. Протокол N 4. Право на свободу передвижения	2	Статья 177
Статья 3. Протокол N 4. Право на обладанием гражданства	1	Статья 177

пейском Акте¹⁴.

Статья 173 ЕС позволяет любому физическому или юридическому лицу возбудить дело в суде ЕС против решения Европейской Комиссии и Совета. В результате обращения к Европейской конвенции по правам и свободам в судебных решениях и постановлениях было возбуждено по этой статье семнадцать дел, в большинстве случаев в ответ на индивидуальные жалобы. Наиболее часто в рассмотрении таких дел упоминается Статья 6 (Право на справедливое судебное разбирательство) и Статья 8 (Право на уважение частной и семейной жизни) Европейской Конвенции о правах и свободах. В основном эти дела относятся к недобросовестным действиям Европейской Комиссии по Статьям 85 и 86 Договора ЕС. Наложение взысканий (штрафов) на заявителя Европейской Комиссией может быть обжаловано в Суде в соответствии со статьей 173 ЕС. Статья 6 часто становилась основой процедуры, согласно которой Европейская комиссия принимала решения наложения штрафа на компанию. Часто эта роль Комиссии подвергалась жесткой критике. Поскольку Европейская Комиссия проводит расследование и определяет штрафы, двойная роль дала повод для жалоб, о том, что в таких вопросах, она должна руководствоваться процедурными требованиями Статьи 6 Европейской Конвенции о правах и свободах¹⁵.

С другой стороны, существует аргументы, касающиеся статуса Европейской Комиссии, согласно которым Суд ЕС последовательно придерживается мнения, что Комиссия не является трибуналом, который мог бы руководствоваться положениями Статьи 6 Европейской Конвенции о правах и свободах¹⁶. Так, один из Генеральных Адвокатов придерживается следующего мнения: «Эта точ-

ка зрения была неоднократно подчеркнута решениями Суда ЕС и не была опровергнута ни одним институтом Европейской Конвенции о правах и свободах»¹⁷. Тот факт, что существует такое мнение, является неким указанием на неопределенность, которая чувствуется у Люксембургского суда, относительно корректности своего толкования Европейской Конвенции о правах и свободах.

Статья 8 Европейской Конвенции о правах и свободах также отражается в непропорциональном числе судебных решений Суда ЕС. Один из аспектов, который вызывает сложности это определение распространения Статьи 8 Европейской Конвенции о правах и свободах по отношению к актам по защите частной жизни и статуса юридических лиц¹⁸. Тем не менее, другим направлением дел появившихся в круге рассмотрения Судам ЕС вызывает определенный интерес. В частности, устав, регулирующий деятельность персонала в компаниях, содержит требование по обязательному медицинскому обследованию, включающему тесты на наличие ВИЧ-инфекции или СПИД-а¹⁹. В ответ на это Суду ЕС необходимо дать свою интерпретацию Статьи 8 Европейской Конвенции о правах и свободах с целью защиты соблюдения прав человека на правовом пространстве Сообщества. В таких случаях, когда нет доступных юридических средств, возникает необходимость обращения Суда ЕС к Европейской Конвенции о правах и свободах.

Тот факт, что статьи 6 и 8 Европейской Конвенции о правах и свободах так часто упоминаются в судебных решениях, когда только Суд ЕС компетентен рассматривать законность нормативных актов тех или иных институтов Сообщества, предполагает некоторую уязвимость процедурного порядка в Сообществе. Вместе с тем, внимание которое

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆԵ

уделяет Суд ЕС этим решениям, должно стать критерием, согласно которым будет дана оценка толкований Европейской Конвенции о правах и свободах Судом ЕС. В этой области по крайней мере, нет никакой возможности для Суда ЕС решить, что совместимость с Европейской Конвенцией о правах и свободах попадает не под юрисдикцию Суда ЕС поскольку регулирование само по себе уже как правило не находится в рамках законодательства Сообщества.

Намного более важным положением для развития дискуссий о правах человека в праве сообщества была Статья 177 Договора ЕС. Из 61 судебных дел, рассмотренных нами (см. таблицу 1), 35 имеют отношение к Статье 177 Договора ЕС. Это положение дает Суду ЕС право на предварительное решение по любому вопросу относительно правильного толкования Договора ЕС, переданного ему для этой цели национальным судом или трибуналом. Именно в этом контексте возникает огромная неопределенность по поводу роли Европейской Конвенции о правах и свободах человека в правовом пространстве Европейского Сообщества. Суд ЕС придерживается того мнения, что: «с того момента как положения национальных правовых систем вторгаются в правовое поле Сообщества, Суд ЕС по праву предварительного решения должен обеспечить интерпретацию юрисдикции национальных судов, необходимую для оценки совместимости тех положений по защите прав человека, которые обеспечивает Суд ЕС и тех, которые содержатся в Европейской Конвенции о правах и свободах. Основным вопросом здесь становится определение того, когда именно национальные

суды вторгаются в юрисдикцию права Европейского Сообщества. Один из генеральных адвокатов выделяет две ситуации, когда право Европейского Сообщества требует проверки на соответствие основным правовым нормам ЕС:

- а) когда национальное законодательство имплементирует право ЕС;
- б) когда положения Договора о ЕС допускают отступление от принципа свободы передвижения, ссылаясь на оправдание ограничения на свободу передвижения.

До сегодняшнего дня Суд ЕС пока не одобрил представленную выше позицию генерального адвоката. Тем не менее, именно на стыке законодательства Сообщества и национальных законодательств сфера применения Европейской Конвенции о правах и свободах наиболее ясна. Однако, проблема не только в области действия Европейской Конвенции о правах и свободах, но больше в том, что ЕКПЧ погрязла в более масштабных проблемах права Сообщества.

Судебные дела, относящиеся к Статье 177, согласно которой права, гарантируемые Европейской Конвенцией о правах и свободах, поднимаются через весь спектр прав содержащихся в Конвенции. В отличие от действия Статьи 173, здесь не возникает естественного объяснения, что в свою очередь может стать свидетельством некоторого беспокойства о роли прав человека в ходе реализации права в Европейском Сообществе.

Большинство дел рассматриваемых в связи со статьей 173 Договора ЕС относятся либо к имплементации, либо к провалам в процессе имплементации права ЕС на национальном уровне. Именно здесь национальные суды по большей части требуют разъяснений. Именно с точным определением права Сообщества национальные суды будут иметь воз-

возможность принимать решения по поводу собственных законодательств. Не удивительно, что это положение также является серьезным поводом для беспокойства относительно взаимоотношений между Европейской Конвенцией о правах и свободах и законодательством Европейского Сообщества. Введение к вспомогательной статье в Договор ЕС является очевидным указанием на все увеличивающееся беспокойство некоторых стран-участниц относительно сдвигания границ законодательства Европейского Сообщества.

Ответ Суда ЕС на этот вопрос был достаточно четко сформулирован, однако формулировка сама по себе предполагает четкое представление о компетенции права Сообщества, которого (представления) не существует. «Следуя своей юридической практике, Суд ЕС не может интерпретировать национальные законодательные акты на предмет совместимости с Европейской Конвенцией о правах и свободах, если эти правовые акты не применимы в рамках законодательства Сообщества». Сложно не заметить что когда возникают наиболее сложные вопросы на национальном уровне и по проблемам защиты прав человека Суд ЕС приходит к заключению, что не имеет достаточной власти, чтобы разрешить возникающие проблемы, поскольку эти вопросы лежат вне юрисдикции права Европейского Сообщества.

Количество ссылок, в которых права человека упоминаются также, безусловно, зависит от искусности юристов, представляющих те или иные стороны. Редко когда государства-участницы берут противоположную суду ЕС сторону в разбирательствах по делам о защите прав человека. Многие дела, переданные на рассмотрение национальным судам по Статье 177 принимались судом,

несмотря на то, участником какого сообщества данное государство является. Тем не менее, число дел, по которым обе стороны представляли частные интересы достаточно значительно. Этот факт поднимает вопрос о горизонтальном эффекте обязательств права сообщества по правам человека. При этом горизонтальный эффект это базовый инструмент законодательства Сообщества. Право Европейского Сообщества может регулировать деятельность частных субъектов на прямую, и не только через имплементацию в национальные судебные системы. Схожие судебные дела, где были нарушены права, гарантированные Европейской Конвенцией о правах и свободах и рассматриваемые Судом ЕС в рамках положений законодательства Сообщества несомненно воплотили собой прямой горизонтальный эффект действия между двумя сторонами, представляющими частные интересы. В одном из недавно рассматриваемых судебных дел такого рода, дела Босмана, Суд ЕС безоговорочно признал, что здесь Европейская Конвенция о правах и свободах должна руководствоваться рамками права сообщества: «нормативы, установленные спортивными ассоциациями, к которым обращаются национальные суды, не могут рассматриваться как необходимые для обеспечения свободы собраний и объединений, гарантируемых Статьей 11 Европейской Конвенции о правах и свободах, теми организациями, собраниями или их сторонами, но также не могут рассматриваться как неизбежный результат этого». Границы прямого горизонтального эффекта права Сообщества очерчивают контуры принципа ответственности государств в правовом пространстве Европейского Сообщества.

Таким образом, там, где прямой горизонтальный эффект не имеет воз-

возможности обеспечивать средства правовой защиты от нарушений законодательства Сообщества, там появляется ответственность государств за невыполнение законодательства Сообщества.

Вопрос о прямом горизонтальном эффекте Европейской Конвенции о правах и свободах до сих пор не решен окончательно Европейским судом по правам человека. «Сложная проблема разрешить вопрос о том, насколько государства ответственны за нарушения прав, га-

рантированных Европейской конвенцией о правах и свободах, совершенных в пределах их территорией по отношению к частным лицам. Раздел 1 Европейской Конвенции о правах и свободах человека принимается в качестве внутреннего закона, или национальные суды могут ссылаться на него, однако имеет ограниченный эффект на третьи лица, пока Раздел 1 сам по себе не ограничивает ответственность государств».

¹ См. *Nold*, [1974] ECR 491, decision of 14 May 1974.

² См. BverfGE 37, 271; Zweite Senat: 29.5.1974.

³ См. например: *Internationale Handelsgesellschaft* [1970] ECR 1125; and *Stauder* [1969] ECR 419.

⁴ См. *Nold*, para [13].

⁵ См. *Stork*, [1959] ECR 43 (French edition).

⁶ См. *Costa v ENEL*, [1964] ECR 585.

⁷ См. OJL. 169.6.1987.

⁸ См. «Союз должен уважать основные права, гарантированные европейской конвенцией по правам человека, подписанный в Риме 4-ого ноября 1950 г., а так же, исходящие из конституционных традиций общепринятых для государств-членов, как основные принципы права сообщества.»

⁹ См. «The matters referred to in Article K.1 shall be dealt with in compliance with the European Convention for Protection of Human Rights and Fundamental Freedoms of 4 November 1950 and the Convention relating to the Status of Refugees of 28 July 1951 and having regard to protection afforded by the Member States to persons persecuted on political grounds».

¹⁰ См. *Opinion 2/94*, Accession of the Community to the ECHR, [1996] I-1759.

¹¹ См. «The rights and obligations arising from agreements concluded before the entry into force of this Treaty between one or more Member States on the one hand, and one or more third countries on the other, shall not be affected by the provisions of this Treaty.»

¹² См. *Nold*, [1974] ECR 491.

¹³ См. *Weiler*, H H H, «Thou Shalt not oppress a stranger: On Judicial Protection of Human Rights of Non EC Nationals — A Critique», (1992) 3 EJIL 65.

¹⁴ См. *Commission v Germany: Housing of Migrant Workers*, [1989] ECR 1263.

¹⁵ См. например дело *Pioneer*, [1983] ECR 1825.

¹⁶ См. *Fedetab*, [1980] ECR 3125.

¹⁷ См. *Hercules NV (The Polypropylene Cartel) v Commission*, [1991] ECR.

¹⁸ См. *Hoechst EC v Commission*, [1989] ECR 2859; *Dow Benelux NV v Commission*, [1989] ECR 3137.

¹⁹ См. *X v Commission*, [1992] ECR II-2195; *A v Commission*, [1994] ECR II-179.

ՄԻՆԵՐԳԵՏԻԿԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԵՏՂԱՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱՈՍԿՎԱԶԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆ

Տարոն ՄԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ պեդագոգիկ և իրավունքի փեսոլոգիայի և պարսոլոգիայի ամբիոնի ասպիրանտ

Ժամանակակից իրականությունը լի է հասարակական կյանքում անկանխատեսելի փոփոխություններով, որոնք դրսևորվում են արագացման տեմպերով, իսկ մի շարք հասարակություններում՝ անկայունությամբ և ճգնաժամային իրավիճակներով: Քաղաքական և հասարակական իրավիճակների աննախադեպ արագ զարգացումների պայմաններում մարդկային մտքի ոչ համարժեք կողմնորոշվելը և հաճախ անակնկալի գալը ավելի շատ սովորական, քան բացառիկ իրավիճակներ են: Այս զարգացումները նպաստում են հասարակական գիտակցությունում և ընդհանրապես մշակույթում քառասյին տարրերի ավելացմանը: Անորոշության և քառասյին պայմանների սրումն արտացոլվում է նաև ժամանակակից արվեստում, զանգվածային մշակույթում, հունամիտար գիտություններում և փիլիսոփայությունում:

Հասարակական հարաբերությունների կարգավորումը հաճախ կրում է ժամանակավրեպ բնույթ, քանի որ հասարակական զարգացման ընթացքում մարդու կողմից բացահայտվող, վեր հանվող և պոզիտիվացվող վարքագծի համընդհանուր կանոնները չեն կարողանում կարգավորել այդ նույն մարդկանց, պետությունների միջև առաջացող հարաբերությունները, քանի որ դրանք զարգանում են աննախադեպ արագ տեմպերով, կարելի է ասել՝ թռիչքաձև և պարբերական արագացումներով: Եվ այն, ինչի համար կոչված էր իրավունքը, իրականում կրում է ձևական բնույթ, քանի որ այդ նույն հասարակական հարաբերությունները կարգավորվում են անկանխատեսելի բնույթ կրող և սեփական էությունը պարբերաբար փոփոխող կար-

գավորիչներով, որոնք ոչ միշտ են իրավական բնույթի: Այլ կերպ ասած՝ այսօր ինքնակազմակերպվող հասարակական համակարգը փոփոխվում, զարգանում և ինքնակազմակերպվում է ավելի արագ, քան հասարակական հարաբերությունների կարգավորմանը կոչված իրավունքը, որի պատճառով հասարակությունը շատ հաճախ կանգնում է իրավական ճգնաժամերի առջև:

Նմանատիպ խնդիրների լուծման համար զուտ պրակտիկ փորձի վերլուծությունը, անգամ դրանց գիտական ուսումնասիրությունը գոյություն ունեցող և դասական գիտություններից մեզ հասած մեթոդներով բավարար չեն: Անհրաժեշտ է այդ նույն գիտությունների գիտական վերլուծությունը, այլ կերպ ասած՝ ժանրության կենտրոնը տեղափոխել էպիստեմոլոգիա, որը հնարավորություն է տալիս ամբողջացնել ոչ միայն պրակտիկ, այլ նաև տարբեր երևույթների ուսումնասիրման գիտական փորձը և ստեղծված արդյունքները կիրառել դասական մեթոդներով չբացատրվող հասարակական և բնական համակարգերում տեղի ունեցող երևույթների հետազոտման ընթացքում:

Աննախադեպ բարդ և որևէ ընդհանուր «զարգացման կենտրոն» չունեցող ժամանակակից աշխարհում առաջնահերթ խնդիրներից մեկը դառնում է հասարակության կայունության և կարգավորվածության մեխանիզմների ու գործոնների դուրս բերելը, ինչը թույլ է տալիս յուրացնելու դրա բովանդակությունը և հարմարվել փոփոխություններին: Այս առումով հսկա տեսական և պրակտիկ-կազմակերպական մեծ ձեռքբերում է սիներգետիկայի բովանդակությունը կազմող օրինաչափությունների մշակումը: «Քառսից կարգավորվածություն անցնելու պայմանները և ուղիները հիմնավորելով՝ սիներգետիկան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

բացահայտում է կարգի՝ որպես ոչ միայն հասարակական, այլև բնական կազմավորումների կեցության ձևի հիմնարար հիմքերը»¹:

Բնության մեջ և հասարակությունում ընթացող այս երևույթները հետազոտելու համար ժամանակակից գիտությունը մշակել է մի մոտեցում, որն ի վիճակի է բացահայտելու զարգացման և փոփոխությունների արագացումները պայմանավորող ուժերի և մեխանիզմների գործելու ձևերը: Այս մոտեցումը, որ երբեմն որոշ տեսաբաններ արդեն համարում են երևույթների դիտարկման և ուսումնասիրման ինքնուրույն պարադիգմա, կոչվում է «սիներգետիկա»:

«Սիներգետիկա» տերմինը առաջին անգամ օգտագործել է գերմանացի ֆիզիկոս, տեսաբան Յերման Յակենը: Նա օգտագործել է տերմինը՝ որպես միջառարկայական հետազոտությունների նոր ուղղության անվանում /տերմինը գալիս է հուներեն *synergia* - փոխազդեցություն, համագործակցություն բառից/: Այս տերմինը շեշտադրում է կատարում «կառուցվածքի՝ որպես միասնական ամբողջության ձևավորման ժամանակ մասերի փոխազդեցության համաձայնեցվածության վրա»²:

«Սիներգետիկան հետազոտում է որոշակի դասի (բաց և ոչ գծային) տարբեր բնույթի համակարգերի ինքնակազմակերպման մեխանիզմները՝ սկսած ֆիզիկայից, վերջացրած սոցիոլոգիայով և մարդկային Ես-ի գաղտնիքներով՝ գիտակցության և ենթագիտակցության համակարգով»³:

Սիներգետիկան թույլ է տալիս բացահայտելու «ինքնակազմակերպման ընդհանուր օրենքները և էվոլուցիայի հնարավոր ուղղությունների ընտրությունում, ինչպես նաև համալիր էվոլուցիոն ամբողջության կառուցման մեջ բնության կամայականության որոշակի սահմանները»⁴: Այն «կիրառում է բազմամակարդակ, փոխազդեցությո-

յան վրա հիմնված հետազոտական ուղղություն, որը հավասար կշիռ է տալիս ռեզուլտացիոնիզմի և հոլիստիկ հեռանկարներին և ներառում է երկու՝ ներ- և միջմակարդակային վերլուծություններ և բացատրողական մոդելներ»⁵: Վերջին տարիներից գիտության շատ փիլիսոփաներ բազմաթիվ հետազոտություններ են իրականացրել այս հիմնախնդրի ուղղությամբ⁶:

Մինչև 20-րդ դարի սկիզբները դասական գիտության պարադիգման պնդում էր, որ ցանկացած համակարգի կազմակերպումը (լինի դա ֆիզիկական թե հասարակական) հնարավոր է միայն կազմակերպվածությունից. կարգավորվածությունը ծագում է կարգավորվածությունից: Իսկ այն հարցը, թե որտեղից է առաջանում կարգավորվածությունը, դասական գիտությունը անպատասխան էր թողնում:

Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ սկսեցին փոփոխվել պարադիգմաները, որոնց վրա հիմնվել էին ամբողջ 19րդ դարի գիտությունների կառույցները: Իսկ երկու համաշխարհային պատերազմների միջև՝ 1920-1930թթ, վերջնականապես ձևավորվեց մեթոդոլոգիան, որը պարունակում է «գլոբալ մոդելը», ինչը բացակայում էր դասական գիտությունում: Դրան հիմնականում նպաստեցին բնական գիտություններում կատարված հեղափոխությունները, որոնք սկսվեցին Ալբերտ Այնշտայնի Չատուկ /1905/ և Ընդհանուր /1916/ հարաբերականության տեսություններով և շարունակվեցին քվանտային մեխանիկայի ստեղծմամբ և արագընթաց զարգացմամբ: Բնական գիտություններում տեղի ունեցած պարադիգմալ փոփոխությունները հետազոտողներին ստիպեցին երևույթները ուսումնասիրել անկախ դիտողի կարգավիճակից, որը դուրս է գտնվում ուսումնասիրվող համակարգից, ինչպես նաև ստիպեցին համակարգի, դրա մասնիկների վարքագիծը, կատարվող փոփոխությունները հասկանալ՝ շեշտը դնելով ոչ միայն արտաքին ազդակների, այլև ներքին գործոնների վրա, որոնք

էլ համակարգաստեղծ ու վարքագիծը պայմանավորող հիմնական գործոններն են:

Հետաքրքրական է, որ օբյեկտի կամ համակարգի նկատմամբ դիտարկման դիրքը, տեսանկյունը փոխելով՝ հետազոտողի առջև բացվում է այդ նույն համակարգի բոլորովին այլ պատկեր թե՛ տարածության, թե՛ ժամանակի մեջ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում համակարգի բազմակողմանի, որևէ տեսանկյունով չսահմանափակվող, որևէ մասնիկի յուրահատկությունը չհանտեսող տարածաժամանակային ուսումնասիրություն կատարել՝ դրա օբյեկտիվ պատկերը տեսնելու համար:

«Հետազոտական ծրագիրը ձևավորվում է՝ հիմք ընդունելով այդ միասնական գլոբալ մոդելը, այլ ոչ թե կոնկրետ գիտական օնտոլոգիաների կոնկրետ խնդիրներից: Դասական գիտությունը չի ձգտում կառուցել աշխարհի ամբողջական պատկերը: Աշխարհը նրա համար սկզբունքորեն բաժանված է: Ոչ դասականը ենթադրում է ինչ-որ ընդհանուր պատկեր, որում առանձին գիտությունները և գիտական ուղղությունները խաղում են ընդհանուր խճանկարի առանձին մասերի դեր: Բնական է՝ նման մոտեցումը ստիպում է կառուցել գիտությունների աստիճանակարգություն՝ կախված այն բանից, թե խճանկարի որ մասն է «ծածկում» տվյալ ուղղությունը»:

20-րդ դարի կեսերին գիտությունում տեղի ունեցավ ևս մեկ հեղափոխություն: Ժամանակակից գիտությունը ավելի հաճախ անվանում են «հետ-ոչ-դասական»՝ դրանով իսկ շեշտելով, որ գիտական գործունեության «դասական» հիմքերը կրել են ևս մեկ փոփոխություն: Սակայն պետք է նշել, որ «20-րդ դարում գիտության զարգացման երեք փուլերի առանձնացումը բավական պայմանական է»⁸: Հետ-ոչ-դասական ուղղությունում հաղորդակցության ընթացքում ներմուծվում է անտրոպիկ դիտորդը, ով, միացվելով դիտարկման ակտի՝ իրադարձության պատմամշակութային բովանդակությանը, ապատեղայնաց-

նում է իրադարձությունը ոչ թե ֆիզիկական, այլ պատմական կամ մտավոր ժամանակում՝ նախկին փորձի ռեֆլեքսիայի, ինչպես նաև բնության տեսքատի հերմենևտիկ կարդացման միջոցով⁹:

Սա 60-ական թթ.-ից ցանցային նորմերի և արժեքների մոտեցումներում հետազոտվում է Ո. Խ. Ստեպինի կողմից¹⁰, ով շրջանառության մեջ դրեց «հետ-ոչ-դասականություն» տերմինը: Սակայն, բացի քարացած և պինդ բովանդակայնությունից, գոյություն ունի նաև իրադարձության դինամիկ, վիրտուալ բնույթ, դրա կրեատիվ և կոգնիտիվ սկիզբը:

Սկսած 1950-1960թթ.-ից՝ մասնավոր գիտությունների բովանդակությունը ամրակցված է գլոբալ էվոլյուցիոնիզմին: Ուսումնասիրվող օբյեկտները սկսում են վերջնականապես դիտարկվել մարդկանցից անկախ ֆենոմեններ՝ ինքնարժեք և ինքնաբավ: Յուրաքանչյուր ֆենոմեն իրենից ներկայացնում է ինքնազարգացող բաց համակարգ: Ֆենոմենը ծնվում է, և նրա գոյությունը սահմանափակ է, նրա դրսևորման աղբյուր համարվում են նախկին ֆենոմենները. այն գտնվում է զարգացման գործընթացում:

Դասական գիտության կողմնակիցները նկարում են աշխարհի պատկերը, որում ցանկացած իրադարձություն միանշանակորեն որոշվում է բացարձակապես ճշգրտորեն տրվող սկզբնական պայմաններով (համենայն դեպս՝ սկզբունքորեն): Այս աշխարհում պատահականության տեղ չկա. դրա բոլոր դետալները մանրամասնորեն պատրաստված են և գտնվում էին «ամրակցված վիճակում»¹¹:

Դասական գիտությունում նախատեսված չէին ո՛չ սուբյեկտի ազդեցությունը օբյեկտի վրա, ո՛չ իրականության վերլուծությունը, որում սուբյեկտը և օբյեկտը միաժամանակ հանդես են գալիս որպես օբյեկտ¹²:

Փորձի ազդեցության ներքո օբյեկտի փոփոխության և համապատասխանաբար դիտարկվող պատկերի աղավաղման կամ շեղման հարցը չէր դրվում:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

Չետ-ոչ-դասական գիտությունը խոսում է և՛ այդ ազդեցության մասին, և՛ այն մասին, որ հետազոտողը և հետազոտվողը (այսպես ասած՝ և՛ սուբյեկտը, և՛ օբյեկտը) պատկանում են երևույթների առավել լայն դասին: Այսինքն՝ իրականության հետ մեկտեղ, որում օբյեկտը և սուբյեկտը բաժանված են, գոյություն ունի մեկ այլ՝ ավելի լայն իրականություն, որում և՛ մեկը, և՛ մյուսը հակադրված չեն միմյանց, սուբյեկտի ակտիվությունը ուղղված չէ օբյեկտին: Եվ ավելին, թույլ է տրվում իրականություն, որում և՛ սուբյեկտը, և՛ օբյեկտը միևնույն կերպ օբյեկտ են հանդիսանում:

Նման ֆենոմենի զարգացումը հնարավորություններ ունի: «Երևույթը մեկ անհամաչափ իրավիճակից անցնում է մյուսին: Համապատասխանաբար, հետ-ոչ-դասական գիտությունը հրաժարվում է գործընթացին մշտական և առաջադիմական զարգացում տրամադրելուց: Խոսքը ստատիկ իրավիճակների և անցման շրջանների՝ մի իրավիճակից մյուսին անցման հարաբերական փոփոխության մասին է, ինչը սահմանում է օբյեկտի բավականաչափ ուսումնասիրության պահանջը. անհրաժեշտ է ունենալ տվյալների զգալի ծավալ այն մասին, թե ինչպես է գործելու համակարգը որոշակի իրավիճակներում, և ինչպես են գործելու դրա տարրերը այդ պայմաններում»¹³:

Սիներգետիկայի ոլորտում բոլոր հետազոտությունների համար սկզբնակետ է համարվում մոտեցումը ուսումնասիրվող օբյեկտին՝ որպես համակարգ, և դրա վիճակի և տարբեր մակարդակներում զարգացման համապատասխան բնութագրությունը՝ մասերի բարդ փոխազդեցությունը հաշվի առնելով: Նման համակարգի դերում կարող են հանդես գալ և՛ բնական կազմավորումները, և՛ հասարակությունը, և՛ պետությունը, և՛ իրավունքը: Առանձնակի ուշադրություն է հատկացվում այն իրավի-

ճակներին, որոնցում համակարգի վարքագիծը որակապես փոփոխվում է միջավայրի պայմանների փոփոխման դեպքում: Սիներգետիկայի համար հետաքրքիր է անկայունությունը, երբ համակարգը սկսում է ստեղծել յուրահատուկ կառուցվածքներ. այսինքն՝ մտնում է անհավասարաչափ կարգավորման՝ ինքնակազմակերպման ընթացք:

Սիներգետիկայի զարգացումը զգալիորեն կապված է բնական գիտությունների որոշակի ոլորտների զարգացման հետ, որոնք են՝ ոչ գծային վերլուծությունը, անհավասարաչափ թերմոդինամիկան, քաոսի տեսությունը, ֆրակտալ երկրաչափությունը և այլն: Սակայն «անորոշությունը և հարաբերականությունը բնորոշ են ոչ միայն ֆիզիկական երևույթներին և քիմիական գործընթացներին, այլև նաև կենդանի օրգանիզմներին: Դրա համար փիլիսոփայության և սոցիալ-հումանիտար գիտությունների համար սիներգետիկան բացում է նոր հնարավորություններ մարդու հետ անուղղակիորեն կապված խնդիրների գիտակցման համար»¹⁴: Ինքնակարգավորման գաղափարը դառնում է նոր աշխարհահասկացողության մտածողության նոր ոճ:

Մ. Ը. Կալդիչի անվան կիրառական մաթեմատիկայի ինստիտուտի սիներգետիկայի գիտական դպրոցի հիմնադիրներից մեկի՝ Ս. Ժ. Կուրոյունովի խոսքերով «սիներգետիկան բացահայտում է կառավարման, տնտեսության և էվոլյուցիայի արագացման որոշակի սկզբունքներ: Այն հույսի փիլիսոփայություն է, քանի որ դրա խնդիրը անվերջ ճգնաժամերի կանխագուշակումը չէ, այլ դրանց շրջանցելու կառուցողական միջոցների վերհանումը»¹⁵:

Սիներգետիկայի բնագիտական արմատները ստիպում են հարց առաջադրել, թե արդյոք բնական գիտությունների ապարատում ձևավորված բանաձևերի և հավասարումների լեզուն հնարավոր է տեղափոխել հումանիտար գիտություններ:

Իրականում գոյություն ունի միայն ընդ-

հանրացումների և բացահայտումների հոսք, որում արդեն հետազոտողը սահմանում է ինչ-որ օրինաչափություններ: Սրա հետ կապված՝ ժամանակակից բնագիտությունը հանգել է որոշ եզրակացությունների՝

– գիտությունների լայն, փոխադարձ ինտեգրացիա՝ ընդհուպ մինչև դրանց միջև սահմանների վերացում,

– հետազոտության օբյեկտների «ֆենոմենոլոգիական» կամ «օրգանական» մոտեցում՝ ավանդական մեխանիկականի հետ մեկտեղ,

– ցանկացած համակարգ ունի զարգացման բազմաթիվ հնարավորություններ՝ ըստ «ոչ համաչափ» զարգացման տեսություն,

– «էվոլուցիայի անցումների» և բիֆուրկացիայի /ճյուղավորման/ տեսություններ,

– բացարձակ ճշմարտության մասին պատկերացումներից հրաժարում, հետազոտողը ստեղծում է հավանական մոդել և ոչ թե մոտենում է բացարձակ ճշմարտությանը,

– հետազոտողին մոդելի մեջ ներառելում,

– մուտք գործել գիտության համար «ոչ ավանդական» ոլորտներ,

– հասարակական գիտակցության այլ ձևերի, առաջին հերթին փիլիսոփայության հետ մերձեցում, իսկ մի շարք այլ դեպքերում՝ նաև արվեստների հետ¹⁶:

Ինչպես ցույց է տալիս խորը վերլուծությունը, ժամանակակից հումանիտար գիտություններում տեղի են ունեցել այն նույն փոփոխությունները, ինչ որ բնականներում, և նույն ժամանակաշրջանում գիտության տարերային էվոլուցիան հումանիտար և բնական ոլորտներում ընթացել է սկզբունքորեն մի ուղղությամբ և գրեթե նույն հետևանքներով: Ժամանակակից հումանիտար գիտությունները սկզբունքորեն գտնվում են զարգացման հենց նույն՝ ոչ դասական և հետ-ոչ-դասական փուլում, ինչպես բնական գիտությունները:

Իրոք, երկխոսության սկզբունքները և

մեթոդների համերաշխումը խթանում են նորի բացահայտմանը: Սիներգետիկ աշխարհայացքը ենթադրում է բնական և հումանիտար գիտությունների, արևելյան և արևմտյան աշխարհընկալման, համալիրության մասին նոր գիտության, ոչ գծայնության, քաոսի և հին մշակույթի, գիտության և արվեստի, գիտության և փիլիսոփայության միջև ներքին կապերի հաստատում: Այն ենթադրում է «փափուկ» կառավարման իմաստության բացահայտում խորհուրդների, երաշխավորության և հանգումի միջոցով, կառավարում, որ փաստացի մոտ է ինքնակառավարման, երևույթ, որին ձգտում է ժամանակակից հասարակությունը, և որը ժամանակակից սոցիոլոգիայում, քաղաքագիտությունում և իրավագիտությունում հայտնի է որպես քաղաքացիական հասարակություն:

Սիներգետիկան իմացություն է այն մասին, թե ինչպես նմանակել բնությանը վեճերի լուծման ժամանակ, փնտրել ընդհանուրի մասերի համաձայնեցման ճանապարհներ, ժամանակային կազմավորումների տարածական տեղաբաշխման հնարավորություններ, և հուշում է, թե ինչպես հստակեցնել այն, ինչն արտահայտված չէ ոչ գծային միջավայրում¹⁷:

«Սիներգետիկան կարող է դիտարկվել որպես հիմք, որի վրա կանգնելով՝ կարելի է գտնել ինչ-որ որոշակիություն բաց և անորոշ ապագայում և կարելի է հասկանալ ոչ միայն կանխատեսելիության սկզբունքային սահմանները, այլև հավերժ հեռավոր ապագայի տարրերը տեսնելու հնարավորությունն այժմյան աշխարհի համալիր էվոլուցիոն կառուցվածքներում. կարելի է ունենալ որոշակի վստահություն մեր փոփոխվող, անկայուն աշխարհում»¹⁸:

Բնական երևույթների ուսումնասիրման սիներգետիկ մոտեցումն իր ձևավորումից ի վեր անցել է երկար ճանապարհ, թեև ինքն էլ 20-րդ դարի կեսերին ստեղծված ուղղություն է, սակայն իր ուսումնասիրած երևույթների նման այն նույնպես արագ տեմպերով տարածվել է նաև հասարակա-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

կան գիտություններում՝ նշանավորելով հասարակությունում մինչ այդ անհասկանալի զարգացումների ոչ դասական մեթոդներով բացատրությունները:

Ժամանակակից գիտությունը որպես բնական և հասարակական համակարգերի հետազոտման հիմնական միջոց ընդունում է սիներգետիկ մոտեցումը՝ որպես մինչ այդ համակարգային զարգացումներում աննկատ երևույթների բացահայտման անփոխարինելի միջոց, քանի որ հենց սիներգետիկան է, որ ինդուկտիվ կերպով ընդհանրացնում է գիտության տարբեր բնագավառներում հասունացած սկզբունքները և արդեն դեդուկտիվ կերպով տարածում դրանք մյուս գիտական ուղղությունների վրա:

«Սիներգետիկան կամուրջ է գցում այն անդունդի վրա, որը կապում է առաջին՝ ռեդուկցիոնիզմ մոտեցումը երկրորդ՝ հոլիստիկ մոտեցմանը: Նաև սիներգետիկայում դիտարկումը տեղի է ունենում միջանկյալ՝ մեզոսկոպիկ մակարդակում, և միկրոսկոպիկ մակարդակում տեղի ունեցող գործընթացների մակրոսկոպիկ արտահայտություններն առաջանում են «ինքնուրույն»՝ ինքնակազմակերպման արդյունքում՝ առանց համակարգից դուրս գործող ղեկավարող և ուղղորդող «ծեռքի»¹⁹: Այս հանգամանքը ունի այնքան էական նշանակություն, որ սիներգետիկան կարելի է բնորոշել որպես ինքնակազմակերպման մասին գիտություն:

Սիներգետիկ պարադիգման ունի բազմաթիվ ուղղություններ²⁰, դրանց թվին, բացի բնագիտականից, կարելի է դասել նաև փիլիսոփայական, էպիստեմոլոգիական, սոցիալական, ֆուտուրոլոգիական և այլ ուղղությունները: Իրականում սրանք բոլորն էլ կապված են միմյանց հետ, քանի որ կիրառում են աշխարհընկալման միևնույն՝ սիներգետիկ ձևը: Պետականագիտության և իրավագիտության ոլորտում կարևոր է

դրանց գրեթե բոլորի ուսումնասիրությունը՝ իհարկե շեշտադրումը դնելով սոցիալականի վրա, քանի որ հենց հասարակությունն է պետության և իրավունքի հիմքը:

Սոցիալական սիներգետիկան հետազոտում է սոցիալական ինքնակազմակերպման ընդհանուր օրինաչափությունները, այսինքն՝ սոցիալական կարգի և սոցիալական քաոսի փոխհարաբերությունը:

Առաջին հայացքից այս հասկացությունները կարելի է բնորոշել հետևյալ ձևով. «կարգ»-ի կամ «կարգավորվածության» ներքո սովորաբար հասկացվում է ցանկացած բնույթի բազմաթիվ տարրեր, որոնց միջև կա՝ տարածության, կամ ժամանակի մեջ, կամ էլ դրանցից երկուսում էլ կան կրկնվող կայուն հարաբերություններ: Հետևաբար, «քաոսը» սովորաբար համարում են բազմաթիվ տարրերը, որոնց մեջ չկան կայուն հարաբերություններ: Քանի որ ինքնակազմավորումը որոշակի օբյեկտիվ իրականության որակական և կառուցվածքային փոփոխություն է, սիներգետիկան հանդիսանում է զարգացման տեսություն: Սակայն նման պնդումը պահանջում է հենց «զարգացում» հասկացության էական նորացում:

Ավանդական տեսությունը (Հ. Հեգելի և Կ. Մարքսի դիալեկտիկական կոնցեպցիանները) զարգացումը դիտարկում էր որպես մի կարգից մյուսին անցնելու ընթացք: Քաոսը կամ ընդհանրապես հաշվի չէր առնվում, կամ դիտարկվում էր մի տեսակի կարգից մյուսին (սովորաբար ավելի բարդ) անցման ինչ-որ կողմնակի և հետևաբար՝ ոչ էական արդյունք: Սիներգետիկայի համար բնութագրական է քաոսի դիտարկումը որպես զարգացման նույնպիսի օրինաչափ փուլ, ինչ որ կարգն է: Ի դեպ, ի տարբերություն սկզբնական քաոսից տիեզերքի ստեղծման և կրկին քաոսի վերացման ինչ պատկերացումների՝ սիներգետիկան զարգացման ընթացքը դիտարկում է որպես կարգավորվածության և քաոսի օրինաչափ ու բազմակի հեթոսփոխում (այսպես կոչված՝ դետերմինացված

քառս)²¹:

Հետաքրքրական է, որ «բևեռային կատեգորիաների և բազմաթիվ հակասություններ առաջացնող հեգելյան հսկա համակարգում կա ամեն ինչ՝ բացի կարգավորվածության և քառսի հակասությունից: Այս տեսանկյունից սիներգետիկան չի համարվում զարգացման հին տեսության տեղափոխումը նոր լեզվի, այլ իրենից ներկայացնում է հեռու գնացող զարգացում և ընդհանրացում»²²:

Ռուսական արմատներով բելգիացի գիտնական, նոբելյան մրցանակակիր Ի. Պրիգոժինը հիմնել է մի ամբողջ դպրոց, որն ուսումնասիրում է քառսային համակարգերի ինքնազարգացման և քառսից կարգավորվածության անցման առանձնահատկությունները: Նա, ինչպես նաև ռուս մեկ այլ գիտնական Ն. Ն. Մոխսեևը մշակել են գլոբալ էվոլյուցիայի տեսությունը, որի համաձայն ցանկացած համակարգի զարգացումը տեղի է ունենում «էվոլյուցիայի ինչ-որ անցումում», երբ մախորք և միանշանակորեն որոշակիացված են զարգացման ուղիները: Սակայն «անցումները» որոշակի ժամանակ անց սպառում են իրենց: Համակարգը այդ ուղյակն կանոններով այլևս չի կարողանում զարգանալ, իսկ ոչ մի այլ կանոն «առկա պայմաններում տրված չէ»: Եվ համակարգը անցնում է «ճյուղավորման կետին»՝ «էվոլյուցիայի նոր անցման» փնտրման պահին²³: Դրա հետ մեկտեղ համակարգը մասնատվում է իրեն կազմող տարրերի, որոնց մի մասը ոչնչանում է, մի մասը անդամալիորեն փոփոխվում է, իսկ ամբողջի նոր «հավաքման» միջոցը որոշվում է նրանով, թե ինչպիսին կլինի «էվոլյուցիայի նոր անցումը»²⁴:

Պրիգոժինյան պարադիգման հատկապես հետաքրքիր է նրանով, որ այն ուշադրությունը սևեռում է իրականության ասպեկտների վրա, որոնք ավելի շատ բնութագրական են սոցիալական փոփոխությունների արագացմանը ժամանակակից իրականությունում՝ ապակարգավորվածությանը, անկայունությանը, բազմազա-

մությանը, անհավասարաչափությանը, ոչ գծային հարաբերություններին, որոնցում փոքր ազդակը մուտքում կարող է հանգեցնել ցանկացածի չափ մեծ արձագանքի դուրս գալիս, և իրականության տեմպերին՝ ժամանակի ընթացքի նկատմամբ բարձր զգայունակությանը:

Այսինքն, խոսելով սիներգետիկ զարգացումների մասին՝ չպետք է պատկերացնել իրական կյանքից դուրս, հասարակությունից հեռու ինչ-որ դրսևորումներ, քանի որ դրանք տեղի են ունենում հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում և իրենց անմիջական ազդեցությունն են գործում հասարակական հարաբերությունների կարգավորման նորանոր մեխանիզմների առաջացման և դադարման վրա: Դրանց մանրակրկիտ և հետևողական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատասխանելու, թե անցումային հասարակությունները, որոնց բնութագրական են անկայունություն և հասարակական կյանքի առանձին ոլորտներում քառսային զարգացումներ, ինչպես են տեղի ունենում պետականության ատրիբուտների առաջացումը կամ հետընթաց զարգացումը, որոնք շատ հաճախ դուրս են գտնվում մարդկային ծրագրավորված հսկողությունից, և որոնցում մեծ մասամբ կանխորոշիչ դեր են ունենում համակարգային հիշողության առանձնահատկությունները:

Ակնհայտ է, որ Պրիգոժինի և բրուսելյան դպրոցի իր աշխատակիցների աշխատանքը «խորհրդանշում են գիտական հեղափոխության հերթական փուլը, քանի որ խոսքը ոչ միայն բնության, այլև հասարակության հետ նոր երկխոսության մասին է» և պետք է նկատել, որ «բրուսելյան դպրոցի գաղափարները նոր, փոփոխության համընդգրկուն տեսություն են»²⁵:

Քառսի սիներգետիկ կոնցեպցիան եականորեն տարբերվում է այդ հասկացության մեկնաբանությունից, որը բացարձականացնում է քառսը (ժամանակակից դեկոնստրուկտիվիզմը): Եվ եթե զարգացումը կարգուկանոնի և քառսի օրինաչափ հեր-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

թափոխությունն է, ապա դա նշանակում է, որ քառսը տիրապետում է նոր կարգ ծնելու ստեղծագործական ուժին /հնարավորությանը/: Այս պայմաններում էական է, որ քառսից նոր կարգի ստեղծումը չի կատարվում տվյալ իրականության հետ կապված ինչ-որ արտաքին ուժով, այլ ունի տարերային բնույթ: Ահա թե ինչու սիներգետիկան համարվում է ինքնակազմակերպման տեսություն և ոչ թե կազմակերպման:

Քառսային համակարգերի հետազոտման առանձնահատկությունները տարածվեցին նաև հասարակական գիտություններում: Տպագրված մի շարք գիտական աշխատություններում հիմնավորվում էր Քառսի տեսության կիրառելիությունը հասարակական համակարգերի վրա, որոնցում ներկայացվում էին իրականության նոր իրողությունները, պատճառահետևանքային կապերի նոր ուղղությունները և պատահական վարգագծի և համակարգային դինամիկայի առանձնահատկությունները²⁶:

Սրա հիման վրա հիմնականում արևմտյան երկրներում արագ տեմպերով զարգանում է Համալիր համակարգերի տեսությունը: Համալիրության տեսությունը, որը կապված է Քառսի տեսության հետ, ճանաչում գտավ գիտական հանրության մեջ 20-րդ դարի վերջերում այնպիսի հետազոտողների աշխատությունների շնորհիվ, ինչպիսիք են Ռոջեր Լևինը²⁷, Մ. Միշել Ուալդրոպը²⁸:

«Համալիր համակարգերի ինքնակազմակերպման ժամանակակից տեսությունը սահմանում է բազմասեռ սոցիալական և աշխարհաբաղաբանական կառուցվածքների համակեցության հնարավոր ձևերի հասկացությունը դրանց զարգացման տարբեր մակարդակներում»²⁹: Այս տեսությունը կոչվում է «համալիր» ոչ թե այն պատճառով, որ տարածության մեջ համակարգն ունի համալիր էություն, այլ որ դրա ներքին բարդ կառուցվածքը, մասնիկների հարա-

բերական ինքնուրույնությունը պայմանավորում են այդ համակարգի անկանխատեսելի վարքագիծը ժամանակի մեջ: Եվ հետևաբար «համալիրությունը քառսի և կայունության միջև ընկած խառը /հիբրիդ/ իրավիճակ է»³⁰: Սոցիալական համակարգերը բիոլոգիական համակարգերի նման տարբերվում են ֆիզիկական համակարգերից, քանի որ դրաք հարմարվողական են և տեղեկատվություն են կրում իրենց միջավայրի և անցյալի վերաբերյալ, ինչը երբեմն, նույնիսկ շատ հաճախ, որոշիչ դերակատարություն է ունենում քառսից կարգավորվածության անցման ժամանակ դրա տարատեսակ զարգացումների ընտրության վրա:

Քրիս Լանգստոնը փաստում է, որ քառսի սահմանային վիճակում կան «քառսային անդունդում» դիտարկվում են «բիոլոգիական էվոլյուցիա, ... մշակութային էվոլյուցիա, միավորող և վերամիավորող, սերունդների և հազարավոր մոլոնների վրայով թռչող կոնցեպցիաներ»³¹: Նա փաստում է, որ կյանքի գործընթացները, այդ թվում՝ սոցիալական ակտիվությունը, միաժամանակ կայուն են և քառսային, անփոփոխ և փոփոխվող, ի վիճակի են պահպանելու վերաբերելի տեղեկատվությունը, քանի դեռ ընթացակարգերը դինամիկ են: Մինչդեռ համալիր կայունության ձգձգվող մնացորդում կազմակերպված վիճակը կրում է տեղեկատվություն, որն օգնում է երաշխավորել իր գոյատևումը և վերարտադրությունը, իսկ հասարակական համակարգերի համար դրանց գոյատևումը և վերարտադրությունը երաշխավորող հիմնական երևույթը պետականությունն է:

Համալիր համակարգերի արդյունքները և հետևանքները տեսականորեն չեն կարող կանխորոշվել, թեև դրանց վերաբերյալ կա որոշակի կանխատեսելիություն: Դրանց դինամիկան անպայմանորեն չի նպաստում արդյունավետությանը, և «երբ մեկ անգամ կայունությունը հաստատվում է, համակարգը ձգտում է փակել այն հաստատուն վիճակում և բացառել այլ հաստատուն վի-

ճակներ»³²: Կրթական, քաղաքական, իրավական, այլ հասարակական շարժումները, դրանում շարժող ուժերի դերը, տեխնոլոգիաները կարելի է բացատրել նաև Համալիր համակարգերի տեսության միջոցով:

Այսպիսով, պետք է փաստել, որ երևույթների ուսումնասիրման սիներգետիկ մոտեցումը, որն իր մեջ ներառում է համակարգային զարգացումների ուսումնասիրման մի քանի տեսություններ (Քաուսի, Համալիր համակարգերի, Դիսսիպատիվ կառուցվածքների, Համակարգերի ինքնակազմակերպման, Կառուցվածքային պատահականության և այլ տեսություններ), այսուհետ անհրաժեշտ է դիտարկել որպես ժամանակակից գիտության անբաժանելի մաս, ուրույն կամուրջ, որը մեթոդոլոգիական տեղեկատվության փոխանակման հնարավորություն է ստեղծում բնական և հասարակական գիտությունների միջև:

Սիներգետիկական կարելի է դիտարկել որպես ժամանակակից, ամենից խոստումնալից հետազոտական ծրագրերից մեկը: Այն ուղղված է ցանկացած տիպի համալիր համակարգերի էվոլուցիայի և ինքնակազմակերպման ընդհանուր ուղղությունների փնտրմանը՝ անկախ դրանց առանձին տարրերի և ենթահամակարգերի: Սիներգետիկական իր բնույթով միջառարկայական և բազմառարկայական տեսություն է: Սրա՝ առավել բովանդակալից կիրառման համար անհրաժեշտ է միջառարկայական հետազոտություն և այնպիսի հասկացությունների պարզաբանում, ինչպիսիք են ատոտրակտորները, համակարգային ճյուղավորումները (բիֆուրկացիա) և այլն:

Սիներգետիկայում զարգացած ոչ գծային էվոլուցիոն մոդելները կարող են կիրառվել «մարդկային կոգնիտիվ և մշակութային ակտիվության հասկանալու, ինչպես նաև համալիր հասարակական համակարգերի կառավարելու համար»³³:

Տեսությունը կարող է օգտագործվել որպես մեթոդոլոգիական գործիք նաև պետականագիտությունում և իրավագիտու-

յունում: Ժամանակակից իրավաբանների շրջանում իրավագիտության տեսամեթոդոլոգիական խնդիրների լուծման ժամանակ սիներգետիկ հետազոտությունների օգտագործման նպատակահարմարության հետ կապված գերիշխում է մերժողական վերաբերմունք: Սակայն պետք է փաստել, որ արդի պետականագիտական և իրավագիտական շատ խնդիրներ դեռևս չեն ստանում գիտականության հիմնավորված լուծումները: Դրա պատճառներից մեկը, կարծում ենք, դրանց հետազոտումն է դասական մեթոդներով, որոնք, իհարկե, անհրաժեշտ են, սակայն ոչ բավարար համակարգային էություն ունեցող երևույթները օբյեկտիվ հետազոտելու համար: Անհրաժեշտ է դրանք դիտարկել հետդասական գիտական մեթոդներով, որոնք, հարստացված լինելով ոչ միայն հումանիտար, այլև բնական գիտությունների զարգացման արդյունքներով, հնարավորություն են տալիս պետականության երևույթների զարգացման դիտարկումը կազմակերպել առավել օբյեկտիվ և բազմակողմանի հիմքերի վրա՝ հարաբերական տարածաժամանակի, ինչպես նաև ներհամակարգային առանձնահատկությունները հաշվի առնելով, որոնց մեջ էական դեր է կատարում հենց այդ նույն համակարգին առնչվող համակարգային սկզբնական հիշողությունը:

«Սիներգետիկայի ճանաչողական մոտեցումների կիրառման նշանակությունն իրավաբանական գիտությունում ընդգծվում է իրավական ճանաչողության ճգնաժամի մեթոդոլոգիական լուծմամբ՝ հիմք ընդունելով մի քանի մոտեցումների սինթեզը»³⁴:

«Իրավական օբյեկտներն այսուհետ չեն կարող ուսումնասիրվել այլ գիտություններից, հասարակական զարգացումից մեկուսացված վիճակում»³⁵:

Եվ, մեր կարծիքով, մեթոդոլոգիական բազմակարծության պայմաններում սիներգետիկայի հենց մեթոդոլոգիական մշակումները կարող են դիտարկվել որպես հիմնական, անկյունային ուղենիշներ մի-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ջառարկայական երկխոսության համար:

Մյուս կողմից սիներգետիկան բացահայտում և ընդգծում է ինքնակազմակերպվող հասարակական համակարգում մարդու դերը, ով, լինելով համալիր համակարգի բաղկացուցիչ մասը և հնարավորություն ունենալով էմպիրիկ փորձը համատեղել տեսական վերլուծության արդյունքների հետ, կարող է անմիջականորեն ազդել այդ համակարգի, ինչպես նաև այդ համակարգից սնուցվող այլ համակարգերի զարգացումների և հնարավոր ճյուղավորումների ընտրության վրա:

Այն, ինչ կատարվեց բնական գիտություններում 20-րդ դարասկզբին հիմնականում Հարարերականության տեսությունների հայտնաբերմամբ, փոխեց բնական երևույթների և համակարգերի դիտարկման

տեսանկյունը: Այդ երևույթների դիտարկման նյութոսյան մոդելը ցույց տվեց իր սահմանափակ բնույթը: Այն, ինչ տեղի է ունենում ժամանակակից սոցիոլոգիայում և պետականագիտությունում, կարծես թե հին տեսանկյունը ամեն կերպ պահպանելու քայլեր լինեն, թեև իրականում արդեն իսկ առկա է բավարար հիմք և պոտենցիալ մեկ դար առաջ բնագիտությունում կատարված պարադիգմալ հեղափոխության արդյունքները հասարակագիտությունում կիրառելու համար: Եվ այսօր դրա հնարավորությունը տալիս է սիներգետիկ մոտեցումը, որը, ունենալով էպիստեմոլոգիայով հիմնավորված գոյության արդարացված հիմքեր, կարող է հասարակագետներին և պետականագետներին ցույց տալ հասարակության և պետության ներսում կատարվող այնպիսի երևույթներ, որոնք անհնար է նկատել և հետազոտել դասական գիտության մեթոդոլոգիայով:

- ¹ М. П. Бузский, Современные концепции социальной синергетики, <http://spkurdyumov.narod.ru/D21Burskiy.htm>
- ² H. Haken, SYNERGETICS, An introduction. Nonequilibrium Phase-Transitions and Self-Organization in Physics, Chemistry and Biology, *Springer*, (1977). էջ 300:
- ³ Е. Н. Князева, С. П. Курдюмов, Синергетическая парадигма. Основные понятия в контексте истории культуры, <http://spkurdyumov.narod.ru/synpar.htm>
- ⁴ H. Haken and H. Knyazeva, Arbitrariness in Nature: Synergetics and Evolutionary Laws of Prohibition, *Journal for General Philosophy of Science* 31, Netherlands, Kluwer Academic Publishers, 2000, էջ 57-73:
- ⁵ Peter A. Corning, "The Synergism Hypothesis": On the Concept of Synergy and its Role in the Evolution of Complex Systems, *Journal of Social and Evolutionary Systems* 21 (2), ISSN 1061-7361, Elsevier Science Inc., 2000, էջ

148:

- ⁶ Օրինակ Wimsatt, W. C., "Complexity and Organization," (1974), Bechtel, W., ed. *Science and Philosophy: Integrating Scientific Disciplines*. Dordrecht: Martinus Nijhoff Publishers, 1986
- ⁷ Буровский А. М., Постнеклассическая парадигма и гуманитарные науки // Сибирская локальноэтническая культурная ситуация в конце XX века, Материалы Вторых параславянских чтений, 1998, էջ 40-55:
- ⁸ Моисеева И. Ю., Концепция самоорганизации в контексте постнеклассической парадигмы, Оренбургский государственный университет, Вестник, ОГУ, 11'2005, էջ 83:
- ⁹ Аршинов В. И., Буданов В. Г., Войцехович В. И., Принципы процессов становления в синергетике, Труды международной конференции "Логика, методология, философия науки". Секция 8, Методологические проблемы синергетики, 1995, Т. VII, էջ 3-7:

- ¹⁰ Степин В. С., Кузнецова Л. Ф., Научная картина мира в культуре техногенной цивилизации. М.: Изд-во ИФ РАН, 1994, стр. 273, Степин В. С., Филосовская антропология и философия науки, М. Высшая школа, 1992, т 300:
- ¹¹ Ilya Prigogine, Isabelle Stengers, Order Out of Chaos: men's new dialogue with nature, Bantam Books, 1984, Цшў Прогожин И., Стегнерс И., Порядок из хаоса: Новый диалог человека с природой. М., Прогресс, 2003, т 312:
- ¹² Буровский А. М., ηηη 7, т 40-55:
- ¹³ Моисеева И. Ю., ηηη 8, т 80:
- ¹⁴ Ольга Астафьева, Мир синергетики как междисциплинарного научного направления, <http://spkurdyumov.narod.ru/Astaphyeva1.htm>
- ¹⁵ Курдюмов С. П. Синергетика и новое мировидение // Синергетика. Философия. Культура/ Под общ. Ред. В. К. Егорова, В. С. Егорова, Ф. Д. Демидова. М.: Изд-во РАГС, 2001, т 4-9:
- ¹⁶ Буровский А. М., ηηη 7, т 40-55:
- ¹⁷ Князева Е. Н. Синергетический вызов культуре // Синергетическая парадигма. Многообразии поисков и подходов. М.: 2000, т 243-261:
- ¹⁸ H. Knyazeva, S. P. Kurdyumov, Nonlinear synthesis and co-evolution of complex systems, (Journal) World Futures, 2001, Vol. 57, т 239-261:
- ¹⁹ Данилов Ю. А., Нелинейные волны . Самоорганизация, М., Наука, 1983, т 189:
- ²⁰ H. Naken and H. Knyazeva, ηηη 4, т 58:
- ²¹ Карери Д., Порядок и беспорядок в структуре материи. М., 1985, т 13, 159:
- ²² В. П. Бранский, Социальная синергетика как постмодернистская философия истории, Общественные науки и современность 1999, # 6, т 117:
- ²³ Моисеева И. Ю., ηηη 8, т 82:
- ²⁴ Ilya Prigogine, Isabelle Stengers, Order, ηηη 11, т 312:
- ²⁵ Моисеева И. Ю., ηηη 8, т 82:
- ²⁶ St'u, οηηηηη, James Gleick, Chaos: Making a new science. New York: Freeman, 1987:
- ²⁷ Roger Lewin, Complexity: Life at the edge of chaos. New York; Macmillan, 1992:
- ²⁸ Waldrop, M. M., Complexity: The emerging science at the edge of order and chaos. New York: Simon & Schuster, 1992:
- ²⁹ H. Knyazeva, S. P. Kurdyumov, Nonlinear synthesis and co-evolution of complex systems, (Journal) World Futures, 2001, Vol. 57, т 239-261:
- ³⁰ Russ Marion, The Edge of Organization, Chaos and Complexity Theories of Formal Social Systems, SAGE Publications, Thousand Oaks, London, New Delhi, 1999, т 23:
- ³¹ Roger Lewin, ηηη 27, 1992, т 214:
- ³² Russ Marion, ηηη 30, т 27:
- ³³ H. Naken and H. Knyazeva, ηηη 4, т 57-73:
- ³⁴ Кривцова Ирина Сергеевна, Эвристическая ценность идей синергетики в сравнительно-праеоеом познании, Одесская юридическая академия, www.comparativelaw.org.ua/dopovidi/1_9.doc
- ³⁵ Д. А. Керимов, Методология права, Предмет, Функции, Проблемы, Философии Права, Москва 2008, т 244:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԿԱՐԳԱՊԱՐԱԿԱՆ ԶԱՆՑԱՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԸ՝ ԸՍՏ ԶԱՅԱՍԱՆԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

Տիրայր ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

Ցանկացած իրավախախտման, այդ թվում նաև կարգապահական զանցանքի սուբյեկտը մարդն է, որը հասել է օրենքով սահմանված տարիքի և մեղսունակ է, այսինքն՝ հասկանում է իր գործողությունների նշանակությունը և ունակ է ղեկավարելու դրանք: Կարգապահական զանցանքի սուբյեկտ է համարվում աշխատողը՝ գործատուի հետ աշխատանքային հարաբերության մեջ մտած ֆիզիկական անձը: Փաստորեն, կարգապահական պատասխանատվության սուբյեկտ լինելու համար անհրաժեշտ նախապայման է համարվում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելը: Ընդ որում, որպես կարգապահական պատասխանատվության սուբյեկտ հանդես են գալիս ոչ թե գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող բոլոր աշխատողները, այլ նրանք, ովքեր թույլ են տվել աշխատանքային կարգապահության խախտում: Իսկ այդպիսին կարող է համարվել միայն այն ֆիզիկական անձի (Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ օտարերկրացի, այդ թվում՝ քաղաքացիություն չունեցող անձ) արարքը, որը գործատուի հետ գտնվում է աշխատանքային իրավահարաբերությունների մեջ և խախտել է աշխատանքային կարգապահությունը¹:

Խոսելով կարգապահական պատասխանատվության սուբյեկտի մասին՝ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքն ամրագրում է «աշխատող» եզրույթի սահմանումը՝ այն դարձնելով իրավական կա-

տեգորիա: Ըստ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի՝ «աշխատողը սույն օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի»:

Որպեսզի հնարավոր լինի անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իր կատարած հակաիրավական արարքի համար, նա պետք է օժտված լինի հատուկ իրավական հատկանիշով, այն է՝ աշխատանքային իրավասուբյեկտությամբ:

Աշխատանքային իրավասուբյեկտություն ասելով նկատի ունենք քաղաքացու աշխատանքային օրենսդրության նորմերով ապահովվող հնարավորությունը՝ ունենալու և իր գործողություններով ձեռք բերելու, ինչպես նաև իրականացնելու աշխատանքային իրավունքներ և կատարելու աշխատանքային պարտականություններ, որոնք կազմում են կոնկրետ աշխատանքային հարաբերության բովանդակությունը²: Նշված ձևակերպման մեջ ամփոփված են երկու տարրեր՝ աշխատանքային իրավունակությունը և աշխատանքային գործունակությունը, որոնք ավանդաբար ներառվում են իրավասուբյեկտություն հասկացության մեջ: Ընդ որում, պետք է նկատել, որ աշխատանքային գործունակությունն իր հերթին ներառում է նաև կատարված իրավախախտման համար պատասխանատվություն կրելու ունակությունը³ կամ աշխատանքային ղեկիկտընդունակությունը, որի տակ պետք է հասկանալ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար անձնական պատասխանատվություն կրելու ունակությունը:

Աշխատանքային իրավասուբյեկտության պայմաններ են համարվում տարիքային և կամային (կապված անձի հոգեբանական վիճակի հետ) չափանիշները: Որոշ հեղինակներ առանձնացնում են նաև երրորդ չափանիշը՝ անձի ֆիզիկական վիճակը: Այսպես, աշխատանքային իրավունքի տեսության մեջ, գիտնականների մեծամասնության կարծիքով, աշխատանքային իրավասուբյեկտությունը կախված չէ անձի հոգեբանական կամ ֆիզիկական վիճակից⁴: Նման ձևակերպման մեջ, փաստորեն, Ա.Ս. Լուշնիկովն առանձնացնում է հենց ֆիզիկական վիճակի չափանիշը:

Աշխատանքային իրավունքում տարիքը դասվում է որոշակի իրավաբանական փաստերի թվին, քանի որ, նորմում ամրագրելով անձի տարիքը, օրենսդիրը սահմանում է նաև դրա հետ կապված իրավական հետևանքները աշխատանքային իրավունքի ոլորտում: Տարիքը որոշակի կենսական փաստ է, որն իրենից ներկայացնում է միջինացված-միջնորդավորված (усредненно-опосредованный) և նորմատիվային ամրագրում ստացած անձի զարգացման փուլ, որի վրա հասնելու հետ իրավունքի նորմերը կապում են այս կամ այն իրավական հետևանքները⁵:

Աշխատանքային հարաբերության մեջ մտնելու համար ֆիզիկական անձի սկզբնական տարիք համարվում է 16-ը, իսկ որոշ պայմանների առկայության դեպքում՝ 14-ը: Հենց նման դիրքորոշում է որդեգրել հայ օրենսդիրը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ աշխատանքային իրավունակությունը և աշխատանքային գործունակությունը լրիվ ծավալով ծագում են 16 տարեկան դառնալու պահից՝ բացառությամբ աշխատանքային օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի: Այսինքն, ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության նորմերի՝ կարգապահական զանցանքի սուբյեկտ կարող է լինել անձը, որը հասել է 16 տարեկանի, իսկ որոշ դեպքերում աշխատող կարող են համարվել նաև 14 տարեկանները, եթե նրանք

աշխատում են ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ: Հարկ է նկատել, որ աշխատանքային օրենսդրությամբ 14 տարեկան անձանց աշխատող համարելը չի կարող ընկալվել բացարձակ առումով, քանի որ որոշ դեպքերում կարող է արգելվել տասնչորսից տասնվեց տարեկան անչափահասների հետ աշխատանքային պայմանագրի կնքումը, եթե նրանք ներգրավում են այնպիսի աշխատանքների, որոնց համար օրենսդրությամբ սահմանված է արգելք⁶ (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 257-րդ հոդված, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» թիվ 2308-Ն որոշում):

Անձի մոտ իրավագործունակության առկայությունը վկայում է, որ ինքն ի վիճակի է իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու ու ղեկավարելու դրանք և դրանց համար կարող է կրել իրավաբանական պատասխանատվություն: Հետևաբար, եթե անչափահասը, որը գտնվում է աշխատանքային հարաբերություն մեջ այս կամ այն կազմակերպության հետ, մեղավոր ձևով խախտի իր աշխատանքային պարտականությունները, ապա նա կենթարկվի կարգապահական պատասխանատվության, իսկ անչափահաս լինելու փաստը հիմք չի տալիս նրան ազատելու նման պատասխանատվությունից:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում խոսվում է 16 տարեկան դառնալու պահից իրավագործունակության՝ «լրիվ ծավալով» ծագման մասին, ինչը մեկնաբանման նյութ է: Արդյո՞ք նման ձևակերպումը կարող է նշանակել, որ 14-ից 16 տարեկան անչափահասները, որոնք աշխատում են աշխատանքային պայմանագրի հիման վրա, օգտվում են ավելի սահմանափակ իրավունքներից և

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

կրում են ավելի սահմանափակ պարտականություններ, քան 16 տարեկան դարձած աշխատողները: Կարծում ենք, որ աշխատանքային հարաբերություններում մինչև 16 տարեկան անչափահասներն ունեն նույն իրավունքները և պարտականությունները, ինչ 16 տարին լրացած անչափահասները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ որևէ տարբերակում չի դրվում տարիքային այդ խմբերի աշխատանքային իրավունքների և պարտականությունների միջև: Իսկ եթե որոշ դեպքերում տարբերություններ են դրվում աշխատողների իրավունքների և պարտականությունների միջև՝ որպես սահմանազատման հիմք ընդունելով տարիքը, ապա նույն խմբի մեջ ներառվում են թե՛ 14-ից 16 տարեկան և թե՛ 16-ից 18 տարեկան անչափահասները: Որպես դրա օրինակ կարող են լինել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածի 6-րդ մասը, 156-րդ հոդվածի 2-րդ մասը, 209-րդ հոդվածի 3-րդ մասը, որտեղ որպես առանձին կատեգորիայի աշխատողներ առանձնացնում են մինչև 18 տարեկան աշխատողները: Այստեղից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում չպետք է օգտագործվի «լրիվ ծավալով» արտահայտությունը, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, որոշ դեպքերում անձը չի կարող օգտվել որոշակի իրավունքներից և պարտականություններից մինչև 18 տարեկան դառնալը: Ուստի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում «լրիվ ծավալով» արտահայտությունը ենթակա է վերախմբագրման, քանի որ մինչև 18 տարեկան անձանց համար կարող են կիրառվել աշխատանքային իրավունքների որոշակի սահմանափակումներ: Միաժամանակ առաջարկում ենք վերախմբագրելիս նշել նաև, որ աշխատանքային իրա-

վունքի սահմանափակումներ կարող են կիրառվել նաև աշխատողների որոշակի այլ կատեգորիաների նկատմամբ, ինչպիսիք են, օրինակ, հղի կանայք, մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողները և այլն:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը արգելում է մինչև 14 տարեկան անձանց հետ աշխատանքային պայմանագրի կնքումը (17-րդ հոդված, 3-րդ մաս): Մինչդեռ կան որոշակի ոլորտներ, որտեղ անձը կարող է ներգրավվել աշխատանքի մինչև 14 տարեկան դառնալը: Օրինակ՝ թատրոն, կինեմատոգրաֆիա, շոու բիզնես, կրկես և այլն: Սակայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքն անհասկանալիորեն արգելք է դրել մինչև 14 տարեկան անձանց հետ աշխատանքային պայմանագրի կնքելու իրավունքի վրա, ինչը, կարծում ենք, սխալ է, քանի որ Հայաստանի Հանրապետությունն իր ներքին օրենսդրության մեջ ամբողջությամբ չի ամրագրել այնպիսի նորմեր, որոնք ամբողջությամբ կբավարարեին տարիքային բոլոր խմբերի աշխատանք կատարելու իրավունքին առնչվող խնդիրները: Այսպես, Հայաստանի Հանրապետությունը 2006 թվականի հունվարի 27-ին վավերացրել է «Նվազագույն տարիքի մասին» թիվ 138 կոնվենցիան⁷, որը թույլ է տալիս որոշակի դեպքերում բացառություն նախատեսել և թույլ տալ անձին ներգրավելու աշխատանքի առանց տարիքի սահմանափակման (Article 5, 3-րդ մաս և Article 7): Քանի որ պետությունը չի ընձեռել նման հնարավորություն, այսօր փաստորեն մինչև 14 տարեկան անձինք ներգրավում են աշխատանքի, սակայն նրանց հետ չի կնքվում աշխատանքային պայմանագիր, և նրանք վարձատրություն չեն ստանում: Այս առումով առաջարկում ենք վերախմբագրել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը: Ընդ որում, տվյալ հոդվածը վերախմբագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք հանգամանքներ: Մասնավորապես, պետք է դրվեն սահմանափակումներ մինչև 14 տարեկան անձանց հետ

կնքվող աշխատանքային պայմանագրում նախատեսվող աշխատանքային պարտականությունների շրջանակի համար, ինչպես նաև պետք է բացառություններ սահմանվեն 14 տարեկանից ցածր անձանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելիս այնպիսի ոլորտներում աշխատանքի ներգրավման նպատակով, որոնցում ներգրավելը կխանգարի նրանց բնականոն զարգացմանը, կազդի նրանց համար պարտադիր կրթություն ստանալուն և կազդի նրանց առողջության վրա: Նման սահմանափակումները բխում են նաև թիվ 138 կոնվենցիայի դրույթներից: Բացի այդ՝ հարկ է նշել, որ կան ոլորտներ, որոնցում անձը կատարում է աշխատանք իր բնածին տաղանդի շնորհիվ՝ մարմնամարզություն, կերպարվեստ, երաժշտություն և այլն, իսկ նման դեպքերում պարբերաբար բեմադրվող շուկաներին, տարատեսակ միջազառուներին երեխայի մասնակցությունը որոշակի վարձատրության դիմաց կարող է ոչ միայն լավ խթան հանդիսանալ անձին ավելի շատ ջանքեր գործադրելու ավելի մեծ վարձատրություն ստանալու համար, այլև դրանով բարձրացնելու իր վարպետության աստիճանը՝ միևնույն ժամանակ հոգավոր իր մարզումների, սպորտի իրականների այցելելու ծախսերը: Բացի այդ՝ կան բազմաթիվ բնագավառներ, որոնցում առանց երեխաների ներգրավման պարզապես հնարավոր չէ որոշակի զաղափարների իրագործում: Նման ոլորտներում շատ չեն աշխատանքային պարտականությունները, ու դրանք պետք է սահմանվեն օրենքով և օրենքով, պետք է սահմանվեն նաև այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ չեն տա չարաշահելու երեխայի աշխատանքային իրավունքները:

Մեր ուսումնասիրությունը վկայում է, որ հոգեկան խանգարմամբ տառապող անձանց աշխատանքային իրավունքների պաշտպանությունն աշխատանքային իրավունքի տեսությունում սակավ ուշադրության է արժանացել, և վերջնական պատասխան տրված չէ այն հարցին, թե դատարանի կողմից անգործունակ չճանաչված, սակայն հոգեկան խանգարմամբ տառապող

անձինք արդյոք կարգապահական զանցանքի սուբյեկտ են, թե՞ ոչ, մինչդեռ նշված հարցն ունի թե՛ տեսական և թե՛ գործնական մեծ կարևորություն: Հաշվի առնելով աշխատանքային իրավունքի տեսության մեջ առկա բացը՝ մենք որոշեցինք անդրադառնալ նաև հոգեկան խանգարմամբ տառապող անձանց՝ կարգապահական զանցանքի սուբյեկտ համարելու հիմնախնդրին:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունում ուշադրություն է դարձվում հոգեկան խանգարմամբ տառապող անձանց իրավունքների պաշտպանության խնդրին: Այդ մասին է վկայում 2004 թվականի մայիսի 25-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքը «Հոգեբուժական օգնության մասին», սակայն մեծ բացթողում պետք է համարել այն հանգամանքը, որ դրանում բացարձակ անուշադրության են մատնվում հոգեկան խանգարմամբ տառապող անձանց աշխատանքի կիրառման առանձնահատկությունները, հատկապես երբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը չի կարգավորել նման հիվանդություններով տառապող անձանց աշխատանքի առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ ևս ամրագրված չեն կարգավորող հատուկ նորմեր հոգեկան հիվանդություններով տառապող անձանց աշխատանքին վերաբերող խնդիրները: Միայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ աշխատողը պետք է լինի գործունակ, այսինքն՝ աշխատանքային պայմանագիր չի կարող կնքվել այն անձի հետ, որը անգործունակ է:

Որպես հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավական նորմը՝ աշխատանքային օրենսդրության մաս կազմող բազմաթիվ օրենքներ չեն պարունակում այնպիսի իրավական նորմեր, որոնք հստակ ամրագրում են անգործունակ քաղաքացու

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հետ աշխատանքային պայմանագիր կնքելու արգելքը: Սակայն կան նաև այնպիսի օրենքներ, որոնցում հստակ նշվում է դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելու արգելքը, օրինակ՝ 2001 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (հոդված 12), 2005 թվականի հուլիսի 8-ին ընդունված «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (հոդված 14, մաս 4):

Այս ամենը նշանակում է, որ այն անձինք, որոնց դատարանը ճանաչել է անգործունակ, չեն կարող համարվել կարգապահական պատասխանատվության սուբյեկտ:

Իր գործողությունների սոցիալական նշանակությունը, գործած արարքի և վրա հասած հետևանքների միջև պատճառական կապը գիտակցելու (մտավոր չափանիշ) կամ սեփական գործողությունները ղեկավարելու (կամային չափանիշ) անձի անընդունակությունը կարող է լինել ոչ միայն անձի ոչ բավարար ֆիզիոլոգիական հասունության հետևանք, այլ նաև հոգեկան խանգարման կամ հիվանդության արդյունք: Նման իրավիճակը պատասխանատվությունը բացառող հանգամանք է: Այս առումով կասկածներ չկան, որ ոչ մի դատարան օրինական չի համարի դատարանի կողմից անգործունակ ճանաչված անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին գործատուի ընդունած իրավական ակտը, քանի որ անգործունակ ճանաչված անձի նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառման օրինականությունն ընդունելը նշանակում է իրավաբանական պատասխանատվության ընդհանուր սկզբունքների կոպիտ ոտնահարում: Սույն հոդվածի շրջանակներում մեզ հետաքրքրում է նաև այն հարցը, թե հնարավոր է արդյոք հոգեկան խանգարմամբ տառապող անձին են-

թարկել կարգապահական պատասխանատվության, եթե նա դատարանի վճռով դեռևս անգործունակ չի ճանաչվել:

Օրենսդրական նման կարգավորման պայմաններում, կարծում ենք, որ բոլոր այն աշխատողները, որոնք ունեն հոգեկան հիվանդություններ և աշխատում են աշխատանքային պայմանագրի հիման վրա, այլ աշխատողների հետ հավասար ենթակա են կարգապահական պատասխանատվության: Անշուշտ, հոգեկան խանգարմամբ տառապող անձի մեջ մշտական պարբերական աշխատանք կատարելու ունակությունն էականորեն տարբերվում է հոգեպես առողջ մարդու աշխատելու ունակությունից, սակայն որոշ հոգեկան հիվանդությունների դեպքում աշխատելու նրա ընդունակությունը լրիվ չի կորչում, դրա համար էլ նման անձը աշխատանքային իրավունքի ոլորտում, ընդհանուր կանոնի համաձայն, իրավասուլքելտ է և գործունակ, եթե դատարանի վճռով տվյալ անձն անգործունակ ճանաչված չէ: Առողջ մարդու համեմատ նման անձի մեջ փոքր է հնարավորությունների ծավալը: Այստեղ կարևոր է նշել այն հանգամանքը, որ իրավաբանական գրականության մեջ հենց հոգեկան հիվանդություններով տառապող անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունն է, որ որոշ գիտնականների հիմք է տվել խոսելու կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար միայն մեկ պարտադիր պայմանի առկայության մասին, այն է՝ տարիքային չափանիշը: Ըստ այդ հեղինակների՝ անձի կամային և ֆիզիկական չափանիշներից կախված է միայն աշխատանքային իրավասուլքելտության ծավալը՝ անձնական աշխատանքային իրավունքներ իրացնելու և պարտականություններ կրելու առումով:

Օրենսդրական հետագա կարգավորման ժամանակ հաշվի առնելու ակնկալիքով առաջարկում ենք հոգեկան խանգարմամբ տառապող անձանց կողմից կատարվող աշխատանքի կարգավորումն առանձնացնել աշխատանքային օրենսգրքի առանձին գլխում, որտեղ կսահմանվեն

տվյալ կատեգորիայի անձանց զբաղվածության ոլորտները, և գործատուին իրավունք վերապահվ սեփական նախաձեռնությամբ լուծելու աշխատանքային պայմանագիրը դատարանի վճռով անգործունակ չճանաչված, սակայն հոգեկան խանգարմամբ տառապող անձի հետ, եթե իհարկե վերջինս աշխատանքային կարգապահությունը պարբերաբար խախտելու կամ մեկանգամյա կոպիտ խախտում թույլ տալու հետևանքով վտանգ է ստեղծում կամ կարող է ստեղծել իր և /կամ/ այլ անձանց կյանքի և առողջության համար: Ընդ որում, նշված կատեգորիայի անձանց հետ աշխատանքային Պայմանագրի լուծելու համար գործատուն պետք է անպայման ստանա խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությունը: Բացի այդ՝ վերը նշված նորմատիվ իրավական ակտերում պետք է կարգավորել նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են հոգեկան

խանգարմամբ տառապող անձանց աշխատանքի ընդունելու, պարտադիր բժշկական զննություն անցնելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու, աշխատանքային պայմանագիրը լուծելու առանձնահատկությունները և այլն:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ կարգապահական պատասխանատվության սուբյեկտ կարող է լինել անձը, որն օժտված է աշխատանքային իրավասուբյեկտությամբ (ով իսկապես ունակ է ոչ միայն աշխատելու, այլ նաև ունենալու իրավաբանորեն ապահովված հնարավորություն ձեռք բերել, փոխել և դադարեցնել աշխատելու իր ունակության իրացման հետ կապված սուբյեկտիվ իրավունքները և պարտականությունները, որոնք կապված են օրենքով սահմանված տարիքի հասնելու հետ, ինչպես նաև՝ ով ունակ է կրելու իրավաբանական պատասխանատվություն):

¹ Ի դեպ, իրավաբանական գրականության մեջ աշխատանքային կարգապահությունը խախտելու մասին խոսելիս զուգահեռաբար քննարկվում է քաղաքացու և կազմակերպության միջև առկա աշխատանքային իրավահարաբերությունների մասին, մինչդեռ հարկ է նկատել, որ ֆիզիկական անձ գործատուները ևս, ըստ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության, պետք է ընդունեն ներքին կարգապահական կանոններ, քանի որ հենց դրանց ենթարկելու չափանիշը այն կարևոր բաղադրիչներից է, որոնց հիման վրա տարանջատվում են աշխատանքային և քաղաքացիաիրավական հարաբերությունները:

² Տե՛ս Драчук М.А. Субъекты трудового права: Автореф. дисс... канд. юрид. наук. Омск, 2002, էջ 9:

³ Տե՛ս Молодцов М.В., Головина С.Ю. Трудовое право России: Учебник для вузов. М.: Норма, 2004, էջ 71:

⁴ Տե՛ս Лушников А.М. Проблемы общей частей Российского трудового права: научное наследие, современное состояние и перспективы исследований: Автореф... докт. юрид. наук.М., 2004, էջ 27:

⁵ Տե՛ս Владимирова Ю.В. Значение возраста работника в трудовом праве России: Автореф. дисс... канд. юрид. наук. Пермь, 2002, էջ 8:

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, 257-րդ հոդված:

⁷ Տե՛ս C138 Minimum Age Convention, 1973:

⁸ Տե՛ս Федин В.В. Юридический статус работника как субъекта трудового права. Автореф. дисс... канд. юрид. наук. М., 2003, էջ 16:

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՍԲԻՆ

ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տիգրան ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի մագիստրանտ*

Վարկային պայմանագրի նախատիպ կարելի է համարել դեռևս հռոմեական իրավունքում հայտնի փոխառության պայմանագիրը (mutuum), որը եղել է ռեալ, միակողմ և անհատույց պայմանագիր: Վարկային պայմանագրի առաջացման պատճառն այն էր, որ փոխառության պայմանագրի միջոցով չէր ապահովվում գույքային շրջանառության մասնակիցների, այդ թվում՝ գործարարների՝ անհրաժեշտության դեպքում փոխառություն ստանալու անվերապահ հնարավորությունը, քանի որ փոխառության պայմանագրի շրջանակներում անհնար էր փոխատուին հարկադրել տրամադրելու գումարը: Այդ պատճառով էլ ֆինանսական շուկայում, որտեղ իրականացվում է «փողերի առևտուրը», անհրաժեշտություն էր զգացվում այլ՝ կոնսենսուալ բնույթի պայմանագրի, ինչպիսին վարկային պայմանագիրն է:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի³ (այսուհետև՝ Քաղ. օր.) 887 հոդվածի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացած գումարը և տոկոսներ վճարել (1-ին կետ): Վերոհիշյալ նորմից հետևում է, որ վարկային պայմանագիրը, ի տարբերություն փոխառության պայմանագրի, կոնսենսուալ, երկկողմանի և հատուցելի պայմանագիր է:

Այն կոնսենսուալ է, որովհետև համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ, որպիսիք են՝ տոկոսները, այլ բանկային ծառայությունների արժեքը, կողմերի գույքային պատասխանատվությունը պայմանագրի խախտման դեպքում պայմանագրի դադարման (միակողմանի լուծման) կարգը և այլն: Հետևաբար, վարկային պայմանագրի կնքման պահից վարկառուն վարկատուի նկատմամբ վարկը տրամադրվել հարկադրելու իրավունք է ստանում:

Այդուհանդերձ, վարկային պայմանագրի կոնսենսուալ բնույթն ունի որոշակի առանձնահատկություններ, քանի որ Քաղ. օր.-ում նախատեսվում է պայմանագիրը կատարելուց միակողմանի հրաժարվելու կողմերի իրավունքը: Մասնավորապես, վարկատուն իրավունք ունի լրիվ կամ մասամբ հրաժարվել վարկային պայմանագրով նախատեսված վարկը վարկառուին տրամադրելուց այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք ակնհայտ վկայում են, որ վարկառուին տրամադրված գումարը ժամկետին չի վերադարձվի: Վարկառուն էլ, իր հերթին, իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկն ստանալուց՝ այդ մասին մինչև պայմանագրով սահմանված վարկ տրամադրելու ժամկետը ծանուցելով վարկատուին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ վարկային պայմանագրով (Քաղ. օր. 889 հոդված):

Բացի այդ, չնայած այն հանգամանքին, որ Քաղ. օր. 887 հոդվածի համաձայն վարկային պայմանագիրը կրում է կոնսենսուալ բնույթ՝ գործնականում երբեմն կնքվում են պայմանագրեր, որոնք ուժի մեջ են մտնում

դրամական միջոցների փոխանցման պահից: Նրանց իրավաբանական էությունը մասնագիտական գրականության մեջ տարբեր մեկնաբանություններ է ստանում: Ենթադրվում է, որ նման պայմանագրերը հանդիսանում են վարկային պայմանագրի առանձին տեսակներ, որոնց կնքումը թեև ուղղակիորեն նախատեսված չէ օրենքով, բայց և արգելված չէ⁶: Կարծում ենք՝ նման պայմանագրերը վարկային պայմանագրի տեսակ որակելը չի համապատասխանում վարկային պայմանագրի կոնսենսուալ բնույթին, քանի որ դրամական միջոցների փոխանցման պահից կնքված համարվելը բնութագրական է փոխառության պայմանագրին, եթե նույնիսկ փոխատուի կողմում հանդես է գալիս բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը: Ասվածի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ «Վարկային կազմակերպությունների մասին»⁶ ՀՀ օրենքի 8 հոդվածի համաձայն փոխառություն տրամադրելը հանդիսանում է վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող ֆինանսական գործառնություններից մեկը, իսկ «Բանկերի և բանկային գործունեության մասին»⁷ ՀՀ օրենքի 34 հոդվածը հնարավորություն է տալիս բանկերին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի թույլտվության հիման վրա իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում ուղղակիորեն չնախատեսված գործառնություններ, այդ թվում՝ տրամադրել փոխառություններ:

Վարկային պայմանագրի կոնսենսուալ էությունից էլ բխում է նրա երկկողմանի բնույթը⁸: Վարկային պայմանագիրը երկկողմանի է, քանի որ երկու կողմերն էլ ունեն և՛ իրավունքներ, և՛ պարտականություններ: Սասնավորապես, վարկատուն վարկային պայմանագրով ստանձնում է վարկառուին դրամական միջոցներ տրամադրելու պարտականություն, ինչպես նաև ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու վերադարձնել այդ դրամական միջոցները պայմանագրով նախատեսված ժամ-

կետը լրանալիս և տոկոսներ վճարել դրանցից: Վարկառուն էլ, իր հերթին, ձեռք է բերում իրավունք պահանջելու իրեն հանձնել պայմանագրով նախատեսված միջոցները և ստանձնում է վարկատուին տոկոսներ վճարելու և պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ստացված միջոցները վերադարձնելու պարտականություն:

Վարկային պայմանագիրը հատուցելի պայմանագիր է: Վարկային պայմանագրի հատուցելի բնույթն արտահայտվում է նրանում, որ վարկառուն պարտավոր է վարկի օգտագործման դիմաց վճարել տոկոսներ: Դրամական միջոցները օգտագործելու համար տոկոսները հաշվարկվում են ոչ թե վարկային պայմանագրի կնքման պահից, այլ դրամական միջոցները փաստացի ստանալու պահից: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տոկոսները վարկի օգտագործման համար վճարվում են դրամական միջոցների ռեալ օգտագործման ժամանակահատվածի համար⁹: Տոկոսները պետք է սահմանվեն վարկային պայմանագրով Քաղ. օր. 879 հոդվածի 1-ին կետի պահանջի պահպանմամբ, ընդ որում, ելնելով պայմանագրի պայմանները միակողմանի փոփոխելու անթույլատրելիությունից, ֆինանսական անկայունության և հիպերինֆլյացիայի պայմաններում վարկային պայմանագրում պետք է հստակ նախատեսվեն նաև տոկոսների հաշվարկային դրույքի փոփոխման և վարկի դիմաց վճարման պարբերականության վերանայման հիմքերը¹⁰: Որպես այդպիսի հիմք կարելի է դիտարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորման դրույքի բարձրացումը: Վարկային պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վարկատուն իրավունք է ստանում միակողմանի փոփոխել վարկային պայմանագիրը, ինչը համապատասխանում է Քաղ. օր. 466 հոդվածի 1-ին կետի պահանջներին:

Պետք է նշել, որ իրավաբանական գրականության մեջ չկա միասնական մոտե-

ՈՒՍԱԼՈՂԻ ԱՍԲԻՈՆ

ցում, թե արդյոք վարկային պայմանագիրը կարելի է դիտարկել որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագիր: Նշված հարցի պարզաբանման նպատակով ընդունված է այն համեմատել փոխառության պայմանագրի հետ: Ուսումնասիրությունների արդյունքում հեղինակների մի մասը (Ռ. Ի. Կարիմովիչը, Ե. Ա. Ֆլեյշիցը և այլք) վարկային պայմանագիրը որակում են որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակ, իսկ մյուսները (Ե.Ա. Պավլոդսկին, Ս. Կ. Սոլովիինը և այլք)՝ որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագիր¹¹:

Այսպես, ըստ Ռ. Ի. Կարիմովիչի. «Փոխառության և վարկային պայմանագրերը ունեն առնվազն երեք ընդհանուր հատկանիշներ՝ պայմանագրի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը մյուս կողմին, փոխառուի պարտականությունը՝ վերադարձնել ստացած կապիտալը, և կողմերի միջև հարաբերությունների տևական բնույթը: Միևնույն ժամանակ, փոխառության պայմանագիրը ունի ավելի լայն սուբյեկտային (փոխատուի կողմում կարող են հանդես գալ ոչ միայն վարկային կազմակերպությունները) և առարկայական (փոխառության պայմանագրի առարկա կարող են լինել ոչ միայն դրամական միջոցները) կազմ, ինչպես նաև պարտադիր չէ դրանում վարձատրության վերաբերյալ պայմանի նախատեսումը: Վերոգրյալից հետևում է, որ ռուսական քաղաքացիական իրավունքը վարկային պայմանագիրը դիտարկում է որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակ»¹²:

Իսկ Ե. Ա. Սոլովիինը նշում է, որ վարկային պայմանագիրը և՛ սուբյեկտային կազմի, և՛ առարկայի առումով ունի կիրառման ավելի մեղ ոլորտ՝ ի տարբերություն փոխառության պայմանագրի: Այս հիմնավորմամբ նա համզում է այն եզրակացության, որ վարկային պայմանագիրը փոխա-

ռության պայմանագրի հատուկ, ինքնուրույն տարատեսակ է¹³: Վերոշարադրյալ տեսակետի պաշտպանությամբ է հանդես եկել նաև Ե.Ա. Ֆլեյշիցը: Ըստ նրա՝ վարկային և փոխառության պայմանագրերը ունեն մեկ ընդհանրություն. երկուսի դեպքում էլ փոխառուն պարտավոր է վերադարձնել իրեն տրամադրված դրամական միջոցները¹⁴:

Քիչ չեն նաև այն տեսակետի կողմնակիցները, ըստ որոնց՝ վարկային պայմանագիրը ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագիր է: Այսպես, Ե. Ա. Պավլոդսկին փոխառության և վարկային պայմանագրերի վերաբերյալ գրում է. «Քաղաքացիական օրենսդրությանը հայտնի են երկու ինքնուրույն պայմանագրեր՝ փոխառության և վարկային: Նշված պայմանագրերի տարբերությունը նախ և առաջ այն է, որ վարկային պայմանագրով վարկատու կարող են լինել բանկերը և այլ վարկային կազմակերպություններ: Ի տարբերություն փոխառության պայմանագրի՝ վարկային պայմանագրի առարկա կարող են լինել միայն դրամական միջոցները: Ի վերջո, վարկային պայմանագիրը կոնսենսուալ պայմանագիր է»¹⁵: Վարկային պայմանագիրը որպես ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագիր է դիտարկում նաև Ս. Կ. Սոլովիինը, որը մասնավորապես նշում է. «Վարկային պայմանագիրը հնարավոր կլիներ որակել որպես փոխառության հատուկ տարատեսակ, եթե դա բխեր օրենքի բովանդակությունից: Ջարմանալի է, սակայն օրենսդիրը այդ մասին որևէ նշում չի արել համապատասխան գլուխներում: Բացի այդ՝ դժվար է պատկերացնել, որ ռեալ պայմանագրի (փոխառության պայմանագիր) տեսակը կարող է լինել կոնսենսուալ պայմանագիր (վարկային պայմանագիր): Չետևաբար, կարելի է եզրակացնել, որ տարբեր կառուցակարգեր (ռեալ և կոնսենսուալ) ունեցող պայմանագրերը չեն կարող հանդիսանալ մեկը մյուսի տարատեսակ»¹⁶:

Մեր կարծիքով, վարկային պայմանա-

գիրը փոխառության պայմանագրի հատուկ տեսակ է և հարաբերակցվում է վերջինիս, ինչպես տեսակը սեռին: Այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկու պայմանագրերի դեպքում էլ ծագում է փոխատուի պարտականությունը՝ պայմանագրով նախատեսված ժամկետում վերադարձնելու ստացած դրամական միջոցները: Իսկ տեսակի և սեռի միջև եղած կապերը ենթադրում են, որ տեսակը, ունենալով սեռին վերաբերող բոլոր հատկանիշները, միաժամանակ ունի որոշ առանձնահատուկ գծեր, որոնք էլ թույլ են տալիս այն առանձնացնել որպես սեռի առանձին տեսակ: Որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակ՝ վարկային պայմանագիրն ունի հետևյալ չորս առանձնահատկությունները.

1. վարկային պայմանագիրը, ի տարբերություն փոխառության պայմանագրի, կրում է կոնսենսուալ բնույթ,

2. մյուսը դրսևորվում է վարկային պայմանագրի սուբյեկտային կազմի առումով: Մասնավորապես, վարկային պայմանագրով որպես վարկատու կարող է հանդես գալ միայն բանկը կամ այլ վարկային կազմակերպություն: Հետևաբար, այն դեպքում, երբ որոշակի դրամական միջոցներ հանձնելու պարտականություն նախատեսող պայմանագրով որպես վարկատու հանդես է գալիս բանկ կամ այլ վարկային կազմակերպություն չհանդիսացող կազմակերպությունը, ապա նման պայմանագիրը չի կարող որակվել որպես վարկային: Այդ պայմանագիրը, ըստ էության, փոխառության պայմանագիր է, որը տվյալ դեպքում կնքված կհամարվի դրամական միջոցների փոխանցման պահից,

3. վարկային պայմանագրի առարկա կարող են լինել միայն դրամական միջոցները, բայց ոչ երբեք տեսակային հատկանիշներով որոշվող իրերը՝ ի տարբերություն փոխառության պայմանագրի,

4. վարկային պայմանագիրը միշտ կրում է հատուցելի բնույթ, այսինքն՝ վարկառուն ստացած դրամական միջոցները

օգտագործելու համար պարտավոր է վճարել համապատասխան գումարի համար հաշվարկած տոկոսներ:

Ընդ որում, վերջին երկու հատկանիշները առանձին չեն հանդիսանում վարկային պայմանագրի առանձնացման հիմք, քանի որ դրանք բնութագրական են դրամական միջոցների ցանկացած հատուցելի փոխառության պայմանագրի: Կարելի է ասել, որ դրանք լրացնում են վարկային պայմանագրի ընդհանուր բնութագիրը¹⁷:

Կարծում ենք՝ այն տեսակետի օգտին, որ վարկային պայմանագիրը փոխառության հատուկ տեսակ է, խոսում է նաև Քաղ. օր.-ի 887 հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն. «վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով»: Այսպիսով, Քաղ. օր.-ի փոխառության պայմանագրի մասին բոլոր կանոնները՝ փոխառության փոխառության գումարը վերադարձնելու պարտականության, փոխառուի կողմից փոխառության պայմանագրի պայմանները խախտելու հետևանքների, փոխառության նպատակային բնույթի վերաբերյալ, ուղղակիորեն կիրառվում են վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ, քանի որ օրենքից և վարկային պայմանագրի էությունից այլ բան չի բխում¹⁸:

Ուշադրության է արժանի վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ փոխառության պայմանագրի մասին կանոնների կիրառման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանի դիրքորոշումը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետև՝ նաև ՀՀ վճռաբեկ դատարան), քննելով «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի եղեգնաձորի մասնաճյուղի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դա-

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՍԲԻՈՆ

տարանի 16.12.2008թ որոշման դեմ, եզրահանգել է. «Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոխառությանը վերաբերող 46 գլխում նախատեսված կանոնները չեն կիրառվում, եթե կողմերը այլ կանոններ են սահմանել վարկային պայմանագրով, և որոնք չեն հակասում վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին: Ընդ որում օրենսդիրը, ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածներում ամրագրված պայմանագրի ազատության սկզբունքից, կողմերին հնարավորություն է տալիս պայմանները որոշել իրենց հայեցողությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկին վերաբերող 47-րդ գլխի իմպերատիվ նորմերով»¹⁹: Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը, անտեսելով Քաղ. օր.-ի 881 հոդվածի 1-ին կետի պահանջը, նշված գործով իրավաչափ է համարել վարկային պայմանագրով նախատեսված ժամկետանց վարկի նկատմամբ սահմանված տարեկան 28% տոկոսադրույքի և ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ յուրաքանչյուր օրվա համար սահմանված 0.2% չափով տույժի վերաբերյալ պայմանները:

Մեր կարծիքով, նշված որոշմամբ չի ապահովվում օրենքի ճիշտ մեկնաբանությունը հետևյալ պատճառաբանությամբ.

Քաղ. օր.-ի 9 հոդվածի 1-ին պարբերության համաձայն. «Քաղաքացիական իրավական նորմերը պետք է մեկնաբանվեն դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ»:

Քաղ. օր.-ի 887 հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46 գլխում նա-

խատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով»:

«Իրավական ակտերի մասին»²⁰ ՀՀ օրենքի 45 հոդվածի 10-րդ մասի համաձայն. «Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը...»:

Վերոհիշյալ նորմերի համադրումից հետևում է, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ Քաղ. օր.-ի փոխառությանը վերաբերող 46 գլխում նախատեսված կանոնները չեն կիրառվում միայն այն դեպքում, եթե այլ բան է նախատեսված Քաղ. օր.-ի 47 գլխի կանոններով և վարկային պայմանագրով: Ընդ որում, այս երկու պայմանների միաժամանակյա առկայությունը պարտադիր է Քաղ. օր.-ի փոխառությանը վերաբերող 46 գլխում նախատեսված կանոնները չկիրառելու համար: Սինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանը, մեր հանդգնամբ, սխալ մեկնաբանելով Քաղ. օր.-ի 887 հոդվածի 2-րդ կետը, փոխառության պայմանագրի վերաբերյալ կանոնների կիրառումը բացառելու համար բավարար է համարել միայն վարկային հարաբերությունները կարգավորող նորմերի պահանջներին չհակասող այլ կանոններ նախատեսող վարկային պայմանագրի:

ՀՀ վճռաբեկ դատարանի նման դիրքորոշման պայմաններում, եթե այլ բան նախատեսված չլինի վարկային պայմանագրով, գործնականում բացառվում է վարկային պայմանագրի՝ որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակի, կարգավորման նպատակով փոխառության պայ-

մանագրի վերաբերյալ կանոնների կիրառումը: Քաջի այդ՝ Քաղ. օր.-ի 887 հոդվածի 2-րդ կետի այդպիսի մեկնաբանությունը լայն հնարավորություն է ընձեռում բանկերին և այլ վարկային կազմակերպություններին՝ շրջանցելու Քաղ. օր.-ի 879, 881 հոդվածներով նախատեսված սահմանափակումները: Հետևաբար գտնում ենք, որ ճիշտ իրավակիրառ պրակտիկա ձևավորե-

լու նպատակով անհրաժեշտ է վարկային պայմանագիրը դիտարկել որպես փոխառության պայմանագրի հատուկ տեսակ, որի կարգավորման նպատակով սուբսիդիար կարգով կիրառման ենթակա են փոխառության պայմանագրի մասին կանոնները՝ Քաղ. օր.-ի 887 հոդվածի 2-րդ կետի պահանջների պահպանման պայմանով:

¹ Տե՛ս *Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна*. Римское право (базовый учебник). Перевод с македонского д. ю. н. проф. *В. А. Томсинова* и *Ю. В. Филиппова* /Под ред. проф. *В. А. Томсинова*. — М.: Изд-во “ЗЕРЦАЛО”, 1999, էջեր 246-247:

² Տե՛ս *Гражданское право: Учебник в 4 т. Том 4: Обязательственное право / [Витрянский В. В. и др.];* отв. ред. — *Е. А. Суханов*. 3-е изд., перераб. и доп. — М., Изд-во “Волтерс Клувер”, 2006, էջ 413:

³ Տե՛ս ՀՀՊՏ 10.08.98./17(50), 05.05.1998:

⁴ Տե՛ս *Олейник О. М.* Основы банковского права: Курс лекций. — М.: Изд-во “Юристь”, 1997, էջ 321:

⁵ Տե՛ս *Гражданское право: Учебник в 3 т. Т. 2 / Е. Н. Абрамова, Н. Н. Аверченко, К. М. Арсланов [и др.];* под. ред. *А. П. Сергеева*. — М.: Изд-во “РГ-Пресс”, 2009, էջեր 586-587:

⁶ Տե՛ս *ՃԾձԻ 03.07.02./23 (198), 29.05.2002:*

⁷ Տե՛ս ՀՀԱԺՏ 1996/12, 30.06.1996:

⁸ Տե՛ս *Гражданское право. Учебник. Часть II /* Под ред. *А. П. Сергеева, Ю. К. Толстого*. — М.: Изд-во “ПРОСПЕКТ”, 1999, էջ 435:

⁹ Տե՛ս *Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации части второй (постатейный)*. Изд. 5-е испр. и доп. с использованием судебно-арбитражной практики /Рук. авт. кол. и отв. ред. д-р юрид. наук, профессор *О. Н. Садиков*. — М. Изд-во “ИНФРА-М”, 2008, էջեր 467-468:

¹⁰ Տե՛ս *Банковское право: учебник для вузов / Н. Д. Эриашвили*. — 5-е изд., перераб. и доп. — М., Изд-во “ЮНИТИ-ДАНА”, 2007, էջ 202:

¹¹ Տե՛ս *Витрянский В. В.* Договор займа: общие положения и отдельные виды догово-

ра. — М.: Изд-во “Статут”, 2004, էջ 252:

¹² *Брагинский М. И., Витрянский В. В.* Договорное право. Книга пятая. В двух томах. Том 1: Договоры о займе, банковском кредите и факторинге. Договоры, направленные на создание коллективных образований. — М.: Изд-во “Статут”, 2006, էջ 338:

¹³ Տե՛ս *Гражданское право: Учебник в 4 т. Том 4: Обязательственное право / [Витрянский В. В. и др.];* отв. ред. — *Е. А. Суханов*. 3-е изд., перераб. и доп. — М., Изд-во “Волтерс Клувер”, 2006, էջեր 413-414:

¹⁴ Տե՛ս *Ефимова Л. Г.* Банковское право. Учебное и практическое пособие. — М.: Изд-во “БЕК”, 1994, էջ 180:

¹⁵ *Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации части второй (постатейный)*. Изд. 5-е испр. и доп. с использованием судебно-арбитражной практики /Рук. авт. кол. и отв. ред. д-р юрид. наук, профессор *О. Н. Садиков*. — М. Изд-во “ИНФРА-М”, 2008, էջ 459:

¹⁶ Տե՛ս *Соломин С. К.* Банковский кредит. Проблемы теории и практики. Чита, Изд-во “Юстицинформ”, 2009, էջեր 105-106:

¹⁷ Տե՛ս *Витрянский В. В.* Договор займа: общие положения и отдельные виды договора. — М.: Изд-во “Статут”, 2004, էջեր 251-252:

¹⁸ Տե՛ս *Ս. Փ. Սեդրյան*. Վարկային և հաշվարկային հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորումը, Երևան, 2000, էջեր 25-26:

¹⁹ Քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 24.17.2009թ. քիվ ԱՎԴ/4/0145/02/08 որոշումը:

²⁰ Տե՛ս ՀՀՊՏ 21.05.02./15(190), 03.04.2002:

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆՔ
